ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ

ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՐԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԸ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ – 2008

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն. Ս. Օ. Տ. Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ
Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի
Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան Թեմի



Առաջին գիրքս

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

ԱՐԺ. Տ. ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔՀՆՅ. ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

Սիրելի եւ Արժանապատիւ Տէր Հայր,

Ինչքան հոգենորոգ երեւոյթ է, երբ Աստուծոյ սպասաւորները իրենց հովուական ծառայական կեանքին առընթեր լոյս հրապարակ են ընծայում նաեւ հոգեւոր գրականութեան նշխարներ, որոնք դրսեւորում են նաեւ իրենց ներքին զգացումներն ու կեանքի փորձը։

Անցնող երեսուն տարիներու ընթացքին մենք Ձեզ մօտիկէն ճանչնալու պատեհութիւնը ունեցանք եւ հաստատապէս կարող ենք վկայել, որ Դուք բարի ծառայութեամբ փառաւորեցիք եւ կը շարունակէք փառաւորել Աստուծոյ անունը։

Ջերմեռանդ սրտով կը շնորհաւորենք Ձեզ «Տիրոջ Խորանը» քարոզգրքի լոյս ընծայման առիթով, որն ընթերցողին էութիւնը կը թթխմորէ Քրիստոսի սիրով ու Սբ. Էջմիածնի լոյս հաւատքով։

Մնամք Սիրոյ Ողջունիւ,
Աղօթարար՝

ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Առաջնորդ

Պըրպէնք, Մարտ 20, 2006

Իրենց Ամուսնու, Հոր, Կեսրարի և Պապիկի՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ հիշատակին

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի։ Ամէն։

ՔԱՐՈԶԳՐՔԻՍ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ

Անժիկ, Մկրտիչ, Վարդան Հակոբյանները և

Ոսկեհատ Սիմոնյանը

ՄԱՅՐՍ՝ ԱՆԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ ԵՎ ԵՍ

«ԻՐԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԸ»
ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Չոբանյանի

Copyright @ 2007

By Archpriest Fr. Hovsep Hagopian

All right are reserved.
First edition – 2007
Printed in Armenia-Yerevan
For information and address
Archpriest Fr. Hovsep Hagopian
1620 N. San Fernando Blvd. # 15
Burbank, CA 91504, USA
e-mail: frhovsepfaith@hotmail.com

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի սիրելի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում Լոս Անջելոսում հրատարակած առաջին Քարոզգրքիս *(«Տիրոջ Խորանը»)* քարոզները։

Նախ աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար։

Գրքի պատրաստության համար քաջալերանք ստացա Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանից, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Առաջնորդ Սրբազան Հորը և միշտ աղոթող եմ իր քաջառողջության ու եկեղեցանվեր գործոց հաջողության համար։ Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման գործում իր կարևոր լուման ունի Առաջնորդարանիս աշատակից, ինձ շատ սիրելի Հայկ Մաղոյանը. որին նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը։

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը։ Եթե մի կաթիլ իսկ հաջողեմ իմ այս առաքելության մեջ դա կլինի իմ վարձը։ Աղոթեցեք ինձ համար։

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյան

Հոկտեմբեր 2007
Բրբենկ. Կալիֆորնիա, ԱՄՆ

ԱՄՈՒՐ ԺԱՅՌԸ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Անձրևները թափվեցին, և գետերը հորդեցին, հողմերը փչեցին և զարկեցին այդ տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված» (Մատթ. 7:24-27)

Որևէ հավատացյալ կարող է հարցնել, թե՝ *«Ինչո՞ւ հատկապես այս բնաբանը ընտրեցի»:* Ավելի քան երեսուն տարի է, որ ծառայում եմ Հայց. Առաքելական Եկեղեցուն ու ինձ միշտ հետաքրքրել է այն հարցը, թե մեր ժողովուրդը հասկացե՞լ է, կամ պիտի հասկանա՞ն և կամ պիտի կարողանան հասկանալ, թե՝ *«Ի՞նչ է իրենից ներկայացնում Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ եկեղեցին, թե ի՞նչ է եղել նրա դերը մեր պատմության մեջ և կամ թե՝ ի՞նչ է նրա խորհուրդը այսօր»:*

Սակայն մինչև այս հարցին պատասխանելը ուզում եմ անդրադառնալ, թե մեր Տերը Լերան քարոզի վերջավորության ինչո՞ւ հատկապես արտասանեց իմ ընտրած բնաբանի այս խոսքերը:

Երկու հիմնական պատճառներով.

Առաջինը՝ Նա գիտեր, որ Իրեն լսողների մեջ կարող են լինել մարդիկ, որոնք պարզապես եկել էին լսելու համար: Այդ պատճառով ուզեց հանդիմանել նրանց իրենց անհոգության համար, նմանեցնելով այն հիմար մարդուն, որն իր տունը կառուցում է ավազի վրա. *«Ով որ լսում է իմ այս խոսքերը և դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրևները*

թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ, և նրա կործանումը մեծ եղավ» (Մատթ. 7:24-27):

Երկրորդ, Իրեն լսողներին ու Իր քարոզած ճշմարտությունները գործադրողներին ուզեց ցույց տալ իրական և հավիտենական ճանապարհը, նրանց նմանեցնելով այն իմաստուն մարդուն, որն իր տունը կառուցում է անխորտակելի ժայռի վրա. *«Ով որ լսում է իմ այս խոսքերը և կատարում է դրանք, կնմանվի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա, անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված» (Մատթ. 7:24-27):*

Աստծու խոսքերը ոչ միայն պետք է լսել, այլ որ կարևոր է դրանք պետք է գործադրել, քանի որ երկուսն էլ իրար հետ կապված իրականություններ են: Հիսուս ասում է. *«Մանավանդ երանի է նրանց, որ լսում են Աստծու խոսքը և կպահեն» (Ղուկ. 11:28):*

«Ես հայ քրիստոնյա եմ» ասելը բավարար չէ, եթե մեր սիրտը լցված չէ Աստծու սիրով ու մենք չենք փորձում Նրա կամքը կատարել:

Ուրեմն, նա ով որ միայն արտաքնապես անունով է քրիստոնյա, պարզապես ցույց տալու համար, դժբախտաբար ինքն իրեն է խաբում:

Իմաստուն մարդը նա է, որ իր գործը սկսելուց առաջ մտածում է նրա հետևանքների մասին: Չափում է, ձևում, թե այն որքանո՞վ շահութաբեր է, ստուգելուց հետո, երբ տեսնում է, թե պիտի կարողանա այդ գործից գլուխ հանել, այն ժամանակ է միայն ձեռնարկում դրան: Հիսուս ասում է. *«Զեզնից*

ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել, նախ նստելով չի հաշվի ծախսերը, թե ավարտելու համար բավական դրամ ունի՞» (Ղուկ. 14:28-29): Ուրեմն իմաստուն մարդը նա է, որ նախ ամեն ինչ պատրաստում է ու հետո է գործի անցնում և ոչ միայն սկսում է, այլև նախաղգուշական միջոցներ է ձեռք անում գալիք պատահարների ու դժվարությունների դեմ: Այդպես էլ հոգևոր կյանքում. Իմաստուն հավատացյալը նա է, որն իր կյանքը, հավատքն ու հույսը հաստատում է Աստծու վրա, առանց վախենալու ապագա դժվարություններից ու զոհաբերություններ կատարելով, շատ լավ հասկանում է, որ պիտի շահի հավիտենական կյանքի բոլոր բարիքները:

Առաքյալները ենթարկվեցին ամեն ձևի զրկանքների և չարչարանքների, բայց ոչ մի րոպե չթուլացան ու չհեռացան իրենց հավատքից: Նրանք ցուց տվեցին, որ իրենց հավատքը հաստատված է անխորտակելի մի ժայռի վրա, որին դիպչելով փշրվեցին աշխարհի բոլոր տեսակի փոթորիկները:

«Իգնատիոս Անտիոքացի Հայրապետը ձերբակալված էր և դատապարտված կրկեսի մեջ առյուծների առջև նետվելու՝ իր քրիստոնյա լինելու համար: Վերջին երեկոյան, նրա բարեկամներից շատերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի նրան բանտից փախցնեն, բայց Հայրապետը մերժում է, ասելով.

«Ես չպիտի վախենամ ու բանտից փախչեմ:Աստված այնպես է տնօրինել, որ վաղը ես գազանների համար կեր դառնամ: Ես նմանվում եմ այն ցորենին, որ ջաղացի քարերի միջև փշրվում է, որպեսզի հաց դառնա և ուրիշներին սնունդ լինի:

Վաղը ես էլ պետք է գազանների բերանում փշրվեմ, որ հավատքի հաց դառնամ և բաժանվեմ մարդկանց, որպեսզի նրանց հավատքը ուժեղանա»:

Սրանք նահատակվող Հայրապետի վերջին խոսքերն էին:

Իրապես էլ, հաջորդ օրը, երբ գազանները կրկեսում հարձակվում են նրա վրա և բզկտում, ժողովուրդը տեսնում է նրա քաջությունն ու վեհ կեցվածքը: Ասում են, թե այդ պահին Հայրապետը ծնկի եկած աղոթելիս է եղել: Շատ անաստվածներ ազդվել են այդ տեսարանից ու իրենք էլ քրիստոնյա մկրտվել»:

Քսանմեկերորդ դարում ենք ապրում և մեր շուրջը կան բազում հրապուրիչ ուժեր՝ դրամ, վայելք, հանգիստ կյանքի պայմաններ: Ապրում ենք մի աշխարհում, ուր մարդիկ և պետություններ դժբախտաբար իրար միս են ուտում, ուր գիտությունն առաջ է ընթանում սրընթաց կերպով և ուր մարդիկ ծուռ աչքերով են նայում մեկը մյուսին: Մեռնում են թագավորություններ, ծնվում են նոր պետություններ և այս արևի տակ ամեն օր, ամեն ժամ ու ամեն րոպե մի բան փոխվում է, նույնիսկ մարդը, որն Աստծու կատարյալ ստեղծագործությունն է, նա էլ է փոխվում:

Միակ բանը, որը մնում է հաստատ, անխախտ ու անփոփոխ, դա մեր քրիստոնեական հավատքն է:

Հայ Եկեղեցին միակ վայրն է, ուր հոգիները կարող են թարմանալ: Օտարները կարիք չունեն եկեղեցու շաղախին իրենց դիմագիծը պահելու համար, բայց վայ այն հայ քրիստոնյային ու հայ երի-

տասարդին, որը կհեռանա ու կմոռանա իր դարավոր Եկեղեցու ճանապարհը։

Օտար մի աստվածաբանի՝ Պերտրանդ Պարեզի կարծիքը. *«Ես հաճախ և շատ հստակ տպավորություն եմ ունեցել, որ հայը, եթե դադարի անգամ հավատալուց, չի դադարի հավատացյալ լինելուց։ Նա ներքնապես կզգա, որ եթե իր Եկեղեցու նշանակությունը վերցվի, իր բոլոր զգացմունքների շենքը կփլվի»։*

«Անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված»։

Երեկ դու հայ քրիստոնյա էիր, այսօր շարունակո՞ւմ ես ապրել հայ քրիստոնյայի կյանքով։ Ապագայում եկող սերունդներ շարունակեք ապրել հայ քրիստոնյայի կյանքով։ Եվ թող մեր Հայրապետների հավատքից մի կաթիլ, նրանց հայրենասիրությունից մի կայծ իջնի ձեր հոգիների մեջ, մաքրի ու լվա, բյուրեղացնի ու գեղեցկացնի, ավելի հայացնի, ավելի քրիստոնեացնի՝ չօտարանալու և չկորչելու համար. ուստի չձուլվելու համար ամուր կառչած մնանք մեր Մայր և Սուրբ Եկեղեցու տեսիլքին ու Խորանին։

Կալիֆորնիայում և Ամերիկայի այլ նահանգներում անձրևախառն ու ձյունախառն փոթորիկներ եղան։ Բոլորս էլ տեսանք, թե ինչպես անձրևները հեղեղի վերածվելով շատ միլիոնանոց տների տակից սրբեցին տարան հողը և դրանք փուլ եկան, որովհետև նրանց հիմքը հաստատված էր ավազի վրա։

Մեր հեռատես ու խելացի Հայրերը Հիսուսի ճշմարիտ խոսքերին հետևելով, նմանվեցին իմաստուն մարդուն և Հայց. Առաքելական Եկեղեցին հաստատեցին ամուր ժայռի վրա։ Փառք աւ պատիվ նրանց։

Հիշենք Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի խոսքը.

«Այսօր էլ նույն պատերազմը ունինք, ոչ զենքի, ոչ հալածանքի դեմ ծառանալու, այլ մի ուրիշ ահավոր թշնամու, որ անտարբերության հոգի է կոչվում դեպի ազգային ժառանգությունները, երկպառակության համառ հոգի, որ սպառնում է երկրորդականը կարևորից և սխալն ու ճշմարիտը իրարից զանազանելու կարողության։ Մեզ վիճակված է մի ծանր դրություն, որ սփյուռքի հայության մահ է սպառնում ցրված բազմաթիվ ազգերի ու պետությունների մեջ և մոռանում ենք, թե մեզ հավաքող ու միացնող մի հաստատություն ունինք, որի պաշտպանության համար ծառացել էին Վարդանանք և այդ՝ Հայաստանյայց եկեղեցին է իր քրիստոնեական և ազգային բովանդակությամբ» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց «Դեպի Լույս և Կյանք», Գանձասար մատենաշար, Երևան 1994)։ Ամեն։

ՄԵԾ ԽՆՋՈՒՅՔԸ

«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի» (Ղուկաս 14:24):

Հիսուսի այս խոսքը Ղուկաս Ավետարանչի 14-րդ գլխի 16-24 համարներից է, ուր Նա պատմում է մի առակ ճաշկերույթի հրավիրող տանտիրոջ մասին:

«Մի ազնվական մարդ ընթրիք է պատրաստում և իր բարեկամներին ու ընկերներին հրավիրում ներկա լինելու այդ ճաշկերույթին: Երբ ժամանակը գալիս է, նա իր ծառայի միջոցով նրանց լուր է ուղարկում, որ գան: Սակայն ամեն մեկը մի պատճառաբանությամբ հրաժարվում է ճաշկերույթին ներկա գտնվելուց: *«Ագարակ գնեցի, և պետք է, որ գնամ. . . »: «Հինգ լուծ եզներ գնեցի, գնում եմ դրանք փորձելու»* և այլն: Այն ժամանակ ազնվականը բարկանում է և իր ծառային հրամայում, *«Դուրս եկ ճանապարհներն ու ցանկապատերի առաջ և մարդկանց այստեղ մտցրու, որպեսզի տունս լցվի: «Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի» (Ղուկաս 14:16-24):*

Ճաշկերույթը ներկայացնում է Աստծու թագավորությունը, որը մարդիկ կարող են վայելել, երբ կմասնակցեն դրան: Հիսուս աշխարհ եկավ և առաջին առիթով հրավիրեց Աստծու ընտրյալ ժողովրդին մաս կազմելու Աստծու Թագավորության, սակայն Նրա հրավերը չընդունվեց:

Առակի պատմածի նման Աստված մեզ ամեն կիրակի եկեղեցի է հրավիրում: Նրանք, որոնք գալիս են, պատրաստ թե անպատրաստ, նպատակ ունեն աղոթելու և մաքրվելու Գառնուկ Հիսուսի արյունով:

Եթէ այսպիսի մի ճաշկերույթին հրավիրողը մենք լինեինք և իմանայինք հրավիրվածների մերժողական պատասխանը, բնական է, որ մենք ևս պիտի բարկանայինք ու նեղվեինք. Բայց հարց է առաջանում, թե՝ *«Ի՞նչ է լուծումը այսպիսի կացության»:* Անշուշտ, որ պիտի չուզեինք փչացնել պատրաստված ուտելիքները: Եթե թափեինք դրանք, մեր ամբողջ ծրագիրը, աշխատանքը, հույսն ու ուրախությունը չպիտի իրականանային: Մի բան պիտի մտածեինք: Նույն հասկացողությամբ ազնվականը փրկում է դրությունը, դրսից ընդունելով աղքատներին, անտուններին. խեղանդամներին, կաղերին ու կույրերին: Այս արարքով, նա մեզ հիշեցնում է ճաշկերույթին մասնակցել չուզող հրավիրվածներին ուղղված Հիսուսի խոսքը. *«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»:*

Ահա տեսնում ենք, թե ինչպիսի ձևով ճաշկերույթը վերածվում է մի մեծ բարեգործության: Նրանք, որոնք պիտի սպասարկեին բարեկամներին ու ընկերներին, ծառայում են անծանոթ կարոտյալներին:

Բարեկամների ու ընկերների համար ճաշկերույթ տալը սխալ չէ, սակայն Հիսուս հիշեցնում է, թե ավելի բարձր վարձատրություն է սպասում մեզ, երբ մենք հրավիրում ենք այնպիսի մարդկանց, որոնք մեզանից բախտավոր չեն և պետք ունեն օգնության: Երբ փնտրում ենք կարիքավորներին ու

նրանց, որոնք չեն կարող վերադարձնել իրենց տրված բարիքների փոխարենը, այն ժամանակ կատարած կլինենք մեր Տիրոջ պատվիրանը։

Մի ձկնորս գետնից մի քար վերցնելով ծովն է գցում: Քարը անմիջապես մտնում է ծովի հատակը: Ահավասիկ մի պատկեր, մի երևույթ, որն Աստծու սերն է բացատրում: Աստծու սիրտն էլ ծովի պես է։ Սերը օվկիանոսի չափ անհուն ու խորն է, որ կարող է ամբողջ մարդկության մեղքը ընդունել ու ներել: Արդյոք Աստված հաշվետետր ունի՞: Ինչո՞ւ պիտի ունենա, երբ միշտ սիրում է ու ներում:

Նետված քարը կարող է վնաս պատճառել ամեն ինչին, բացառությամբ ջրի մեջ ընկնելուց։ Ջուրը քարի հարվածներից չի վնասվում։ Երբ քարը ծովբի մեջ է ընկնում, նա միայն ժպտում է ու բարձրաձայն ծիծաղում։ Սակայն, երբ քարով պատուհանին ենք հարվածում, ապակին ջարդ ու փշուրէ լինում։ Մեր սիրտը սիրո ու ներողամտության օվկիանոսի վերածելով, կարող ենք չեզոքացնել ամեն տեսակի թշնամական հարված ու կներենք։ Մեր սիրտը սիրո ու ներողամտության օվկիանոսի վերածելով, կարող ենք չեզոքացնել ամեն տեսակի թշնամական հարված ու կներենք: Փոխանակ մարդկանց խոսքերին ուշադրություն դարձնելու, առաջին հերթին քննենք ինքներս մեզ, մեր անձը և ճանաչենք այն։ Սա անշուշտ ամենադժվարն է: Շատ կարևոր չէ, թե մեր մասին չարախոսողները ի՞նչ են անում և ի՞նչ են ծրագրում: Մենք մեզ հարց տանք, թե մենք ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անելու ու թե բավական մեծ և խոր սեր ունե՞նք, որ կարողանանք նրանց ցանած

չարիքը ջրի մեջ նետված քարի պես անվնաս դարձնել:

Հայ քրիստոնյայի համար շնորհակալություն հայտնելը պետք էլինի իր ամենօրյա պարտքը: Նախ գոհություն պիտի տանք Աստծուն՝ Իր բարիքների համար, մեր Հոգևոր Ծնող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու Հայաստանյայց Առաքելական մեր Մայր եկեղեցուն ու մեր Սուրբ Հողին՝ Մայր Հայրենիքին, ինչպես նաև մեր ֆիզիկական ծնողներին՝ իրենց հոգատարության ու խնամքի համար և երկրորդ՝ պատրաստ պիտի լինենք իբրև երանելի հրավիրվածներ, մասնակցելու երկնքում Աստծու հավիտենական ճաշկերույթին: Ամեն:

ՇՆԱՑՈՂ ԿԻՆԸ

«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. 8:7):

Աստված մարդուն տվել է ամենակարևորը, որը կենդանուն չի տվել. մտածելու կարողություն և ազատ կամք: Որով մարդը ազատ է իր ընտրության մեջ գնալ դեպի չարը՝ սատանայի կողմը և կործանվել ու հակառակը՝ ընտրել բարու ճանապարհը և օրհնյալ լինել Աստծու կողմից:

Մեր Տերը ժողովրդին հասկանալի լինելու համար միշտ առակներով էր խոսում նրանց հետ: Այս անգամ պատմում է հետևյալ ուսուցողական դեպքը:

«Առավոտյան դարձյալ Տաճար եկավ. ամբողջ ժողովուրդը գալիս էր նրա մոտ և ինքն ուսուցանում էր նրանց: Օրենսգետներն ու փարիսեցիները բերեցին շնության մեջ բռնված մի կին և նրան մեջտեղ կանգնեցնելով՝ ասացին Հիսուսին. «Հանցանքի մեջ բռնված այս կինը հայտնապես շնացել է, իսկ Օրենքում Մովսեսը մեզ պատվիրել է այսպիսիներին քարկոծել. Արդ, դու դրա մասին ի՞նչ ես ասում» (Հովհ. 8:7):

Այսպես խոսում էին Նրան փորձելու համար, որպեսզի մեղքի մեջ բռնելով կարողանային ամբաստանել: Իսկ Հիսուս այս խոսակցության ընթացքում նրանց վրա նույնիսկ ուշադրություն էլ չեր դարձնում, միայն գետնին նայելով. գրում էր, բայց նրանց անդադար հարցումներին չդիմանալով, Իր գլուխը բարձրացնում է ու ասում. *«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. 8:7): Երբ նրանք այս*

խոսքերը լսեցին, մեկ առ մեկ սկսեցին դուրս գալ, մնացին միայն Հիսուսն ու կինը: Տերը նրան ասաց. «Ո՛վ կին, ո՞ւր են. Քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Եվ նա ասաց. «Ո՛չ, Տեր»: Հիսուս նայեց նրան ու ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. Գնա, այսուհետև մի մեղանչիր» (Հովհ. 8:10-11):

Այս դեպքում երկու տեսակի մարդիկ կան՝ արդարն ու մեղավորը: Մեղավորը՝ ինքնիրեն հանցավոր զգալով ամոթից կամրում է, սակայն կան մարդիկ, որոնք իրենց անմեղ ու արդար կարծելով քննադատում են ուրիշներին ու աղոթում Փարիսեցու հոգեբանությամբ և նոր թակարդներ են լարում, որպեսզի իրական արդարները ընկնեն դրանց մեջ, ինչպես տեսնում ենք Ավետարանի պատմության մեջ: Հիսուս ինչ էլ ասեր, Նրան պիտի զրպարտեին: Օրինակ, եթե ասեր, թե՝ *«Օրենքի համաձայն քարկոծեցեք»,* փարիսեցիները պիտի ասեին, թե՝ *«Հռոմեական կայսրության օրենքը մեզ արգելում է դա անել»,* քանի որ նրանք մահապատժի թույլտվությունը վերցրել էին հրեաներից: Մյուս կողմից, Հիսուս Ինքն իրեն հակասած կլիներ, քանի որ միշտ մեղավորների հանդեպ ներողամտության ոգի էր ցույց տալիս: Իսկ եթե ասեր, թե՝ *«Ներեցեք, մի՛ քարկոծեցեք»,* այն ժամանակ էլ պիտի բողոքեին, թե՝ ահավասիկ Մովսիսական օրենքը ոտնակոխ է անում ու Ինքնիրեն Մովսեսից վեր է դասում:

Շատ հեշտ է տեսնել ուրիշի աչքի շյուղը և դժվար է նշմարել մեր աչքի գերանը:

Մարդը լավ գիտի թե ո՞րն է չարը և ո՞րն է բարին, բայց չի խոստովանվում, իր հոգու խորքում անգամ անհարմար է զգում դա անել: Ուստի պատ-

ճառաբանություն, արդարացում, մխիթարություն է խնդրում և երբ այն գտնում է իրենից դուրս, չափազանց ուրախանում է:

Գիտենք, որ Աստված ամեն ինչ ստեղծեց ու ասաց. *«Թե բարին են, թող լինեն»:* Ուրեմն բարություն ստեղծողը բնական ձևով բարի պետք է լինի: Այս դեպքում մեզանից յուրաքանչյուրի մտքում, ակամա այսպիսի հարց է ծագում. *«Եթե Աստված բարի է, որտեղի՞ց են այսքան պատերազմները, կռիվները, վեճերը, չարությունները, սպանություններն ու ամեն տեսակի բռնությունները»: Ինչո՞ւ Աստված չի բռնում մարդասպանի, ավազակի, գողի ու սրիկայի ձեռքը»:* Սա պարզից էլ պարզ է, որովհետև ցանկանում են իրենց ունեցածի կրկնապատիկը, երբեմն էլ տասնապատիկը ունենալ, ավելի բարձր պաշտոնների տիրանալ, իսկ երբ չեն կարողանում հասնել դրան, այն ժամանակ սկսում են ամեն տեսակի վատ գործեր կատարել: Ագահությունը մոլություն է և յոթը մահացու մեղքերից մեկը: Պողոս Առաքյալը հաստատում է, թե՝ *«Բոլոր չարիքների արմատը արծաթսիրությունն է»*: Աստվածային օրենքը հստակ է, մարդ արարած, դու ազատ ես ընտրելու լավն ու վատը, գործելու բարին ու չարը, սակայն դրա համար մի օր Դատաստանի առաջ պատասխան պիտի տաս:

Հիսուս ասում է. *«Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք, որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու» (Մատթ. 7:1-2):*

Հիսուսի վարդապետությունը շատ բարձր է ու վեհ, մեր իմացածից և հասկացածից էլ ավելին, որով առաքինի ու պատվական մարդիկ միայն կարող են

ըմբռնել նրա բարձրությունն ու վեհությունը: Արդար մարդը լավ հասկանալով *«Ճանաչիր քեզ»* խոսքի իմաստը, կարողանում է քննության ենթարկել իր ներաշխարհը և զղջում ու թողություն է խնդրում Ամենակալ Հորից և կամա թե ակամա գործած մեղքերի համար:

Մեր Տերը խրատում է մեզ նախ մեր պակասություններն ու թերությունները ուղղել և հետո մեր ընկերոջը. բարեկամինը կամ հարևանինը տեսնել: Որով, լավ պիտի լինի, եթե չար գործեր չկատարենք, որպեսզի չարիք չգտնենք, այլ ներողամիտ լինենք մեկս մյուսի նկատմամբ, որպեսզի մենք էլ ներվենք ու սիրվենք բոլորի կողմից: Չարիք գործելով, մի ուրիշին դատապարտելն ու մեղադրելը շատ հեշտ է, բայց եկեք մեր բարի գործերով, մեր արդար քրտինքով ու մեր միասնական աշխատանքով արժանանանք Աստծու սիրույն, գուրգուրանքին և գնահատանքին: Ամեն:

ՍԻՐԵԼ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

«Բայց դուք սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարությո՛ւն արեք ձեզ ատողներին ու փո՛խ տվեք նրան, ումից հետ առնելու ակնկալություն չունեք: Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիները կլինեք, որովհետև նա բարեհաճ է չարերի և ապերախտների հանդեպ: Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկաս 6:35-36):

Հետաքրքիր խոսքեր էին չէ՞, բայց նաև գուցե՝ անհասկանալի. *«Ի՞նչ է նշանակում սիրել մեր թշնամիներին, ո՞վ է մեր թշնամին»,* եթե ոչ չարը՝ սատանան: Արդյոք ճի՞շտ է կատարել այս խոսքը ու սիրել չարին: Մեր Տերը սակայն ուրիշ թշնամիներ նկատի ունեցավ: Տեսնենք թե որո՞նք են դրանք:

Առաջին հերթին ամենակարևոր թշնամին պետք է փնտրենք մեր ներքին աշխարհում: Պետրոս Առաքյալը իր Ընդհանրական Թղթում ասում է. *«Սիրելիներ… աղաչում եմ ձեզ, որ հեռու մնաք մարմնավոր ցանկություններից, որոնք պայքարում են հոգու դեմ» (Ա. Պետրոս 2:11):*

Հիսուս Իր ներողամտության ոգով հորդորեց սիրել կյանքում նաև տեսանելի թշնամիներին և ոչ միայն սեր ցույց տալ նրանց նկատմամբ, այլև ողորմություն անել. *«Եթե թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան, եթե ծարավ է, ջո՛ւր տուր խմելու, քանզի այդպես անելով՝ դու նրա գլխին կրակի կարծեր կդիզես, և Տերը քեզ պիտի բարություն հատուցի» (Առակ. 25:21-22):*

Հաճախակի խոսակցության ընթացքում լսում ենք թերահավատ մարդկանցից հեգնանքով ասված զանազան արտահայտություններ Հիսուսի խոսքերի մասին. *«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու»:* Պատկերացնում ենք այդպիսի մարդկանց քմծիծաղը, որի միջից ամբողջ էությամբ երևում է նրանց չար սիրտն ու հավատքի պակասությունը: Մարդկանց սահմանափակ ուղեղն ու մտածելակերպը թույլ չեն տալիս, որ նրանք լիովին հասկանան Աստծու պատվիրանը: Հին Կտակա-րանում տարածված է այս խոսքը. *«Աչքի դեմ՝ աչք, ատամի դեմ՝ ատամ»,* մի նշանաբան, որն ավաղ, մարդկանց համար շատ ավելի նախընտրելի ու սիրելի էր ու է մինչև այսօր:

Ավելի հեշտությամբ ըմբռնելու համար մեր Տիրոջ այս պատվիրանը, շատ հեռու գնալու պետք չունենք, բավական է միայն հետևենք Նրա երկրային կյանքին: Հիսուս քարոզում էր միշտ խոնարհություն, ներողամտություն, բարություն, անշահախնդրություն և ոչ միայն պարզապես քարոզում էր, այլև Ինքը հրաշալի օրինակ էր հանդիսանում: Կարող ենք հիշել Նրա մատնությունը, չարչարանքը, զրկանքները, հալածանքները, անարժան ու անտեղի անպատվություններն ու վերջապես՝ խաչելությունը: Նա առանց բողոքի, դժգոհության, համբերությամբ տարավ այս բոլորը: Ավելին, նույնիսկ Իր երկրային կյանքի վերջին րոպեներին, խաչի վրա ներեց բոլոր նրանց, որոնք տանջել ու չարչարել էին Իրեն. *«Հայր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկաս 23:34):*

Սակայն այս բոլորի կողքին, մենք հիշում ենք, թե ինչ արեց Հիսուս, երբ տեսավ Իր Հոր աղոթքի Տունը՝ Տաճարը առևտրի կենտրոն դարձած: Նա խարազանը Իր ձեռքը վերցնելով, առանց խնայելու դուրս վռնդեց բոլոր առևտրականներին Իր Հոր Տնից, ասելով՝ *«Իմ տունը պետք է աղոթքի տուն լինի, իսկ դուք ավազակների որջերի եք վերածել այդ» (Ղուկաս 19:46):*

Երբ մարդկանց չարագործություններն ուղղված էին Իր Անձի դեմ, բոլորին ներեց, սակայն չհանդուրժեց, երբ պղծվում էր Սրբությունը:

Ահա թե մենք ինչպես պիտի շարժվենք: Եթե մեկը մեր հանդեպ սխալ կամ անարդար քայլ է առնում, նույն ձևով պատասխանելը կամ վերաբերվելը միայն թշնամություն ու կռիվ պիտի առաջացնի: Իսկ ներողամտությունն ու մեծահոգությունը խաղաղություն պիտի սերմանեն: Եթե ընկերոջդ կողմից ստացած վիրավորանքիդ նույն կերպ չպատասխանես, նրան ակամա քո երկրորդ ծնոտը մոտեցրած կլինես;

Սա վերաբերվում է մեր անձնական կամ առօրյա կյանքին: Ամբողջովին այլ բան է, երբ մեկը համարձակվում է պղծել մեր Սրբությունները: Հետևելով Հիսուսի օրինակին, մենք որպես հայ քրիստոնյա պարտավոր ենք ամեն ձևով պաշտպանել դրանք: *«Իսկ որո՞նք են մեր Սրբությունները: Մեր Ընտանիքը, մեր Եկեղեցին ու մեր Հայրենիքը»:*

Նոր Կտակարանից շարունակելով այս մեջբերումը, պիտի տեսնենք թե Հիսուս ինչքա՜ն տրամաբանական բացատրություն է տալիս վերոհիշյալ խոսքերին.

«Եվ եթե դուք ձեզ սիրողներին սիրեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ են սիրում իրենց սիրողներին: Եվ եթե ձեր բարերարներին բարություն անեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ նույնն են անում: Եվ եթե փոխ եք տալիս նրանց, որոնցից հետ առնելու ակնկալություն ունեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ են փոխ տալիս մեղավորներին, որպեսզի նույն չափով հետ առնեն: Բայց դուք սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարությո՛ւն արեք ձեզ ատողներին ու փո՛խ տվեք նրան, ումից հետ առնելու ակնկալություն չունեք: Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիները կլինեք, որովհետև նա բարեհաճ է չարերի և ապերախտների հանդեպ: Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկաս 6:32-36):

Եթե ուզում ենք, որ մեզ ներեն, մենք էլ պետք է կարողանանք ներել, եթե ուզում ենք, որ մեզ օգնեն, մենք էլ փոխադարձաբար նրանց պիտի օգնենք և վերջապես ով չի ուզում, որ իրեն սիրեն, սակայն այդ սիրույն արժանանում է միայն նա, ով կարող է ուրիշներին սիրել:

Ահա այսպես մենք պիտի շարժվենք իբրև Եկեղեցի, հոգևորական և ժողովուրդ, մեկս մյուսին սիրելով ու ներելով: Ամեն:

«Նավակը ցամաքից մղոններով հեռացել էր՝ դես ու դեն քշվելով ալիքներից, քանի որ քամին դիմացից էր: Եվ գիշերվա ուշ ժամին Հիսուս եկավ նրանց մոտ՝ քայլելով ծովի վրա: Երբ աշակերտները նրան տեսան ծովի վրա քայլելիս, տագնապահար եղան և ասացին. «Ինչ-որ ուրվական է» ու սարսափից աղաղակեցին: Հիսուս իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Սրտապնդվեցեք: Ես եմ, մի վախեցեք» (Մատթ. 14:24-33):

Աշակերտները ճանաչում էին Հիսուսի ձայնը, բայց դեռևս չէին ուզում հավատալ, որ Նա է: Հնարավոր էր, որ ինչպես պատկերն էր երևում նրանց աչքին, այնպես էլ ձայնը կարող էր լսելի լինել նրանց ականջներին: Բոլորը շփոթության և տատանման մեջ էին. արդյոք իսկապես Հիսո՞ւսն է երևացողն ու խոսողը, թե ինչ որ երևութական խաբուսիկ մի բան: Պետրոսը, որն այսպիսի առիթներով խիզախորեն առաջ էր նետվում, ասում է. *«Տեր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով քեզ մոտ գալ»:* Հիսուսի դրական պատասխանը ստանալով Պետրոսը փորձում է Հիսուսին ընդառաջ գնալ քայլելով ջրերի վրայով, սակայն Նրան չհասած սկսում է սուզվել, որովհետև վախենում էր ալիքների փոթորկոտ վիճակից: Հիսուս, որ Իր առաքյալների հավատքն էր փորձում, տեսնելով Պետրոսի վտանգավոր վիճակը, անմիջապես ձեռքը երկարացնում ու բռնում է նրան: Ջրից դուրս հանելով մեր Տերը ասում է. *«Թերահավատ, ինչո՞ւ վախեցար»:* Ապա նավակը

նստելով սաստում է ալիքներին և ամեն ինչ հանդարտվում է:

Առանց Աստծու՝ իմաստություն գոյություն չունի. Նրանից անկախ ճշմարիտ գիտություն չկա: Մարդկային գիտությունը ոչ միայն վստահելի չէ, այլ նաև կործանարար է, երբ գործածվի անկախ Աստծուց, առանց Նրա երկյուղի: Աշխարհի մեծագույն փորձանքները, կործանումներն ու ցավերը ընդհանրապես մարդու գիտութեան պատճառով են եղել: Ոչ մի բան աշխարհին այնքան վնաս չի պատճառել, որքան մարդը, որովհետև նա մտածել, ապրել ու գործել է առանց Աստծու երկյուղի:

«Վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր Նրա պատվիրանները. ահա այս է մարդն ամբողջովին. որովհետև Աստված պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թե բարի» (Ժող. 12:13):

Մարդը ինչո՞ւ պիտի վախենայ իր Հորից: Այս է անընդունելին: Աստված արդյոք սարսափելի, հարվածող, պատժող կամ մարդասպան մե՞կն է: Մենք մեր ծնողներից վախենո՞ւմ ենք: Ո՛չ, ընդհակառակը, սիրում ու հարգում ենք: Աստված մեր Հոգևոր Հայրն է: Բոլորս էլ լավ գիտենք , որ Նա բարի է և ամբողջովին լցված է սիրով: Ուրեմն ինչպես սիրում ու հարգում ենք մեր ֆիզիկական ծնողներին, նույնպես և առավելաբար պիտի սիրենք ու հարգենք մեր Հոգևոր Ծնողին՝ Աստծուն: Նա արժանի է մեր սիրույն և հարգանքին: Եթե վախենալ բառը փոխարինենք «հարգել, պատկառել» կամ «ակնածել» բառերով, այն ժամանակ կհասկանանք, թե մարդը Աստծուն հարգելով սւ սիրելով կարող է սանձել անմարդ-

կային արարքները: Սպանություն, հափշտակություն, գողություն և կամ այլ տեսակի գազանային արարքների պարագային, ժողովուրդը դրանք կատարողների համար օգտագործում է հետևյալ արտահայտությունը. *«Աստծուց չե՞ն վախենում«* կամ *«Աստծու վախը չունե՞ն իրենց սրտում»*: Ան-շուշտ կան նաև դրան հակառակ պարագաներ, երբ արդար ու մաքուր մարդիկ մերժում են իրենց առաջարկված անազնիվ գործերը. «Ես Աստծուց վախենում եմ» կամ «Աստված կա վերևում» և այլն:

Աստծուց վախենալ նշանակում է երկյուղածությամբ մոտենալ Նրան, պատկառանք ունենալ Նրա ներկայությունից, մեծարել ու փառավորել Նրան: Իրականության մեջ Աստծուց վախենալ նշանակում է ոչ միայն հավատալ Նրա գոյությանը երկնքում, այլ նաև Նրա ներկայությանը երկրի վրա: Աստծուց վախ ունեցողը, ունի իմաստությունը իր կյանքը միշտ իր երկնավոր Հոր հետ տեսնելու, ապրելու և վստահությամբ ու քաջությամբ ասելու. *«Տերն է իմ լույսն ու կյանքը, ո՞ւմից վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ո՞ւմից ես դողամ» … (Սաղմոս 26:1):*

«Վախենալ» բառը լսողների մտքում պիտի հասկացվի *«սարսափ»* կամ *«երկյուղ»*: Օրինակ՝ աշխատանքի տեղում գործավորները «վախենում» են պատասխանատուից: Դպրոցում՝ աշակերտները *«վախենում»* են տնօրենությունից և այլնը:

Կան մարդիկ, որոնք օրենքը չեն սիրում և չեն ուզում գործադրել, որովհետև ավելի խավարն են նախընտրում իրենց մութ և անազնիվ գործերը կատարելու համար: Իսկ օրենքը սիրող մարդիկ,

ընդհակառակը, նախընտրում են լույսը, որպեսզի իրենց բարի ու արդար գործերը երևան: Օրէնքը կիրառող երկիրները ավելի շուտ են ծաղկում և կարգ ու կանոնի մեջ մտնում: Ով օրենքը չի հարգում, անկանոն և անկարգապահ մարդ է:

Հիշեք, որ անպայման ոստիկանը կամ հսկիչը չպետք է մեզ հուշի, թե օրէնքը չի կարելի խախտել, պետք է լաւ հասկանանք, որ Աստծու աչքերը ամենուրեք մեզ են նայում, եթե շեղվենք Իր ճշմարիտ ճանապարհից, անարդար ու անազնիվ գործեր կատարենք, մեկ է, ուր էլ որ լինենք, փախուստ չկա, պատսխան պիտի տանք դրանց համար:

Հետաքրքիր վիճաբանություն է տեղի ունենում երկրի ու երկնքի միջև, թե ո՞վ ավելի շատ առավելություններ ունի, որոնք մարդկանց կարող են հաճույք պատճառել, որպեսզի նրանք ոչ մեկից չվախենան և այդ գեղեցկությունները վայելելով, մոռանան ամեն տեսակ անարդար գործեր կատարելուց:

Վեճը վերջանում է հաշտությամբ՝ փոխադարձաբար իրար առավելություններն ու գեղեցկությունները ընդունելով: Երկինքը խոնարհվում է դեպի երկիր և երկիրը բարձրանում է դեպի երկինք իր լեռների սպիտակափառ գագաթներով գրկում են իրար ու սիրո համբույր տալիս:

Իբրև հայ քրիստոնյաներ, նախ պիտի աշխատենք մեր հոգիները մաքրել ու խաղաղեցնել ու երբ լսենք Տիրոջ ձայնը, թե՝ *«Արտապնդվեցե՛ք, քաջալերվեցեք, ես եմ, մի՛ վախեցեք»* պատրաստ լինենք, որովհետև Հիսուս չեկավ վախեցնելու, այլ տեր կանգնելու նրանց, որոնք հավատացին Իրեն: Ամեն:

ԳԱՂՏՆԻՔ ՄԻ' ՈՒՆԵՑԵՔ

«Ծածուկ ոչինչ չկա, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացվի և ի հայտ չգա»
(Ղուկ. 8:17-18):

Հիսուս Իր առաքելության երեք տարիների ընթացքում հաճախ էր խոսում մարդկանց հետ, որպեսզի բացի նրանց սրտերն ու հոգիները և սերմանի Աստծու խոսքը: Այս խոսքերը մեզ առիթ են տալիս մտածելու,մ թե Նա ի՞նչ էր ուզում հասկացնել մեզ: Իր կյանքը նկատի ունենալով մենք տեսնում ենք, որ Նա ոչ մի գաղտնի բան չուներ ո'չ Իր աշակերտներից և ո'չ էլ ժողովրդից: Սրանով Նա ուզում էր հասկացնել, որ մարդկային կյանքում ինչ էլ ծածուկ լինի, գաղտնի չի մնալու, այլ ուշ թե շուտ ամեն ինչ ջրի երես է դուրս գալու:

Հիրավի այս կյանքումն մարդկանցից երեք բաներ կարող ենք պահել.

ա. *Երբեմն մենք նույնիսկ մեզանից, մեր անձից որոշ բաներ կարող ենք պահել.* օրինակ. շատ անգամ է պատահում, որ մենք մեր որոշ սխալներին ու սովորություններին աչք ենք փակում, փոխանակ դրանք ուղղելու ու վերացնելու: Զարմա-նալին այն է, որ մենք իմանալով հանդերձ, թե հետա-գայում դրանց հետևանքները տխուր ու ծանր են լինելու, ձեռքներս թափ տալով ասում ենք. «Ի՞նչ ուզում է թող լինի, հոգներս էլ չէ»:

բ. *Երբեմն մարդկանցից որոշ բաներ ենք պահում.* ստուգված է, որչ գաղտնիք ունեցողը անպայման տխուր կլինի, իսկ չունեցողը՝ միշտ էլ ուրախ է:

Պատմվում է. թե մի ճարտարապետ Պլատոն փիլիսոփային առաջարկում է տուն կառուցել, որի սենյակները գաղտնի մնան մարդկանցից, սակայն իմաստունը նրան ասում է. *«Ուզածդ գումարի կրկնապատիկը քեզ կտամ, եթե կառուցելիք տանդ սենյակները բոլոր կարողանան տեսնել»:*

գ. *Երբեմն բաներ ենք պահում Աստծուց.* պետք է գիտակցենք, որ Նրա ներկայությունը միշտ մեր մեջն է, ու Նրա աչքը մշտապես մեր վրա է:

Այս երեք կետերը նկատի ունենալով, պիտի աշխատենք, որ գաղտնիքներ չունենանք, ընդհակառակը՝ լույսի մեջ աշխատենք, որպեսզի կարողանանք մեր կյանքը երջանիկ դարձնել: Լույսն ու կյանքը անբաժանելիորեն քայլում են կողք-կողքի: Հիսուս լույս է:

Ըստ Պողոս Առաքյալի ամեն ինչ կատարվում է Աստծու կամքի համաձայն:

Նրա կամքը գաղտնի էր մնացել մինչև Հիսուսի գալուստը: Արդար ու մաքուր կյանքով ապրող քրիստոնյա մարդը միշտ պատրաստ է ու ծածուկ ոչ մի բան չունի և վախենալու էլ ոչինչ չունի: Հիսուս ասում է՝ *«Ոչ ոք ճրագ վառելով ծածուկ տեղ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի մտնողը լույս տեսնի: … Արդ, զգույշ եղիր, գուցե այն լույսը, որ քո մեջ է, խավար լինի» (Ղուկ. 8:16):*

Արդար ու մաքուր կյանքով ապրող քրիստոնյա մարդը միշտ պատրաստ է ու ծածուկ ոչ մի բան չունի և վախենալու էլ ոչինչ չունի: Հիսուս ասում է՝ «Ոչ ոք ճրագ վառելով ծածուկ տեղ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի մտնողը լույս տեսնի: Մարմնի ճրագը աչքն է, երբ աչքը առողջ է,

ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ աչքը պղտոր է, մարմինն էլ խավար կլինի։ Արդ, զգույշ եղիր, գուցե այն լույսը, որ քո մեջ է, խավար լինի» (Ղուկ. 8:16)։

Եվ շարունակելով ասում է. *«Ով որ ունի, նրան կտրվի, իսկ ով որ չունի և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, կվերցվի նրանից» (Ղուկ. 8:17-18):* Այս ասելով Հիսուս ի՞նչը նկատի ուներ և ինչի՞ մասին էր խոսում. հարստությա՞ն, դրամի՞, կալվածներ ունենալո՞ւ, թե փառք և անուն վաստակելու մասին։ Անշուշտ, ոչ մեկի։ *«Իմ թագավորությունը այս աշխարհից չէ»… (Հովհ.18:36),*- ասում էր նա։ Ոչ ոք չի կարող Աստծու հետ լինել և Նրան ամբողջությամբ հասկանալ, եթե ինքն իրեն չի ճանաչում ու չի հասկանում» *«Ով որ ունի»* խոսքը չի նշանակում նյութական բարիքներ, այլ՝ գիտակցություն ունենալ և կարողանալ իր անձը ճանաչել։ Ով որ գիտի կյանքը իրապես ապրելու գիտակցությունը, նրան է, որ պիտի տրվի, իսկ ով չի իմանում ու կարծում է, թե ունի, նրանից պիտի վերցվի եղածն էլ։ Ուրեմն՝ *«Ի՞նչ պիտի ունենանք»:* Գիտակցություն ունենալ, ըստ Պողոս Առաքյալի, նշանակում է կյանքը ապրել երեք հիմնական հատկանիշներով՝ *բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ:*

Բարի լինելու համար մարդու միտքը, սիրտը, հոգին և զգացումները պետք է մաքուր լինեն։ Եթե մարդը ներքնապես չար է և արտաքնապես փորձում է բարի երևալ, դա պարզապես կեղծավորություն է։ Չինական ժողովրդական մի ասացվածքի համաձայն, աշխարհում երկու տեսակ բարի մարդիկ գոյություն ունեն։ *Մեկը մեռած մարդն է, որը չարիք*

չի կարող գործել, քանի որ անշունչ դիակ է դարձել, իսկ մյուսը՝ չծնվածը, որը չի կարող չարիք գործել, քանի որ ծնված չէ:

Բարի հոգին իր ներշնչումը ստանում է Աստծուց, իսկ չարը՝ սատանայից:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր է.

«Իմաստասերների միջև բուռն վեճի առարկա է դառնում այս հարցը, թե ո՞ր գիտությունն է ճշմարտապես հատկանշում մարդու արժանիքը:

Ոմանք ասում են, թե գեղարվեստն է, ուրիշներ՝ ռազմագիտությունը, իսկ ոմանք էլ՝ քաղաքական փորձառությունը:

Ներկաները իրենց մտածումները հայտնելուց հետո, ուզում են իմանալ Հույն Անտիսթենես փիլիսոփայի կարծիքը, որը մի անկյունում նստած լուռ հետևում էր այս վիճաբանության:

- Ինձ համար,- ասում է փիլիսոփան,- լավագույն և բարձրագույն ուսումը և արժեքավոր մարդը նա է, որ կարողանա սովորել մոռանալ գոնե մի չարիք»:

Հիսուս հորդորում է մեզ. «*Ծառը բարի արեք, և նրա պտուղն էլ բարի կլինի, կամ ծառը չար արեք և նրա պտուղն էլ չար կլինի. Քանի որ իր պտղից է ծառը» Մատթ.*

Աշխարհում ամենամեծ պայքարը չարի կողմից մղվում է բարության դեմ, բայց վերջ ի վերջո վերջնական ու ամբողջական հաղթանակը բարուն է պատկանում: Պողոս Առաքյալը խրատում է. *«Ո՞վ հավատացյալ, թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ. 12:21):*

Ուրեմն, *«Ի՞նչ է աստվածային կյանքը և ի՞նչ է Աստծու տված ճշմարտությունը»,* եթե ոչ սիրո մաքրությունը մեր սրտում և հոգում;

«Ավաղ, կան մարդիկ, որոնք միայն բարձր կենդանիներ են, իրենց իմացականությունն ու բարձր հասկացողությունները գործադրում են առավելապես կենդանական, անձնական, եսական, կամ շահադիտական նպատակների համար«- ասում է Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը և շարունակում. «*Դրանից դուրս ուրիշ աշխարհ չեն ուզում ճանաչել, ուտել, խմել, վայելուչ հագնվել և նյութական վայելք ունենալ, կազմում է նրանց կյանքի բովանդակությունը: Նրանց ընտրած ճանապարհը իսկական կյանքի ճանապարհը չէ« («Դեպի Լույս և Կյանք» Գանձասար մատենաշար, Երևան 1994):*

Որոշ տեղ հասնելու համար պետք է ընտրես ճանապարհդ, արդյոք գտե՞լ ես այն, եթե այո', ուրեմն առանց վախենալու առաջ պիտի գնաս մինչև ծրագրած տեղդ հասնես: Այդ վայրը ներքին և հոգով ապրած ճշմարտություն է կոչվում, որին գտնելու համար պետք է շարժվես նրա համար սահմանված փշոտ ու արյունոտ ճանապարհով, ինչպես մեր Տերը. անձանձրույթ կերպով աշխատի'ր, ձգտի'ր, փնտրի'ր, բախի'ր, որպեսզի ի վերջո դռները բացվեն, դռնե'ր, որոնք քեզ պիտի տանեն դեպի իսկական և հոգևոր կյանք: Պիղատոսները իրենց շրթներին պատրաստ ունեն այս ծաղրական հարցը. «Ի՞նչ է ճշմարտությունը»: Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը պատկերավոր կերպով տալիս է սրա պատասխանը. *«Նա մարգարիտ է, որ միայն ծովի հատակում կարող ես որոնել ու գտնել, ուրեմն ծովի հատակը*

սուզվելու ունակության մեջ պիտի վարժվես. Նա թանկագին քար է, ադամանդ, որը հանքերի խորքում կարող ես գտնել, այն էլ հազվագյուտ, երկար որոնումներից հետո»:

Մեր Տերը երկու հազար տարիներ առաջ պատվիրեց Իր առաքյալներին և այսօր էլ մեզ է ուղղում Իր խոսքը. *«Իմ միակ և գլխավոր պատվերը սերն է, բայց սեր կատարյալ, տևական և սեր բոլոր պարագաներում: Դուք պետք է սիրեք իրար այնպես, ինչպես որ ես սիրեցի ձեզ…» (Հովհ. 15:12-17):*

Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է և է' բարության, արդարության ու ճշմարտության ջատագովը և այն սերմանել մեր ժողովրդի սրտում ու հոգում: Սբ,. Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի լույսը այսօր էլ բոցկլտում է ամենուր ցրված մեր զավակների սրտերում, հավատք, հույս և զորություն պարգևելով նրանց: Ամէն:

ՉԵՆԹԱՐԿՎԵԼ ՉԱՐԻՆ

«Երթ յետս իմ, սատանա» (Մատթ. 4:10):
«Ինձանից հեռու գնա, սատանա«:

Մեր Տէրը Հիսուս Քրիստոս իր քարոզությունների ընթացքում, փարիսեցիների, դպիրների կամ անհատ մարդկանց հետ ունեցած իր հակաճառությունների ու խոսակցությունների ընթացքում, ստիպված էր լինում պատասխանելու սատանայական կամ չար մտքով տրված բազմաթիվ հարցերի:

Բնական է, որ Նրա պատասխանները հիմնված էին այն Սուրբ Գրքի վրա, որին հավատում էին նաև իր հակառակորդներն ու հարցեր տվողները, որոնց նպատակը միայն մեկն էր. այդպիսի հարցերով ծուղակը գցել Նրան:

Ներկա ժամանակներում ևս ամեն քայլափոխի, սատանան կամ գառան մորթի հագած զանազան մոլորեցնողներ, փորձում են կասկածներ սերմանել մեր մտքի ու հոգու, իմացական կյանքի և գործունեության մեջ:

Մենք մեզ կարող ենք հարց տալ, թե ինչքանո՞վ ենք պատրաստ նրանց ասելու. *«Ինձանից հեռո՛ւ գնա, սատանա«:*

Բայց մեր Տերը Հիսուս, իբրև Աստծու Որդի՝ պատրաստ էր: Այստեղ որևէ հավատացյալ նույնպես կարող է հարց տալ, թե՝ ինչպե՞ս:

Մատթեոս և Ղուկաս Ավետարանիչները պատմում են, թե Հիսուս քառասուն օր ծոմ պահելուց հետո, սոված ացավ: Այս առիթից օգտվելով, սատանան ծրագրված մոտենում է Նրան ու փորձելու

համար ասում. «*Եթե Աստծու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ. 4:3),* այսինքն ապացուցի՛ր, որ հետևողներդ քեզ հավատան: Փորձությունը մեծ էր: Սակայն Հիսուս շատ գեղեցիկ և մեզ համար ուսանելի պատասխան է տալիս նրան. *«Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից»: (Մատթ. 4:4),* Դժբախտաբար, 21-րդ դարի սկզբին, մենք, մահկանացու մարդիկս, տարված ենք մտածելու, թե ինչպե՞ս հոգանք մեր ֆիզիկական կարիքները՝ ուտելիք, դրամ, առողջություն, ապրուստի հանգստավետ պայմաններ և այլն: Ահավոր վազքի մեջ ենք նյութի ետևից, մանա- վանդ ամերիկյան այս երկրում: Վազում ենք ու վազում խելահեղորեն, դժբախտաբար, սակայն, չենք անդրադառնում, թե ո՞վ պիտի մտածի մեր հոգևոր կյանքի մաքրության ու զորացման մասին:

Սատանան իր առաջին փորձի ձախողումից չհուսահատվելով, երկրորդ անգամ է փորձում:

Ղուկաս Ավետարանիչը պատմում է. թե նա նորից է մոտենում Հիսուսին ու Նրան տանելով մի բարձր լեռան գագաթը, ցույց է տալիս աշխարհի բոլոր թագավորություններն ու ասում. *«Քեզ կտամ այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը, որովհետև ինձ է տրված, և ում որ կամենամ, կտամ այն: Արդ, եթե դու իմ առաջ ընկած երկրպագես, բոլորը քոնը կլինի» (Ղուկ. 4:6-7):* Փորձության այսպիսի պահերին, մեր հույսը և ապավենը պիտի լինի միմիայն Աստված, Նրանո՛վ պիտի ապրենք ու Նրանո՛վ շնչենք: Երբ հաջողությունների ենք հասնում, տիրանում բարձր պաշտոնների, ձեռք բերում

հարստություն և ունեցվածք, մոռանում ենք, որ Աստվաշ գոյություն ունի, իսկ երբ հանկարծ թեթև ձախորդությունների ու դժվարությունների ենք հանդիպում՝ անմիջապես առաջին հերթին մեղքը զգում ենք Աստծու վրա ու սկսում բողոքել, թե՝ *«Ո՞ւր է Աստված«, «Եթէ Աստված կա, ինչո՞ւ չի լսում մեր աղոթքները ու մեզ փրկում այս վիճակից»* և նմանատիպ արտահայտություններ: Չարը կամ այս դեպքում սատանան, Հիսուսին թելադրում է հույսը դնել Աստծու վրա:

«Փորձենք»,- ասում է սատանան, *«Ինքդ քեզ աշտարակից ցած գցիր»:* Հիսուս, երրորդ անգամ լինելով, վստահորեն պատասխանում է. *«Գրված է՝ քո Տէր Աստծուն պիտի չփորձես« (Մատթ. 4:7):*

Այսօր ավելի քան երբեք մեր ժողովրդի զավակները թե Հայրենիքում և թե Սփյուռքում փորձությունների ու դժվարությունների մեջ են տարբեր տեսակի աղանդների կողմից, որոնք ամեն ինչ անում են, որպեսզի կտրեն նրանց Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցուց: Շատ անգամներ լսել ենք, թե ոմանք փորձում են մեր հավատացյալ հայորդիների ուշադրությունը շեղել օտար եկեղեցիների և հոգևորականների գովքը անելով: Ընտանիքներ կան, որոնք չեն նկատում իրենց տան անդամի բարեմասնություններն ու առավելությունները և ուրիշներին են երանի տալիս:

Այստեղ տեղին է հիշել 5-րդ դարի մեր շնորհալի Կաթողիկոսներից Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի խրատական պատասխանը ժամանակի մեր նախարարներին, որոնք ցանկություն էին հայտնել հայոց թուլամորթ թագավորի փոխարեն պարսիկ

մեկին բերել: Հայրապետը երբ տեսել էր, որ չեն ուզում լսել իրեն, վրդովված ասել է. *«Մեր հիվանդ ոչխարը ավելի նախընտրելի է, քան ուրիշի առողջ գայլը»:* Այս մեկ նախադասության մեջ ամեն ինչ ասված է, բացատրության կարիք չկա: Այս օտար ափերում մանավանդ շատ կարևոր է, որ մեր ժողովրդի զավակները չմոռանան իրենց Մայր Եկեղեցին: Մի՛ ծուլացեք, եկէք ձեր Տունը, որ Աստծու Տունն է, բոլորիդ Տունը և թերահավատ մի՛ եղեք, այլ վաղվա օրվա նկատմամբ ավելի հավատքով, սիրով ու հույսով լցված շարունակեք ձեր կյանքը: Ձեզանից ամեն մէկը թող իր հոգեկան աշխարհը դարձնի ճշմարիտ եկեղեցի, որպեսզի ոչ մի ուրիշ ազդեցություն և ոչ մի օտար աղանդ չկարողանա կործանել ձեր տան միասնությունն ու խաղաղությունը: Մեր Տիրոջ Հիսուսի խոսքերն են, որոնք կարծես այսօրվա համար են ասված. *«Զգույշ եղեք սուտ մարգարէներից, որոնք մօտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից կճանաչէք նրանց» (Մատթ. 7:15):*

Մենք, իբրև հայ ժողովրդի զավակներ, ունենալով մեր ֆիզիկական, հոգեկան և իմացական կյանքի մտահոգությունները, կարող ենք մխիթարվել ու մեր խղճի առաջ հանգիստ զգալ մեզ, եթե Աստծու կողմից մեզ պարգեված կարողություններն ու շնորհները իմաստությամբ գործածենք: Իբրև Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու հավատարիմ զավակներ. ուր էլ որ լինե՛նք, ի՛նչ դիրքի, ի՛նչ կացության ու ինչ տարիքում էլ գտնվելիս լինենք, զոհանանք մեր ձեռք բերած հարստությամբ, ունեցվածքով և աղօթքով, ու հավատքով փառք տանք Աստծուն: Աստծուն զոհաբանելով, մենք արդեն իսկ չարի երեսին շպրտած կլինենք այս խոսքը. «Մեզանից հեռո՛ւ գնա, սատանա», որովհետև *«Աստված մեզ հետ է և մենք ամեն ժամ ու ամեն օր փառք և զոհություն ենք մատուցում Նրան»:* Ամեն:

ՀԵՌԱՑՐՈՒ ՉԱՐԻՔԸ

«Եթե քո աջ ձեռքը քեզ գայթակղեցնում է, կտրիր այն և դեն գցիր քեզնից» (Մատթ.5:30):

Ի՞նչ եք կարծում Հիսուս այս խոսքերն ասելիս, նկատի ունե՞ր, որ մենք այն կհասկանանք ճիշտ այնպես, ինչպես գրված է: Անշուշտ՝ ոչ:

Ժամանակին պատահել է այս դեպքը, երիտասարդներից մեկը, բառացիորեն ընդունելով Հիսուսի այս խոսքը, կացնով կտրել է իր ձեռքը: Բարեբախտաբար, աշխարհի պատմության ընթացքում, այդպիսի դեպքեր հազվադեպ են եղել: Այնուամենայնիվ մեզանից շատերը մի տեսակ մտածմունքի մեջ են ընկնում, երբ փորձում են հասկանալ, թե իրականում Հիսուս ի՞նչն է նկատի ունեցել այս խոսքը ասելիս: Հետաքրքիրն այն է, որ Նա օգտագործել է տեղի բարբառային մի դարձվածք՝ արտահայտության մի ձև, որը ոչ միայն տարօրինակ, այլև իր բառացի նշանակությամբ խորթ է մեր ազգի մտածելակերպին:

Կարող եք հարցնել, թե դա ի՞նչ արտահայտության ձև է :

Եթե ուշադիր ռուսումնասիրենք, կտեսնենք, թե բոլոր ժողովուրդների մեջ էլ կան արտահայտության ձևեր, որոնք եթե բառացիորեն ընկալենք, կընկնենք ծիծաղելի վիճակի մեջ: Անշուշտ մեր լեզվում էլ կան այդպիսիք, որոնք վերաբերում են օրինակ՝ ձեռքերին: Որպեսզի ավելիլավ կարողանանք բացատրել մեր այս ասածը, մեջ ենք բերում փոքրիկ դրվագներ.

«Պողոս անունով մեկը մի աղջիկ ուներ, որը չափազանց անհնազանդ էր: Նա ամեն կերպ ուզում էր իր ձեռքի տակ պահել դստերը, բայց փաստորեն ձեռքից բաց էր թողել աղջկա դաստիարակությունը:

Հակոբը մեքենան ձեռք էր բերել երկրորդ ձեռքից, բայց իրականում այն բազմաթիվ ձեռքերով էր անցել»:

Մի օր երիտասարդ Հակոբը Պողոսից խնդրեց նրա դստեր ձեռքը:

Ամուսնանալուց հետո Հակոբը հաճախ էր ձեռք մեկնում իր կնոջ հայրական ընտանիքին, թեև ընդհանրապես փակ ձեռ մարդ էր»:

Կարդալով այս պատմությունը, եթե փորձենք ձեռքերի հետ կապված բառերը առանձին հասկանալ ուղղակիորեն՝ բուն իմաստը կկորչի:

Հիսուս ասում է. «Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզնից»:

Իսկ մինչ այդ Նա ասել էր.

«Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզնից» (Մատթ·5:29):

Այստեղ Նա նույնպես օգտագործել է մի արտահայտության ձև, որը ժամանակին կատարելապես հասկանալի էր Իրեն լսողների հա-մար: Աչքերի մասին մեր դարձվածքներից շատերը նույնպես անհասկանալի կլինեն օտար մի մարդու, երբ մեր լեզուն սովորելիս նա առաջին անգամ հանդիպի այդ արտահայտության ձևերին:

Արամերեն լեզվում, որով խոսում էր Հիսուս, գոյություն ունեին արտահայտության ձևեր, որոնք այսօր մեզ համար դժվար հասկանալի են դարձնում ձեռքերի և աչքերի կիրառությունը, բայց սրանից

երկու հազար տարի առաջ Պաղեստինում ապրող ժողովրդին միանգամայն հարազատ էին:

Այս եզրակացությունը հիմնավորում է նաև ժամանակակից ասորի մի գիտնական՝ Դոկտոր Ջորջ Լամսան:

Նա ծնվել ու մեծացել է Քյուրդիստանի Շաոյրիլա երկրամասում: Այստեղի ժողովուրդը ապրել է ինքնամփոփ և օտար քաղաքակրթություններին անհաղորդ է մնացել ավելի քան երկու հազար տարի: Հետաքրքիրն այն է, որ մինչև այժմ նրանք պահել են Հիսուսի օրերի լեզուն ու սովորույթները: Լամսան հաստատում է, որ ինքը և իր հայրենակիցները կատարելապես կհասկանան Հիսուսին, եթե Նա վերադառնա երկիր և խոսի ճիշտ այն լեզվով ու նույն դարձվածքներով, ինչպես խոսել էր Հրեաստանում՝ առաջին դարում:

Նա ասում էր, որ իր ժողովուրդը մինչև հիմա օգտագործում է *«Կտրիր ձեռքդ»* արտահայտությունը, որը նշանակում է «դադարիր ինչ որ բան անելուց» : Երբ նրանք ասում են *«Կտրիր ձեռքդ իմ խաղողի այգուց»,* ապա նրանք ուզում են ասել *«Մի քաղիր իմ խաղողը»:* Ասել է, որ մի մարդու ձեռքը չափազանց երկար է, նշանակում է, որ նա գող է: *«Կարճացրու ձեռքդ»,* հաճախ ուղղակիորեն նշանակում է *«Վերջ տուր վատ սովորությանդ»:*

Ուրեմն ակնհայտ է, որ այսպիսի արտահայտության ձևերի իմաստը հատուկ նրբերանգ ուն,ի և շատ հստակ է, որ Քրիստոս մտադրություն չուներ Իր խոսքը տառացիորեն իմաստավորելու, երբ ասում էր.

«Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզնից»:

Այն պատգամը, որը մեր Տերը Հիսուս Քրիստոս նախատեսել էր ուսուցանել տվյալ խոսքով, վստահաբար կարելի է ասել, որ հետևյալ խորհուրդն ունի.

«Եկեղեցին և քրիստոնյան պետք է միշտ արթուն լինեն եւ ամրապնդեն անձնական կարգապահությունը՝ հեռացնելու համար այն ամենը, ինչը որ չար է:

Քանզի անգամ փոքր չարիքը, հետագայում զարգանալով, կարող է պատճառ հանդիսանալ ողջ կյանքի կորստյան համար, այն սկզբունքով, որ մի փոքրիկ թթխմորը կարող է թթվեցնել ամբողջ զանգվածը»:

Ուրեմն մեր կյանքի իբրև ուղեցույց ունենալով Հիսուսի այս խոսքը, իբրև Եկեղեցի և ժողովուրդ, ձեռք-ձեռքի տված, միասնական ոգով, հավատքով ու սիրով, շարունակենք մեր հոգևոր առաքելությունը հնարավոր չափով մեր միջից հեռացնելով մոլախոտերը, որպեսզի ցորենը ավելի առողջ աճի և առատ հունձք տա: Ամէն:

ՀԱՎԱՏՔ, ՀՈՒՅՍ, ՍԵՐ

«Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր. Սրանք՝ երեքը. և սրանցից մեծագույնը սերն է»
(Ա. Կորնթ. 13:13):

Յուրաքանչյուր մկրտության, ներկա հավատացյալը լսում է կնքահոր բերանով երեք անգամ կրկնվող այս բառերը. *«Հավատք, Հույս, Սեր, Մկրտություն»:* Բառեր, որոնք կարծեք Սրբալույս Մյուռոնի հետ թափանցում են մկրտվող երեխայի սրտից ու հոգուց ներս, նրանց զինելով մեր կրոնի ամենաուժեղ երեք զենքերով: Քաղաքակրթության պատմության սկզբից ի վեր, մարդկային միտքը՝ գրականության և ընդհանրապես արվեստների միջոցով, ինքնիրեն արտահայտելու իր ջանքերի մեջ այնքան հարազատորեն ու գեղեցիկ կերպով չի հաջողեցրել տալ մարդուն բնորոշող և նրան բարոյապես հարստացնող մի նկարագիր, որքանով հաջողվեց այդ անել Մեծ Առաքյալ Պողոսին, որով նա նորադարձ քրիստոնյաներին կոչ էր անում օժտվել այս երեք շնորհներով, որովհետև սրանք իրար միացած պիտի ստեղծեին մինչ այդ չտեսնված այնպիսի մի ուժ, որը պիտի կարողանար քայքայել նույնիսկ Հռոմեական հզոր կայսրությունը, նրա փոխարեն մի նոր Թագավորության՝ Աստծու հավիտենական Թագավորության հիմքերը դնելու համար:

Գրելով Կորնթացիներին, Պողոս Առաքյալն ակնարկում էր, թե ժամանակը մոտենում է, երբ՝ «*Հավատքը պիտի փոխարինվեր գիտությամբ և թե Հույսը վերջապես պիտի գտներ իր իրականացումը, սակայն այդ սկսվող նոր ժամանակաշրջանում,*

միայն սերն էր, որ պիտի մնար անգերազանց, որովհետև Գերագույն Առաքինությունը՝ Աստված Ինքը՝ սեր է»։ Ապա Հեթանոսների Առաքյալը ավելացնում է. *«Հավանաբար կարելի է հավատք և հույս ունենալ առանց սիրո, սակայն մյուս կողմից այդ անհավանական է, քանի որ ճշմարիտ սերը լի է հավատքով ու հույսով»։* Դրա համար էր, որ դարեր շարունակ տարբեր մոտեցումներով առաքյալներից սկսած մինչև Եկեղեցու հայրերն ու բանաստեղծները, երգել են հավատքով և հույսով լի սերը։ Սերը, որը հույս և հավատք է ներշնչում կորածին ու մոլորվածին, սերը, որ հույս և հավատք կոչվող այս երկու արժանիքներին իրապես տալիս է իրենց դիրքին պատշաճ բարձրությունը։

Անշուշտ շատ լավ բան է հավատք և վստահություն ունենալ բացակա կամ մեզանից հեռու ընտանիքի անդամի, բարեկամի կամ մի սիրելի անձնավորության հանդեպ,. որովհետև այդ ձևով է, որ մենք միայն ի վիճակի կլինենք հաստատելու մեր վստահության ու հավատքի չափանիշները, նախ մեր, հետո մեր շրջապատի հանդեպ։ Մեզանից ոչ մեկը չի կարող երևակայել, թե ի՞նչ պայմաններ կարող են լինել հանդերձյալ կյանքում։ Միակ բանը, որ մենք կարող ենք վստահ կերպով հաստատել, դա՝ Հայր Աստծու ստեղծած պայմաններն են, որոնց մենք պարտավոր ենք ենթարկվել։ Այսպես ասած. միակ դրական բանը, որ Հույսը կարող է մեզ ներշնչել, այն է, որ մարդը պարտավոր է իմանալ այն Գերագույն Էակի մասին, որը իրեն կյանք տվեց. Նա, որի անսահման

բարությունը ավելի մեծ է, քան ինքը՝ կյանքը։ Նա մեր ստեղծիչն է, իսկ մենք՝ Իր արարածները։

Սակայն ինչպես Առաքյալն է ասում. *«Սերն է ամենակարևորը…»,* քանի որ նա միայն կարող է գոյատևել։ Տեսնել Երկնայինը, կնշանակի սիրել Նրան և սերը կյանքն է երկնքի, որովհետև Աստված Սեր է և Կյանք։ Հետևաբար Սերը հավիտենական է և գերազանց, բացառիկ մի արժանիք է տրված իրապես այն մարդկանց, այսպես ասած այն աստվածորդիներին, որոնք գիտեն քրիստոնեավայել ու աստվածահաճո կյանքով ապրել։ Սերը կարող է միայն ինքնիրեն սահմանել ու բացատրել։ Այս իսկ պատճառով, Մեծ Առաքյալն ու սուրբը՝ Պողոս գրում էր Կորնթացիներին. *«Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ ծնծղաների, որ դողանջում են։ Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ» (Ա. Կորնթ. 13:1-13)*։

Ինչ որ Սրբազան Առաքյալը փորձում էր ասել, պարզապես հետևյալն էր. մեր վկայականները, տիտղոսները, պատվանուններն ու մրցանակները ոչնչի կվերածվեն, եթե մենք սեր և ներողամտության ոգի չունենանք մեր շրջապատի հանդեպ։ Սուրբ Պողոսի համար Սեր նշանակում էր, այդ զգացումից գեր և վեր մի բան, որը կարելի է գտնել միայն նվիրյալ հոգատարության մեջ։

Երիտասարդ բանաստեղծուհու օրինակը խոսուն է։ Քննադատը մի քանի բանաստեղծու-

թյուններ կարդալուց հետո, աղջկան ասում է. *«Աղջիկս դու սիրո մասին գաղափար անգամ չունես, սերը միայն հույս կամ վարդաստան չի, այն պետք է փնտրել և գտնել հիվանդի սնարի մոտ նստած հարազատի մեջ, ծնողների մոտ, որոնք ավելորդ ժամեր են աշխատում, որպեսզի իրենց զավակը մի ձեռք ներկայանալի զգեստ ունենա»:* Աշխարհը այլևս բանաստեղծական այդ շինծու և արհեստական սիրո կարիքը չունի, այլ դասական, բայց միաժամանակ մանավանդ գործնական սիրո: Նման Նոբելյան մրցանակի արժանացած Մայր Թերեզային, որը թափառելով Կալկաթայի փողոցներում, հավաքում էր ընկած մահամերձներին ու աղքատ հիվանդներին և տանում իր խղճուկ հիվանդանոցը, ուր մեծ սիրով խնամում էր նրանց մինչև իրենց վերջին շունչը: Իր համեստ բացատրությունը այն էր, թե՝ *«Ամեն անհատի բացարձակ իրավունքն է մահվան սնարի մոտ ունենալ անկեղծ սիրող մի սիրտ և գուրգուրող ձեռքեր»:* Ահա այս է Սերը, որի մասին այսօր խոսում է Պողոս Առաքյալը:

«Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր. Սրանք՝ երեքը. և սրանցից մեծագույնը սերն է», թելադրում է Առաքյալը, ապա ավելացնում. *«Բայց Սերը դարձրեք ձեր կյանքի նպատակակետը»:* Դժբախտաբար, այսօրվա աշխարհը զուրկ է այդ սիրուց, Աստվածային այդ հատկությունից: Մենք կարիքը չունենք նայելու աշխարհի քարտեզին, զգալու համար այդ բացը մեր ընկերային կյանքից ներս, երբ մենք ամեն օր անցնում ենք տխուր փորձության բովից ամեն տեղ տիրող քաղաքական վերիվայրումների պատճառով, ուր չար մարդիկ

շեղված Աստծու պատգամած սիրուց ու հանդուրժողության ոգուց, իրենց գազանական բնազդները սրած, քաղաքական շահեր ակնկալելով, անմեղ մարդկանց ամենօրյա սպանությունների պատճառ են դառնում:

Այն անձը, ով էլ որ նա լինի, ի՞նչ պաշտոն էլ, որ նա զբաղեցնի, եթե զուրկ է Պողոս Առաքյալի նշած այս երեք առաքինություններից՝ Հավատքից. Հույսից և Սիրուց կդառնա առօրյայի մարդ, մեկը, որի մտահոգությունները կսկսեն արշալույսի հետ ու կհանգեն երեկոյան՝ վերջալույսին:

Սերը մի տեսակ նպաստ է և մեզանից յուրաքանչյուրը անպայմանորեն կարող է բերել իր բա-ժինը: Մարդու ապագան պատկանում է Սիրուն, քանի որ այն լեզուն, որով նա խոսում է՝ տիեզերական է և մենք բոլորս հասկանում ենք նրան: Ուրեմն աղոթենք, որ Հայր Աստված Պողոս Առաքյալի հավատքի, հույսի և սիրո անսպառ աղբյուրից հոսեցնի մեր հոգիների մեջ:

Աստծու հանդեպ մեր սերը երևում է մեր նմանին սիրելով: *«Ով որ չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպես կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում» (Ա. Հովհ. 4:20):*

Սիրո մղումով Աստված մարդացավ, դա Իր կամքն էր: Մեր նմանին սիրելով մենք հաստատում ենք Աստծու Թագավորությունը, սա էլ մեր ձգտումն է և պետք է մեր կամքը լինի: Աստծուն գործընկեր ենք մեր այս առաքելության մեջ: Սիրենք Նրան ու եկեղեցին, սիրենք մեր նմանին, քանի որ Նրա հորդորն է. *«Իմ պատվերս է, որ սիրեք իրար, ինչպես ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15:12):*

Շահենք այն կյանքը, որը Քրիստոս մեզ ժառանգ թողեց: Աշխարհը շահել չի նշանակում կյանքը շահել: Ճշմարիտ կյանքը Քրիստոսն է, որին շահելու համար մեր օրերը պիտի լցնենք իրար հանդեպ ունեցած հավատքով, հույսով ու սիրով: Ամեն:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը» (Մատթ. 18:6)

Հիսուս խոսում է մանուկներին գայթակղեցնելու և արհամարհելու մասին։

Գայթակղեցնել նշանակում է սխալ ճանապարհով տանել, մոլորեցնել կամ նրա մեղանչելուն պատճառ դառնալ։ Մանուկները Հիսուսի հավատացողներն ու հետևողներն են, որոնք կոչվում են Երկնքի Արքայության փոքրիկներ և Աստծու զավակներ։ Բոլոր մանուկներին էլ Աստված նույն ձևով է ընդունում և նույն աչքով տեսնում նույնիսկ ամենափոքրին հասած վնասը։

«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը» ։ Այստեղ *«Էշի երկնաքար կախվի»* խոսքը կարելի է հասկանալ ծանր կամ ջրաղացի քար իմաստով։ Հիսուս շարունակելով Իր խոսքը ասում է. *«Վայ աշխարհին՝ գայթակղությունների պատճառով. գայթակղություններ պետք է, որ գան, բայց վայ այն մարդուն, որի միջոցով կգա գայթակղությունը» (Մատթ. 18:7):*

«Զգույշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք, ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է, որովհետև մարդու որդին եկավ փրկելու կորածը» (Մատթ. 18:10-14): Մեր Տիրոջ

խոսքերն են սրանք, խոսքեր, որոնք իբրև փաստ են բերվում փոքրիկներին մոլորեցնելու չարության մեծությունը հասկացնելու համար. *«Որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է»:*

Հիսուսի այս միտքը կարելի է հետևյալ ձևով բացատրել. *«Այն մանուկները, որոնց դուք համարձակվում եք արհամարհել և մոլորեցնել, մի-մի պահապան հրեշտակներ ունեն, որոնք նշանակված են նրանց խնամելու ու պաշտպանելու համար: Ուրեմն, եթե երկնքում Աստվածային տեսքով բարձրագույն հոգիները (այսինքն՝ հրեշտակները) ծառայում են մանուկներին իբրև պահապաններ և օգնականներ, դուք ինչպե՞ս կարող եք նրանց արհամարհել. մոլորեցնել ու վնաս հասցնել:*

Մանուկների գայթակղության կարևորությունը ավելի զգալի դարձնելու համար, Հիսուս պատմում է մի առակ հարյուր ոչխարի մասին: Ըստ այդ առակի, մի հովիվ ունենում է հարյուր ոչխար. որոնցից մեկը կորչում է; Հովիվը այդ մեկին գտնելու համար թողնում է իննսունիննին ու գնում կորածի հետևից: Գտնելուց հետո չափից ավելի ուրախանում է, որովհետև նրա համար ավելի մեծ նշանակություն ուներ կորած մեկ ոչխարին գտնելը, քան իննսունիննի մնալը: Հիսուսի նպատակն էր ցույց տալ, թե մանուկները ևս մեծ հարգանք ունեն և պահանջում են խնամք ու հոգատարություն: Առակի սկզբում Նա Իր մասին ասում է, թե՝ *«Մարդու որդին եկավ փրկելու կորածը»,* իսկ վերջում վկայում է Իր Երկնավոր Հոր մասին. *»Իմ երկնավոր Հոր կամքն է, որ այս փոքրիկներից ոչ մեկը չկորչի»:*

Առաքյալների միջև ծագած վեճը, թե՝ *«Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»* և յուրաքանչյուրի ձգտումը հասնելու դրան, գայթակղության մի ուժեղ ալիք էր առաջացրել։

Հիսուսի վերջին խոսքը. *«Խաղաղություն թող լինի ձեր մեջ»* ուղղակի ակնարկում է առիթ տվող վեճը։ Երևում է, որ վիճաբանությունը բավականին սուր բնույթ է կրել և առաքյալների մեջ երևացել են երկպառակության ու հակառակության նշաններ։

Մինչև Հիսուսի ժամանակը մեծության չափանիշը ուժը և հարստությունն էր, որը սխալ մտածողություն էր։ Հիսուս ոչ միայն Մեծ եղավ, այլ նաև մեծության գաղափարը արմատապես փոխեց Իր խոնարհությամբ։ Ձեր միջից առաջինը թող նա լինի ով պատրաստակամ է ծառայելու մյուսներին և ով հանձն է առնում նրանց սպասավորությունն ու խնամքը։

Մեր կյանքում հաճախ պատահում է, երբ մենք փոքր կամ մեծ պաշտոն ենք ստանում, այն ժամանակ կարծես աշխարհն սկսում է մեր շուրջը պտտվել և ակամա մտածում ենք, որ մեր ենթակաները կոչված են միայն մեզ ծառայելու համար, իսկ մենք՝ նրանց հրամայելու, պարտադրելու ու պահանջելու, բայց Հիսուս Իր օրինակով մի անգամ ևս հիշեցնում է մեզ, թե իշխանավորը և նույնիսկ թագավորը պարտավոր են խնամք տանել նախ և առաջ իրենց սպասավորների նկատմամբ։ Նա հարցնում է. *«Ո՞վ է արդյոք մեծ, սեղանապե՞տը, թե՝ սպասավորը»,* անշուշտ սեղանապետը, ինչո՞ւ, որովհետև նա նստում է սեղանի ամենաբարձր տեղում, իսկ սպասավորը նրան ծառայում է։ Սա-

կայն սեղանապետը ավելի է մեծանում ու բարձրանում, երբ գիտակցում է ու գնահատում իր սպասավորի արժեքը, սիրում ու խնամում է նրան։ Մյուս կողմից սա ավելի մեծ պարտավորություն է դնում ծառայողի վրա, որն այս անգամ ավելի սիրով, նվիրվածությամբ ու ամբողջ ուժով պիտի ծառայի։

Քրիստոսին հետևել՝ նշանակում է խոնարհ լինել։

Ավետարանը շարունակում է պատմել, թե երբ Հիսուս մի գյուղ է հասնում, սկսում է օրհնել և Իր ձեռքը դնելով բուժում է ամեն տեսակի հիվանդներ։ Գյուղի կանայք երեխաներին գրկած վազում են, որպեսզի Նա օրհնի իրենց զավակներին, այն հավատքով, թե այս օրհնությունը նրանց ամեն տեսակ փորձանքներից հեռու պիտի պահի։ Անշուշտ, սա առաջին դեպքը չէր, բայց երևի այս անգամ խառնաշփոթությունը ավելի մեծ էր և առաքյալները իրենց Վարդապետին խղճալով, փորձում էին կարգ ու կանոն սահմանել և երբեմն էլ հեռացնում էին նրանց։ Հիսուս տեսնելով Իր աշակերտների այս արարքը, միջամտում է ու հրամայում նրանց, որպեսզի ետ քաշվեն. *«Թույլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի եղեք նրանց, որովհետև Աստծու արքայությունը այդպիսիներինն է» (Մատթ. 10:14):*

Ավետարանում պատմվածը նոր ու տարօրինակ մի բան չէր։ Նույն ցանկությունը դարերից ի վեր կա ու պիտի շարունակվի։ Մայրերը, երբ տեսնում են մի պատկառելի ծերունու, նշանավոր անձի, հերոսի, նվիրական մի պաշտոնյայի կամ հոգևորականի, նրա աղոթքն ու օրհնությունն են խնդրում իրենց երեխաների համար և իրենք էլ անձամբ

բերում են նրանց խրատելով. *«Գնա, տղաս կամ աղջիկս, նրա ձեռքը համբուրիր։ Նա ձեռքը գլխիդ կդնի. քեզ կօրհնի ու դու երջանիկ կլինես»։* Հիսուսի հետ էլ ճիշտ այդպես էր եղել։ Գալիլիայից եկող այդ մեծ Վարդապետը, հրաշագործ մարգարեն, Աստծու կողմից ուղարկված պատգամավորը, հակառակ ոմանց թշնամությունների, դարձրել էր ժողովրդի պաշտամունքի առարկան։

Իբրև հայ քրիստոնյաներ մանուկի պես անկեղծ, մաքուր, բարի ու միամիտ լինենք ու այս ձևով կատարած կլինենք մեր Տիրոջ սքանչելի պատգամները։ Ամեն։

ԽՆԴՐԱՆՔ ԱՍՏԾՈՒՆ

Հիսուսի պատվերը Իր աշակերտներին պարզ մի ուղերձ էր. *«Խնդրեցեք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցեք և կգտնեք, բախեցեք և կբացվի ձեր առաջ, որովհետև ով ուզի, ստանում է, ով որ փնտրի, գտնում է, ով որ բախի, նրա առաջ կբացվի» (Մատթ· 7:9):*

«Մարդը ի՞նչ է կորցրել, ի՞նչ է փնտրում և ինչո՞ւ է փնտրում»; Պատասխանը պարզ է, նա փնտրում է իր կորցրած առարկան և շոշափելի իրը, այն կարող է լինել նաև անշոշափելի՝ օրինակ՝ հոգեկան խաղաղություն, մխիթարություն և երջանկություն: Սովորաբար մարդը փնտրում է իր սիրած բանը՝ լիենն դրանք ուտելիք կամ իր նմանների բարեկամությունն ու մտերմությունը, քանի որ նրա հոգնած մարմինը հանգստություն, իսկ հոգին՝ լույս է փնտրում:

Աստվածորդին թողեց իր փառքը և Իր Հոր հրամանի համաձայն իջավ երկիր, որպեսզի կորածը փնտրի ու փրկի. . . (Ղուկ· 19:10): Ինչո՞ւ Հիսուս եկավ կորածը փնտրելու, մի՞թե հզոր Արարիչը չէր կարող մի րոպեում նոր մարդ ստեղծել: Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի կորածին ու անհնազանդին փնտրի ու փրկի:

Մարդկային տեսակետից, եթե մոտենանք, կտեսնենք, թե նույնիսկ ծնողները մի քանի առողջ զավակներ ունենալով, նրանց խնամելով, մեծացնելով ու դաստիարակելով հանդերձ, անձնազոհությամբ, առանց տրտնջալու, խնամում են կույր կամ հաշմանդամ երեխային: Ինչո՞ւ, որովհետև նա իր ծնողների ոսկորն ու մարմինն է: Այդպես էլ մարդը Աստծու կերպարն ու նմանությունն է:

Աշխարհի բոլոր բույսերը, թռչուններն ու կենդանիները ստեղծվեցին երկրի ջրից ու նրա հողից, որովհետև Աստված հրամայեց նրանց, որ կյանք ունենան *(Ծնն. 1:20-25):* Իսկ երբ հերթը եկավ մարդու ստեղծագործության, Աստված ասաց. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծնն. 1:26):*

Աստված որևէ կենդանու կամ ուրիշ մի բանի Իր պատկերն ու նմանությունը չտվեց, այլ մի միայն մարդուն: Բերենք մի օրինակ. տպագրական մեքենայից դուրս եկած նկարները շուկայում վաճառվում են շատ էժան գնով, սակայն հռչակավոր արվեստագետի իրական մի գործ, աճուրդում վաճառվում է միլիոնավոր դոլարներով: Ու եթե այդ արժեքավոր նկարը վնասվի, հազարավոր դոլարներ կծախսվեն այն նորոգելու համար:

Այդպես էլ մարդու ստեղծագործությունը Աստծու մի ծրագրի նախատիպն էր:

Աստված ազատելու համար նրան չարի ու մահվան ձեռքից զոհեց Իր Որդուն և աշխարհ ուղարկեց, որպեսզի մարդուն փրկի: Սակայն դժբախտաբար մարդկությունը այլասերվել էր: Աստծուն պատկանող մարդը, Փրկչի մեջ փոխանակ տեսնելու իր Ազատարարին ու իրեն սիրող Հոր Աստծու կերպարին և նմանությանը, տեսավ նրա մեջ միայն մրցակցին, թշնամուն և գրավողին:

«Ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա և վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն» (Եբր· 11:6): Աստծուն

պետք է փնտրել հոգով ու ճշմարտությամբ: Ամենաուժեղ ձայնը մանուկի լացի ձայնն է, երբ նա իր մորն է փնտրում, սակայն մենք աղոթքով փնտրո՞ւմ ենք Աստծուն և կամ երբևէ զգացե՞լ ենք, որ կորած ենք:

Հիսուս եկավ փնտրելու կորածին, մեղավորին, շփոթվածին, հիվանդին և մարդկային ընկերությունից լքվածին: Երբ եկեղեցի ենք գնում առաջին հերթին ո՞ւմ ենք հյուրասիրում ու բարևում, միայն մեր ընկերների՞ն, թե առաջին անգամ եկեղեցի եկող անծանոթին: Եկեղեցում նոր եկողին ճանաչելը հեշտ է: Նրանք բարեկամներ չունեն ու հետաքրքրությունից դրդված դիտում են ամեն բան:

Հիսուս եկավ դիտեց լքված մարդկությանը, խղճաց և բուժեց կույրերին, հիվանդներին, անդամալույծներին, բորոտներին, կաղերին ու հարություն տվեց մեռելներին: Նա ասաց. *«Առողջներին բժիշկներ պետք չեն, այլ՝ հիվանդներին: Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ. 5:31)*:

Առանց իմացական հավատքի, Հիսուսի շնորհած Աստվածահայտնությունը ու նյութական եկեղեցին կմնան իբրև անիմաստ գեղեցկություններ: Ո՞վ պիտի իմաստավորի Նրա խոսքերը, եթե ոչ դուք ու մենք, մեր ծառայությամբ և ուրիշներին սիրելով:

Յուրաքանչյուր մարդ, որն իր սրտում ու հոգում զգում է Հիսուսի ներկայությունը՝ բուժվել է: Նա ասում է. *«Գնա քո տունը հարազատներիդ մոտ և պատմիր նրանց այն ամենը, ինչ Տերը քեզ արեց և թե ինչպես խղճաց քեզ» (Մարկ. 5:19):* Հոգևոր ծառայության մեջ մանավանդ կոչումը կարևոր է, սակայն Ավետարանն ասում է· *«Կանչվողները շատ են, բայց*

ընտրվողները՝ քիչ»: Ծառայության են կանչվում Աստծու կողմից այն մարդիկ, որոնք ունեն զոհվելու, նվիրվելու և հավատքի շնորհները:

Հիսուս մեզ սովորեցնում է աղոթքի զորության մասին, *«Խնդրեցեք և խնդրանքները կկատարվեն, աղաչեցեք և կլսվեն աղաչանքներդ, բաղխեցեք գթության դուռը. . . »:* Հիսուսի խոսքերը հիմնվում են աստվածային բարության վրա: Աստծուն իբր Հայր ենք ճանաչում. *«Ձեզնից ո՞վ այն մարդը, «,- ասում է Նա,- որից իր որդին եթե հաց ուզի, միթե քա՞ր կտա նրան. և կամ եթե ձուկ ուզի, միթե օ՞ձ կտա նրան: Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, որքան ևս առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որոնք իրենից ուզում են» (Մատթ. 11:28-30):*

Ամեն մարդ, պետք է ունենա իր հոգու պոռթկման պահերը, որոնք ստեղծում են իրենց տաղանդավոր գործերը Աստծու ներշնչմամբ՝ ստացած մուսաների միջոցով: Գերմանացի ավետարանիչ Տիփրիք Պոնհոֆերը, որը նահատակվեց Հիտլերի օրով, ասել է·

«Հիսուս երբ կանչում է մեկին՝ նրան հրավիրում է նահատակվելու»:

Ճշմարիտ Քրիստոնյան հրավիրված է տարածելու Աստծու լույսը և աստվածային ճշմարտությունները ու դրանց միջոցով ներազդելու աշխարհի վրա: Սա այնքան էլ հեշտ գործ չէ, ինչպես թվում է: Աստված ուզում է, որ մենք հավատքով ու սիրով համագործակցենք Իր հետ: Աշխարհի զանազան երկրներում դժբախտաբար մարդիկ են մեռնում, երկրներ են ավերվում, այս ծանր պահին, այդպիսի

քաղաքակրթության դեմ կանգնած է Հիսուսի կյանք տվող կանչը. *«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք. . . (Մատթ. 11:28-30): Աստծու շնորհնքներն են՝ տեսիլք, լույս, պատգամ ու կոչում:* Հիսուսի հաղթական Հարությունից ծնվում է հավիտենական կյանքի տեսիլքը:

Դարեր շարունակ բազմաթիվ թշնամիների լծի տակ տառապող մեր ժողովուրդը, լավ հասկացավ Հիսուսի աստվածային լույսի ու տեսիլքի փրկարար իմաստը, արժևորեց այն ու դրանով զորացած, իբրև ամուր վահան, շարունակեց ու այսօր էլ շարունակում է իր կյանքը:

Հայ ժողովուրդը կարիքն ունի այսօր տեսիլք ունեցող երիտասարդների: Տեսիլքը տեսնվում է արթուն վիճակում: Արթուն լինել նշանակում է ֆիզիկական իմաստով ժիր, կայտառ, աշխույժ և գործոն կյանք ունենալ: Այն տեսիլքը, որ չի վերածվում կյանքի, դառնում է երազ և ինքնախաբեություն:

Իբրև հայ քրիստոնյաներ, մենք այդ տեսիլքն ունեցող, ժայռի վրա հաստատված դարավոր Եկեղեցու և հերոսական ժողովրդի հավատարիմ զավակները լինելով, շարունակենք իրականացնել մեր նախահայրերի երազն ու տեսիլքը: Ձեռք-ձեռքի, սիրտ սրտի տված փնտրենք բարին ու գեղեցիկը և Աստծու կողմից մեզ տրված բոլոր շնորհները օգտագործելով, ծաղկեցնենք ու պայծառացնենք Հայաստանյայց առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու Մայր Հայրենիքը: Ամեն:

ՔՐԻՍՏՈՍԻՆ ՄԻԱՆԱԼ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՆՐԱՆ ՈՒՆԵՆԱԼ ՄԵՐ ՄԵՋ

«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ. և հիմա ամեն ինչ նոր եղավ» (Բ. Կորնթ. 5:17):

Պողոս Առաքյալը հոգևոր իմաստով նոր մարդ դառնալու իրողությանը անդրադառնալով, Կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում ասում է, որ դրա միակ ճանապարհը Քրիստոսին միանալն է, այսինքն՝ ըստ նրա վերանորոգության ընթացքը մարդու կարողությունից բարձր է: Հնարավոր է վերանորոգվել, միայն հույսը դնելով մեր Տիրոջ վրա: Այս փոփոխությունը, լինի դա սովորություն և կամ թե բնավորություն, կարելի է փոխել միայն միանալով Հիսուսին:

Հարց է առաջանում, թե՝ *«Մարդու բնավորությունը կփոխվի՞»:*

Այս հարցը միշտ էլ հուզել է բոլորիս և ամեն անգամ փորձել ենք ինքներս պատասխանել, թե այս մասին մտածելով, ինչը կարող ենք նկատի ունենալ: Այստեղ խոսքը բնավորությա՞ն, թե՞ նկարագրի փոփոխության մասին է:

Բնական ձևով մարդիկ վախենում են վատ բնավորություն ունեցողից և փնտրում են այնպիսիներին, որոնք լավ բնավորություն ունեն, նրանց հետ ապրելու, ամուսնանալու, աշխատելու կամ նույնիսկ պարզապես խոսելու համար: Այդ է պատճառը թերևս, որ նրանք տարբերություն են ուզում տեսնել մարդկանց սովորությունների, նկարագրի և բնավորության միջև: Եթե մի սովո-

րություն երբեմն մեծ դժվարությամբ փոփոխելի է համարվում, բնավորության փոխվելուն չենք ուզում հավատալ: Երբ երկար փորձերից հետո հաջողություն չենք ունենում փոխելու մեկի բնավորությունը *«Հոգին դուրս չեկած՝ բնավորությունը դուրս չի գա»,* ասում ենք ու ստիպված հաշտվում այդ իրականության հետ:

Հատկապես մի կողակից փնտրելու ընթացքում ուշադրություն ենք դարձնում նրա բնավորությանը: *«Ինչպիսի՞ բնավորության տեր մեկն է»* հարցնում ենք հաճախ, նկատի ունենալով ենթակայի նկարագիրը: Նրանք, որոնք *«բնավորություն»-ը* և *«սովորություն»-ը* նույնացնում են, իրենց ընտրության ընթացքում չեմ մտահոգվում, մտածելով, որ դեռևս ուշ չէ դիմացինի մեջ որոշ փոփոխություններ կատարելը: Այսպիսիները, օրինակի համար իրենց ապագա ամուսնու կամ կնոջ թափթփված վիճակը տեսնելով, այնքան էլ չեն մտահոգվում ու վախենում, մտածելով, որ վերջ ի վերջո նրան *«կարող են կարգի բերել»:* Իսկ նրանք, որոնք իրենց ընտրելիք մարդու բնավորությանը նայում են իբրև արմատավորված նկարագրային գիծ, պատասխանատու մի որոշում կայացնելուց առաջ երկար բարակ հաշիվներ են անում: Այդպիսիները, ապագայի բարդությունների հեռանկարից վախենալով ասում են. *«Ո՞վ կարող է սրա հետ ապրել»* կամ *«Այս տեսակի բնավորությամբ սա ոչ ոքի հետ էլ չի կարող ապրել»:*

Չմոռանանք, որ Հիսուս, երբ ընտրեց Իր տասներկու առաքյալներին, նրանք տարբեր բնավորության տեր մարդիկ էին, սակայն մեր Տիրոջով նրանք միացան ու դարձան մեկ մարմին և մեկ ընտանիքի անդամներ, փոխելով իրենց բնավորության եւ սովորության նույնիսկ ամենավատ գծերը:

Կենդանական աշխարհին կարելի է նայել այլ տեսանկյունից, քանի որ նրանցից յուրաքանչյուրի շարժումը բնազդային է, բնավորությունը կարելի է փոխարինել բնություն բառով: Իրեն խնամող ու կերակրող անձնավորության վզին ևս կարող են փաթաթվել մի օձ՝ նրան խեղդելու համար: Այստեղ օձը իր բնությունն է, որ իրագործած է լինում և ոչ թե ապերախտ է գտնվում: Կամ վագրը, երբ թաթով հարվածում է իրեն խնամող մարդուն, իր բնության հարազատ մի շարժումն է, որ իրագործած է լինում և ոչ թե երախտագիտության պակաս է ցուցաբերած լինում իր տիրոջ նկատմամբ: Սակայն խելք ունեցող մարդու պարագային՝ նույնը չէ: Նկարագրային գծերի անփոփոխելիությանը ակնարկելով, խոսակցական լեզվի մեջ ասում ենք. *«անցել է արյան մեջ»:*

Բնազդաբար իր կյանքը դասավորող կենդանին չի կարող իր բնությունը չիրագործել:

«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ. և հիմա ամեն ինչ նոր եղավ»:

Ամեն մարդ ինքն իր կյանքի օրինակով կարող է վկայել, թե անկարելի են ջնջել որոշ կարգի սովորություններ: Երբ փորձում ենք խրատել նրանց մոռանալու դրանցից ամենավտանգա-

վորը, նրանք այսպես են արտահայտվում. *«Մյուս բոլոր սովորությունները պատրաստ ենք մոռանալու, բայց այս մեկը չենք կարող...:* Նույնիսկ վտանգավոր վիճակին ծանոթ լինելով հանդերձ, նրանք չեն կարողանում բաժանվել դրանցից: Ավելի վճռական երևալու համար նրանք ասում են, *«Ամեն ինչ մի կողմ դա մի կողմ»,* ցույց տալու համար թե իրենք ինչքանով են կապված այդ մոլության: Կամ իրենց խրատող անձին վերջնական մի պատասխան տալու նպատակով, ասում են, *«Ի զուր տեղը մի՛ փորձիր՝ իմ ձեռքը չէ»:*

Եփրեմ Խուրին ասում է. *«Սովորիր յուրաքանչյուր մարդու մասին բարին խոսել, իսկ քեզ նվաստացնել: Դրանում է մեծ խոնարհությունը, որը դժոխքից հոգին է բարձրացնում, կրքերն է հատում ու հաղթական զենք է սատանայի դեմ»:*

Երբեմն մարդիկ դժբախտաբար ոչ միայն իրենց վատ սովորությունները չեն ուզում վերացնել, այլ իրենց գործը թողած, զբաղվում են չարախոսությամբ, բամբասանքներով ու ինչպես ժողովուրդն է ասում *«սրա նրա միսը ծամելով»:* Մի խոսքով ոչ այն գործով, որն իրենց է վերաբերում:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Արևելքում մի թագավոր նկատում է, որ իր պալատականներից մեկը շարունակ չարախոսում է իր պաշտոնակիցների մասին: Որոշում է պատժել: Կանչում է նրան իր մոտ ու ասում.

- Վերցրու յուղով լիքը այս ամանը և առանց մի կաթիլ իսկ թափելու, շրջիր քաղաքում, եթե չկատարես՝ մահապատժի կենթարկվես:

Պալատականը դողահար, վերցնում է յուղով լի ամանը և երկու սուսերակիր զինվորների առաջնորդությամբ, սկսում է մեծ զգուշությամբ քայլել քաղաքի փողոցներով ու շուկաներով: Մի քանի ժամեր տևող պատիժը հաջողությամբ է վերջանում:

Պալատականը առանց մի կաթիլ իսկ յուղ թափելու վերադառնում է պալատ:

- Ի՞նչ կա չկա քաղաքում,- հարցնում է թագավորը, ո՞ւմ տեսար…:

- Ոչ մեկին, Տեր իմ, մարդ չտեսա:

- Ինչպե՞ս թե մարդ չտեսար, ամբողջ քաղաքը եռուզեռի մեջ է և համարձակվում ես ասել, թե մարդ չտեսա՞ր,- բարկանում է թագավորը:

- Ուշադրությունս կենտրոնացրած լինելով միայն ամանի վրա, չկարողացա նկատել անցորդներին,- պատասխանում է պալատականը;

- Լավ ասացիր,- ավելացնում է թագավորը,- սրանից հետո ուզում եմ, որ ուշադրությունդ կենտրոնացնես միայն քո գործերի վրա, ինչպես կենտրոնացրել էիր ամանի վրա ու երբեք ուրիշներով չհետաքրքրվես»:

Քրիստոսի հետ միացումը, սակայն, ենթադրում է մի նոր ընթացք, որի մեջ մեծ դեր ունի աստվածապարգև կամքը: Մարդը անասունից տարբերելու կարևորագույն կետերից մեկը արդարորեն պետք է նկատել Աստծու կողմից մարդուն տրված կամքը: Կարիճին ինչքան էլ *«բարի»* նկատենք իր հանդարտ վիճակից դատելով, միշտ հավանականություն կա, որ նա հանկարծ ցատկի ու խայթի; Մեր բնավորությունները արմատացած են մեր մեջ և այնպես են կպել մեզ, կարծեք մեր մորթի գույնը լինեն:

Կասկածից դուրս է, որ Քրիստոսի հետ միացման հիմնական և կարևորագույն կետերից մեկը՝ աղոթքն է, իբրև Աստծու կողմից տրված կամքի զորացման միջոց:

Երբ վատ բնավորությանդ հզոր ուժի դիմաց զգաս, որ խեղճանում ես և չես կարողանում քեզ տիրապետել, մի' հուսահատվիր և մի' թող քեզ բախտի քմահաճույքին, ասելով. *«Ի՞նչ ուզում է թող լինի, էլ չեմ կարողանում դիմանալ»:* Միշտ հիշիր, որ արժեքավոր մեկն ես և այն կյանքը, որ պարգևած է քեզ, պետք է ապրես արդար ու մաքուր կյանքով, օգտագործելով այն բոլոր բարիքները, որոնք Աստված տվել է քեզ և աղոթքի միջոցով կամաց-կամաց միանալով Հիսուս Քրիստոսի հետ, պիտի կարողանաս դուրս հանել քո միջից բնավորությանդ ամենավատ գծերը, մաքրելով քո հոգեկան աշխարհն ու վստահ եղիր, որ խիղճդ անպայման հանգիստ կլինի և կյանքդ դրախտի կվերածվի: Ամեն:

ՀԻՍՈՒՍ ԿՅԱՆՔ Է

«Ինձ համար կյանքը Քրիստոս է, և ուստի մեռնել այդ կյանքը շահել է նշանակում»

(Պողոս Առաքյալ)

Սխալված չենք լինի, եթե ասենք, թե այսօր աշխարհում հոգևոր քարոզչությունը չափից ավելի էժան միջոց է դարձել: Բոլորն անխտիր, լինեն դրանք՝ կազմակերպություններ, միություններ, վաճառականական հաստատություններ, մեկը մյուսից առաջ անցնելու մղումով, հասկանան կամ չհասկանան, նույնիսկ վախով, ուժ են տալիս քարոզչության մեքենային, որը երբեմն համարվում է *«Անկարողություն»:*

Պողոս Առաքյալի նամակներից մեկում, հանդիպում ենք հետևյալ տողին, որի մեջ լավը, գեղեցիկը ընտրելու համար նա նույնիսկ դիմում է Աստծուն. *«Եվ ահա այս աղոթքն եմ անում. թող ձեր սերը ավելի ու ավելի առատանա գիտության և ամենայն իմաստության մեջ, որպեսզի դուք լավն ընտրեք, հաստատուն մնաք և առանց գայթակղության լինեք Քրիստոսի օրվա համար լցված արդարության պտուղներով…» (Փիլ. 1:9-10):*

Պարզ մի նամակ գրողի մոտ չեմ կարծում, որ հանդիպեք անկեղծ ու սրտից բխած հոգով գրված մի այսպիսի արտահայտության, ուղղված հարազատին, ընկերոջը կամ նույնիսկ անծանոթին, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այսօր գրեթե ամեն բան հիմնված է շահի վրա և մարդը կարծես կորցրել է իր արժեքը:

Առաքյալը Փիլիպպեցիների Եկեղեցու հավատացյալներին է ուղղում այս տողերը, ուր աղոթում է, որ նրանք ձգտեն գեղեցիկին և կարողանան ընտրել լավը: Ինչ սքանչելի է աղոթել, որ Աստված տվյալ անձի սերը աճեցնի աստվածգիտությամբ ու գեղեցիկ շնորհքով օժտի նրան, որպեսզի նա կարողանա ընտրել լավը.

«Ձեզ բոլորիդ համար աղոթում եմ խնդությամբ՝ առաջին օրվանից մինչև այժմ Ավետարանին ձեր ունեցած մասնակցության համար» (Փիլ.1:4-5):

Կարդացել, լսել կամ գրել ենք *«Ավետարան«, «Ավետարանչություն», «Ավետարանական»* բառերը: Սրանք հաճախ գործածվող բառեր են, սակայն նրանց իմաստը մեր ուշադրությունից դուրս է մնում, երբ չենք հասկանում, թե դրանք ի՞նչ են նշանակում: Ավետարանել՝ նշանակում է բարի լուր բերել, իսկ ավետարանչություն՝ բարի լուրի քարոզչություն: Այսօր, մենք՝ քրիստոնյաներս, իբրև հավատացյալներ, գրեթե ոչ մի բանի մաս չենք կազմում, որը քրիստոնյա անհատի հիմնական առաքելությունն է, այսինքն՝ ճշմարիտ հավատքի մասին իմանալ և բացատրել մեկ ուրիշին, քրիստոնեական կյանքի ճշմարտությունները սովորեցնել մեր նմաններին ու մանավանդ՝ վկայել Հիսուս Քրիստոսի մասին: Ահա այս կետը կարելի է համարել մեր ժամանակների քրիստոնեական կյանքի մեծագույն թերությունը: Այս է պատճառը, որ բոլորս էլ զարմանքով լսում ենք թե զանազան աղանդների հետևորդներ ինչ մոլեռանդությամբ են կատարում իրենց քարոզչությունը դռնից դուռ ընկնելով: Ինչո՞ւ ենք զարմանում, պատճառը ի՞նչ է, հարցրե՞լ ենք: Պատասխանը պարզ է. --

որովհետև մենք իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սուրբ Ավազանում մկրտված ու դրոշմված զավակներ, թերանում ենք մեր քարոզչական գործի մեջ: Ոչ միայն մեր իմացածը չենք ուզում փոխանցել մեր նմաններին ու մեր զավակներին, այլև չենք փորձում սովորել, իմանալ, թե ո՞րն է մեր Եկեղեցու ճշմարիտ դավանությունը, ինչո՞ւ ենք քրիստոնյա, ո՞րտեղից ենք գալիս և ի՞նչ սքանչելի պատմություն ունենք և այլն: Իմանալով ու հասկանալով արդեն իսկ մենք մեզ ապահոված կլինենք այլ աղանդներին ուշադրություն դարձնելուց ու նրանց անդամները դառնալուց: Իր նամակում Առաքյալը ասում է, թե կաղոթեմ, որ ձեր սերը աճի աստվածգիտությամբ ու կատարյալ դատողությամբ, որպեսզի կարողանաք ընտրել լավին:

Առաքյալն իր նամակում շարունակում է. *«Ձեզ բոլորիդ համար աղոթում եմ խնդությամբ՝ առաջին օրվանից մինչև այժմ Ավետարանին ձեր ունեցած մասնակցության համար» (Փիլ. 1:9-10):* Գնահատում է նրանց մասնակցությունը:

Այո', նա գնահատում է նրանց մասնակցությունը իր աշխատանքին, որովհետև Քրիստոսի ճշմարտությունները քարոզելը հավաքական կազմակերպված աշխատանք է պահանջում; Անցյալում քարոզչությունը միայն Առաքյալների գործը չի եղել, ոչ էլ նրանց աշակերտների կամ քահանաների, այլ՝ բոլորի, ամբողջ Եկեղեցու: Եկեղեցու բոլոր անդամները միասնաբար վկայում էին իրենց քրիստոնեական հավատքի մասին, ոմանք իրենց կյանքով, իսկ ուրիշներ՝ նահատակությամբ: Իսկ ներկայիս այնպիսի մի վիճակ է ստեղծվել ժողո-

վրդի մեջ, թե քարոզչությունը միայն եկեղեցականի գործն է, որը սխալ մտածում է: Դա բոլորիս գործն է, հավաքական իմաստով: Եվ եթե այս մտածումով պարսպապատենք մեր քրիստոնեական հավատքի բերդը, երբ մեզանից յուրաքանչյուրը վկայի իր քրիստոնեական հավատքի մասին ամեն հարմար առիթով, ո՞ր աղանդավորը կարող է մոտենալ մեր տներին կամ անցնել նրանց շքամուտքից ու խաբվել և մոլորեցնել մեր զավակներից մեկին ու մյուսին:

Ահա նոր ժամանակների քրիստոնեական մեր կյանքի մարտահրավերը. Մասնակցել Հայ Եկեղեցին զորացնելու գործին, քարոզչության եւ բացատրության ճանապարհով: Եկեք ընդունենք այս մարտահրավերը և հավաքական ուժով վկայենք մեր ունեցած հավատքի մասին. սգավորներին տրված մխիթարական այցելու- թյունների և կամ ուրախ օրերի՝ անվանակոչության, տարեդարձների առիթով, որպեսզի այդ բարի աշխատանքի համար արժանանանք Աստծու սիրույն, գութին, ողորմության, գնահատանքին ու վարձատրության: Ամեն:

ՆԵՐԵԼՈՒ ՈԳԻՆ

«Ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համարը չափ» (Մատթ. 7:3):

«Մեծահարուստ մի մարդ տոնական առիթով ճաշկերույթ է տալիս իր տան մեջ, բարեկամների հետ ուրախանալու նպատակով: Անակնկալ ջուրը կտրվում է և Տանտերը ստիպված է լինում խնդրելու հրավիրյալներից, որ ամեն մեկը իր հետ ջուր բերի: Բարի մարդիկ ոչ միայն իրենց հասանելիք ջուրն են բերում, այլ նաև լրացուցիչ՝ չբերողների համար ևս:

Հյուրերից մեկը, որ նաև հեռու բարեկամ էր Տանտիրոջը, նրան վշտացնելու, նվաստացնելու և արհամարհելու նպատակով, մի մատնոց ջուր ձեռքը բռնած ներս է մտնում սրահ: Բնական է, բոլորը նեղվում են նրա այսպիսի վերաբերմունքից: Երբ խնջույքը ուշ գիշերին վերջանալու մոտ է լինում, Տանտերը հրամայում է ծառաներին բերել իր նվերները: Յուրաքանչյուր հրավիրյալ ստանում է ոսկի այն չափով, ինչով ջուր էր բերել, ոմանք սափորով, ոմանք տակառով և ոմանք էլ շշով: Ամենավերջում ծառաները մոտենալով մատնոցով ջուր բերող մարդուն էլ տալիս են իր բաժինը… Վերջինս զղջալով ու հասկանալով իր սխալը, մոտենում է տանտիրոջը, որպեսզի ների իրեն այդ քայլի համար, սակայն նրա խնդրանքները իզուր են անցնում»:

Այս վերջին նախադասությունը լսելով, հիմա ձեզանից շատերը կուզենան հարց տալ կամ իրենց մտքով կարող է անցնել. «*Եթե Տանտերը այդքան ներող ոգի ուներ, ինչո՞ւ չներեց աղքատ մարդուն ու առատապես չվարձատրեց նրան»:* Բնական հարց է և

ակամա ամեն մեկիս մտքով էլ կարող է անցնել: Որպեսզի ճիշտ պատասխան կարողանանք տալ հարցնողներին, այս պատմության միջոցով կարելի է զուգահեռներ անցկացնել Հիսուսի մտածումների ու ապագայի նկատմամբ՝ Նրա հեռատես արտահայտությունների միջև: Օրինակ, Ավետարանում գրված է, թե շատերը պիտի գան Վերջին Դատաստանի Օրը ու ասեն. *«Տեր, Տեր, չէ՞ որ քո անունով մարգարեացանք և քո անունով դևեր հանեցինք և քո անունով բազում զորավոր գործեր արեցինք»* (*Մատթ.* 7:22), բայց Նա պիտի ասի. *«Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՞ւ կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրենություն եք գործում» (Մատթ. 7:23):* Զղջացող հյուրի հուզումնախառն արտահայտությունները ոչ մի իմաստ չունեցան, որովհետև ճաշկորույթի ժամն ու իր կատարելիք բարեգործության ժամանակը արդեն իսկ ավարտվել էին. ահա Տանտիրոջ չներելու ձեր հարցի պատասխանը. ժամանակը անցել էր, այսինքն, ավելի մանրամասնորեն ասենք, թե ամեն բան՝ լինեն դրանք զանազան տեսակի բարեգործություններ, հիվանդների այցելություններ, կարոտյալներին օգնություններ, հարազատների միջև հարաբերություններ և կամ նույնիսկ մի պարզ խոսք, ամեն ինչ պետք է կատարվեն ու ասվեն ժամանակին, որպեսզի իրենց իմաստը չկորցնեն և արժեք ունենան:

Երկրորդ մի օրինակ ևս, ուր Հիսուս մի այլ գաղափար է տալիս մեզ. «*Մի դատեք, որ Աստծուց չդատվեք. որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. 7:1-2):* Իբրև մարդիկ, սխալական լինելով հանդերձ, հաճախ

հեղինակավոր կարծիք ենք հայտնում ծանոթ թե անծանոթ մարդկանց մասին, մանավանդ դատելով նրանց ընկերային ու բարոյական կյանքի հետ կապված հարցերը: Հակառակ նրան, որ կարող ենք ճիշտ լինել մեր արտահայտությունների և կատարած դատումների մեջ, սակայն այս դեպքում էլ մեր Տիրոջ պատվերը արգելք է հանդիսանում, չթույլատրելով քննադատել ուրիշներին;

Իր նմաններին քննադատելու մարդկային թուլությունը հայտնի է դառնում հատկապես, երբ փորձում ենք որևէ մեկին այսպիսի արտահայտություններով ողողել, թե՝ *«Ո՞վ ես դու», «Ի՞նչ արժեք ես ներակայացնում», «Ինքդ քեզ ի՞նչ ես կարծում»* և այլն. նման հարցեր ամեն ժամանակ անցնում են մարդկանց մտքից, երբ իրենք իրենց համեմատում են ուրիշների հետ, նրանց քննադատելու նպատակով: Այդպիսիների համար Հիսուս մի գեղեցիկ խոսք ունի. *«Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7:5*), այլ խոսքով, այդպիսիների համար կա նաև մի այլ պատասխան. «*Ամեն մարդ իր տեղն ու արժեքը ունի»:* Անարժեք մարդ գոյություն չունի, բացի այն դեպքում, երբ տվյալ անհատն է, որ ինքնիրեն արժեզրկում է:

Պատմության մեջ հիշված մատնոցով ջուր բերող մարդը իր արժեքը ուներ, որովհետև նա էլ Տանտիրոջ կողմից մյուս հյուրերի շարքին հրավիրված էր ներկա լինելու այդ ճաշկերույթին: Սակայն, նա' էր, որ ինքնիրեն արժեզրկեց իր անխոհեմ արարքով և անարգական վերաբերմունքով, որովհետև նրա գլխավոր նպատակն էր վիրավորել և

նսեմացնել իր բարեկամի դիրքն ու հանգամանքը, բայց հակառակը տեղի ունեցավ. ազնիվ ու բարի Տանտերը իր սիրալիր վերաբերմունքով, նրան այն վիճակի մեջ դրեց, որ նա իր իսկ ձեռքով իր հեղինակությունը ոտնակոխեց և ինչպես Հիսուս է ասում. *«Ինչ չափով որ նա չափեց իրեն ընթրիքի հրավիրող տանտիրոջը, ա'յդ կշռաչափով էլ չափվեց նրան նվիրվելիք ոսկու քանակը»:*

Սա պարզ մի օրինակ է այն վիճակին, որին դեմ հանդիման պիտի գտնվեն անհաշիվ թվով մարդիկ, երբ հասնի *«ժամանակների վերջը»*, այսինքն՝ երբ տեղի ունենա մեր *Տիրոջ Երկրորդ Գալուստը:*

Արթուն և պատրաստ են այն մարդիկ, որոնք Աստծու նկատմամբ սիրով ու հավատքով լի են և մանավանդ իրենց բարի ու արդար գործերով, պարզ ու մաքուր աչքերով են նայում աշխարհին և մարդկանց ու մեր Տիրոջ Հիսուսի պես հաղթական բացականչում են. *«Ես իմ ազնվությամբ, մաքրությամբ ու արդարությամբ հաղթեցի աշխարհին»* այսինքն՝ *«Ժառանգեցի հավիտենական կյանքը»*: Ամեն:

ՄԻՇՏ ԱՂՈԹԵՑԵՔ

«Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ» (Մարկոս 11:24)

Առօրյա կյանքում հաճախ հանդիպում ենք մարդկանց, ովքեր թերահավատ են Աստծու գոյության հարցում: Նրանց մեծամասնությունն այդպես է մտածում՝ պատճառաբանելով, որ Աստված չի լսում իրենց աղոթքները և աղաչանքները ու լքել է իրենց: Նման մարդկանց հարկավոր է ասել, որ չհուսահատվեն, քանի որ Տերը երբեք չի լքում ու չի մոռանում մեզ: Աստված մտածում է մեր մասին և անպայման մի օր կպատասխանի մեր աղոթքներին: Չպետք է երես թեքել Նրանից միայն այն պատճառով, որ մեր աղոթքների պատասխանները ուշանում են: Հիշենք թե ինչ ասաց Տերը. *»Ամեն ոք կստանա ըստ իր ունեցած հավատի»:*

Երբևէ մտածե՞լ ենք, որ այն , ինչ խնդրում ենք Աստծուց, գուցե Նրա կամքին հակառակ է, գուցե անկեղծ չեն մեր աղոթքները: Հովհաննես Առաքյալն այսպես է գրում իր ընդհանրական թղթում. *»Ինչ էլ խնդրենք ըստ նրա կամքի, Նա մեզ կլսի» (Ա. Հովհ. 5:14):* Հավատքով խնդրենք նախապես չկասկածելով, որ Աստված կլսի մեր ձայնը, քանզի կասկածելը թերահավատության նշան է: Հիսուս ասում է. *«Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ»:* Գիտակցենք, որ այն, ինչ մեզ համար դժվար ու անիրականանալի է, Տիրոջ համար հեշտ է և Նրա համար չկա անկարելի բան: Մինչև մեր խնդրելը Նա գիտի, թե ինչ է պետք մեզ և անպայման կհոգա դրանց մասին:

Համբերությամբ խնդրենք Տիրոջից, չհուսալքվենք, որ դեռևս չենք ստացել մեր խնդրածը, չդադարենք աղոթել առ Աստված, քանզի մարդը չի կարող ապրել առանց Նրա հետ հաղորդակցության: Չասենք, թե այսօր աղոթեցինք, բավական է, մի շաբաթ հետո կաղոթենք: Ամեն օր պետք է աղոթենք, որովհետև Նրա հետ կապ պահելու միակ միջոցը աղոթքն է: Աղոթքը զորացնում է մարդու սիրտն ու հոգին, ստեղծում ամուր կապ մեր և Աստծու միջև: Վստահենք մեր անձը Ամենաբարձրյալին: 12-րդ դարի մեր նշանավոր Հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալին ասում է. *«Աղոթքը հոգու սնունդն է»* և շարունակում է. *«Ձեր զավակներին աղոթք սովորեցրեք, որ վատ խոսքերին ու հահոյանքներին չվարժվեն, որովհետև մանկության ժամանակ ծնողների խրատը ավելի է դրոշմվում մանուկների մտքում անջնջելի կերպով, որի փոխարեն պիտի վարձատրվեք»:*

Հաճախ աղոթող մարդիկ համոզված են, որ աղոթքը գործածվում է միայն վճռական ու հատուկ մի նպատակի համար: Սակայն իրականությունը այդ չէ: *«Ամեն ժամ պետք է աղոթել և չձանձրանալ»:* Քննությունները ցույց են տալիս, թէե անվերջ խնդրանքներն էլ կարող են իրենց արդյունքը ունենալ. Տերունական Աղոթքում իսկ տեսնում ենք մաղթանքի պես այսպիսի մի արտահայտություն՝ *«Թող Քո կամքի լինի»:*

Թերևս սա է, որ ոմանք ուզում են ասել, երբ պաշտպանում են այն տեսակետը, թե՝ ամեն ինչը *«Թող Աստծու վրա»:*

Աղոթք նշանակում է, որ դու մենակ չես:

«Հիվանդներից մեկը մահամերձ վիճակում է լինում: Մեռնելուց մի օր առաջ նրա սնարի մոտ նստած են լինում իր կինն ու զավակները: Նա քաջ գիտեր, որ ապրելու քիչ ժամանակ ունի, այդ պատճառով էլ զգուշությամբ էր ընտրում իր բառերը ու խոսում էր փսփսալով: Թեև նա հավատացյալ չէր, սակայն իր հարազատներին հայտնում է, թե վերջերս սկսել էր աղոթել:

- Ինչո՞ւ համար ես աղոթում,- հարցնում են նրան:
- Մասնավոր մի բանի համար չէ՝ որ աղոթում եմ,- խոր շունչ քաշելով պատասխանում է նա: - Այլ պարզապես աղոթքը ինձ հիշեցնում է, թե ես առանձին չեմ»:

Այսպես է աղոթքը: Նա հիշեցնում է, որ իբրև ժամանակավոր մարդիկ այս անհուն ժամանակի ու տարածության մեջ, մենք շատ փոքր ենք, սակայն առանձին չենք, մեր աղոթքների միջոցով մեզ հետ է այս Աշխարհի Ստեղծողը՝ Հայր Աստված:

Դիմենք Աստծուն մեր նշանավոր Հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալու խոսքերով. *«Ընդունիր ծառայիդ աղաչանքները և ի բարին կատարիր իմ խնդրանքները»:* Այսինքն պետք է գիտակցենք, թե Աստված մեր խնդրանքները ծառայեցնում է բարի նպատակների համար, որովհետև այն, ինչ խնդրում ենք Նրանից, շատ անգամներ կարող է վնաս բերել մեզ. բարիքը չարիք դառնալ: Մեր Եկեղեցական հայրերից Սուրբ Հովհան Մանդակունին իր ճառերից մեկում ասում է. *«Եթե մեկը սիրով լցված աղոթի, Աստված նրան կասի. Ահա ես այստեղ եմ»: Երբ աղոթողը անկեղծ ու մաքուր արտասուքով աղոթի, երկնքի դռները*

կբացվեն ու իր ձայնը կհասնի Աստծու ականջներին (Հովհան Մանդակունի – Ճառեր): Աղոթքը նախ և առաջ պետք է լինի մեր Երկնավոր Հոր փառաբանությունը: Փառք տանք Նրան, որ մեզ պարգևել է այս գեղեցիկ կյանքը: Երբեք չդադարենք աղոթել և այն անպայման պետք է անկեղծ լինի: Չդադարենք մեր աղոթքը, որովհետև վերսկսելը շատ դժվար պիտի լինի:

Հիսուս ասում է. *«Երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցեք, որպեսզի ձեր Հայրն էլ. որ երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները» (Մարկոս 11:25):*

Աղոթքը նման է հոր և զավակի մտերմիկ հարաբերության: Ինչպես մանուկը մի բանի անհրաժեշտությունը ունեցած պահին դիմում է իր հորը, հույս ունենալով ու հավատալով, որ նա պիտի գոհացնի իր ցանկությունը և ուրախացնի իրեն, իր խնդրանքը կամ ցանկությունը կատարելով, այնպես էլ նույն ձևով, մենք կարող ենք հարաբերության մեջ լինել մեր Երկնավոր Հոր հետ, ամեն մեկս մի ակնկալությամբ, սպասումով լի, որ Նա մեր նեղության ու դժվարության ժամանակ, երբ դիմենք Նրան, հիշյալ մանուկի պես պիտի օգնի ու ուրախացնի մեզ: *«Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և նրա արդարությունը. ու այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա: Այսուհետև հոգ մի արեք վաղվա մասին, որովհետև վաղվա օրը իր մասին կհոգա, օրվա հոգսը բավ է օրվա համար» (Մատթ. 6:32-34):*

Խնդրենք Նրա անունով և պիտի տրվի մեզ: Այդ են վկայում Հիսուսի խոսքերը.

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ինչ իմ անունով Հորից ուզեք, պիտի տա ձեզ» (Հովհ. 16:23):

Խնդրենք Նրանից, որ նաև Իր սիրո հուրը բորբոքի մեր մեջ և մաքրի մեր մարմնի մեղքերը ու մեր աղոթքներն ուղղենք դեպի լույս Քրիստոսին։

Մեր ժողովրդի անմահության ճանապարհը գծվեց առաջին դարում, երբ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս Առաքյալները ցանեցին քրիստոնեական լույս վարդապետության ծիլերը, իսկ երկրորդ Լուսավորիչ Գրիգոր Հայրապետը հաստատուն հիմքերի վրա դրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կառուցելով աշխարհում առաջին Քրիստոնյա Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը։

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի զանգերը միշտ պիտի ղողանջեն, ավետելու համար աշխարհին, թե՝ հայն ապրել է, ապրում է ու միշտ պիտի ապրի իր հայրենի հողի վրա և ամենուր։ Ամեն։

«Երեկոյան դեմ, աշակերտները մոտեցան Նրան և ասացին. «Այս տեղը ամայի է և օրը տարաժամել է, արձակիր ժողովրդի բազմությունը, որպեսզի գնա շրջակա գյուղերը իր համար ուտելիք գնի»: Եվ Հիսուս ասաց. «Հարկ չկա, որ նրանք գնան, դուք նրանց ուտելու բան տվեք»: Եվ նրանք ասացին նրան. «Այստեղ ուրիշ բան չունենք, բացի հինգ նկանակից և երկու ձկից»: Եվ նրանց ասաց, «Այստեղ բերեք այդ»: Եվ հրամայեց ժողովրդի բազմությունը նստեցնել խոտի վրա, և վերցնելով հինգ նկանակն ու երկու ձկները՝ նայեց երկինք, օրհնեց, կտրեց և նկանակները աշակերտներին տվեց, իսկ աշակերտները՝ ժողովրդին: Բոլորը կերան ու հագեցան: Եվ տասներկու սակառ լիքը կտորտանքների մնացորդներ վերցրին: Եվ նրանք, որ կերան, մոտ հինգ հազար հոգի էին՝ չհաշված կանանց և երեխաներին» (Մատթ. 14:15-21):

Մեր Տերը Իր երեք տարվա քարոզչությանց ընթացքում բազմահարյուր բժշկությունների կողքին, մի քանի հրաշքներ կատարեց: Հիշենք Իր առաջին հրաշքը Կանա քաղաքում հարսանիքի ժամանակ, երբ գինին վերջացավ և Իր մոր խնդրանքով Նա ջուրը գինու փոխեց, երկրորդը՝ Հայրոսի տասներկուամյա աղջկա հարությունը, երրորդը՝ Իր մեռած բարեկամ Ղազարոսի հարությունը, ծովի վրայով քայլելը, փոթորիկի հանդարտեցումը և այլն:

Ավետարանչի այս պատմությունը Հիսուսի հրաշքներից մեկն է: Ըստ նրա Բեթսայիդայի անապատում մեկ օրվա ընթացքում առավոտից մինչև երեկո հինգ հազար հոգի էին հավաքվել լսելու

Հիսուսի քարոզությունները ու տեսնելու համար Նրա բժշկությունները։ Շտապելուց ժողովուրդը իր հետ ուտելիք չէր վերցրել։ Այս նկատի ունենալով առաքյալները Հիսուսի ուշադրությանն են հանձնում և խնդրում, որ նա ժողովրդին ազատ արձակի, որպեսզի գնան գյուղերը և ուտելու բան կարողանան գնել իրենց համար, քանի որ մոտ էր նաև գիշերը։ Հիսուս նրանց հորդորում է, որ իրենք կերակրեն ժողովրդին։ Առաքյալները զարմանում են, որովհետև իրենց Վարդապետը շատ լավ գիտեր, որ իրենք աղքատ էին և հնարավորություն չունեին այդքան մարդու ուտելիքով ապահովել։ Հիսուսի խնդրանքի համաձայն Նրա մոտ են բերում հինգ գարու հաց և ձուկ։ Մեր Տերը նայում է դեպի երկինք, աղոթում է և օրհնում հացն ու ձուկը, որից հետո առաքյալներին հրամայում է բաժանել խումբ-խումբ նստած ժողովրդին։ Ավետարանիչը ասում է. *«Բոլորը կերան ու հագեցան։ Եվ տասներկու սակառ լիքը կտորտանքների մնացորդներ վերցրին։ Եվ նրանք, որ կերան, մոտ հինգ հազար հոգի էին՝ չհաշված կանանց և երեխաներին»։* Թե ինչպես տեղի ունեցավ հինգ հազար հոգու ուտելիքով ապահովելը հինգ հացով և երկու ձկով, չորս Ավետարանիչների մոտ բացատրության ոչ մի բառ չենք գտնում, որպեսզի այդ փաստի վրա հիմնվելով կարողանանք հրաշքի ձևը բացատրել։ Ըստ ոմանց Հիսուսի ձեռքում հացն ու ձուկը երբեք չպակասեցին, այլ քանի անգամ, որ առաքյալները իրենց զամբյուղները դատարկելով Նրա մոտ վերադարձան, միշտ պետք եղածը ստացան Հիսուսից ու տարան և բաժանեցին ժողովրդին։ Ուրիշներն ասում են, թե առաքյալների զամբյուղ-

ների մեջ դրված մի քիչ հացը և մի կտոր ձուկը բազմացան ու նրանք որքան իրենց ձեռքները նրանց մեջ մտցրին, միշտ բաշխելու որևէ բան գտան և այլն։

Հավանականը առաջինն է այն պատճառով, որ Ավետարանի պատմության մեջ հիշված զամբյուղների դատարկվելը, նորից լցվելը և ուտելիքի ավելանալը։

Հոգևոր իմաստով հացը այստեղ խորհրդանշում է Աստծու խոսքը, որը աստվածային անսպառ սնունդ է յուրաքանչյուրիս համար, եթե լսենք, իրագործենք և օգտվենք նրանից։

Հիսուսի հրաշքների և բժշկությունների նպատակը մեկն էր, մարդկանց ցույց տալ, որ այդ բոլորը կատարում է ոչ թե Իր, այլ միայն Հայր Աստծու փառքի համար։

Մենք էլ իբրև Քրիստոսի հետևողներ, իբրև հայ քրիստոնյաներ, պետք է մեր բոլոր գործերը, նվիրումը, ծառայությունը, սերն ու հավատքը, ամեն ինչ կատարենք միայն Աստծու փառքի համար։ Աստված տվել է մի կյանք, որը Նրա կողմից մեզ ընծայված ամենաթանկագին պարգևն է, կյանք, որի համար, պարտավոր լինենք լցնելու իմաստությամբ, ազնվությամբ, բարի, արդար և առաքինի գործերով, խոնարհությամբ ու համեստությամբ։ *«Խոնարհվիր, որ բարձրանաս»։* Ահա Հիսուսի պատգամը, որը Նա Իր կյանքի օրինակով ցույց տվեց։ Հակառակ Աստծու Միածին Որդի լինելու հանգամանքին, Նա խոնարհվեց և լվաց Իր աշակերտների կեղտոտ ու փոշոտ ոտքերը, համեստության և խոնարհության հրաշալի օրինակ դառնալով մեզ համար։ Դժբախտաբար կան մարդիկ, որոնք իրենց կյանքում այնպիսի հպարտ

կեցվածք են ընդունում, արհամարհանքով մտածելով, թե մնացածները որևէ արժեք չունեն։ Հպարտությունը յոթը մահացու մեղքերից առաջինն է և սատանան հպարտության պատճառով մեղանչեց։ Այդպիսիները շուտ են մոռանում, որ կյանքը անցողիկ է, ամեն գեղեցկություն, հարստություն և այն ինչ որ նյութական են կորստյան ենթակա են։ Լավ կլիներ, եթե բոլոր հպարտ, եսասեր ու անազնիվ մարդիկ ուշքի գային ու աղոթեին և ամեն առավոտ Աստծուն փառք տալով ողջունեին մեկը մյուսին ու վերափոխվեին, հավատացեք աշխարհում ամեն ինչ շատ ավելի հրաշալի կլիներ։ Պողոս Առաքյալը արդարորեն և իմաստուն կերպով ասում է. *«Եթե աշխարհը շահեմ և անձս կորցնեմ, ի՞նչ կշահեմ»։* Երկնքի արքայությունը ժառանգելու համար եկեք շարունակենք մեր այս երկրավոր կյանքը բարի և արդար գործեր կատարելով։ Վստահ եղեք, որ իբրև մարդիկ մեր խիղճը հանգիստ կլինի։ Ամեն։

ՇՆՈՐՀՔՆԵՐԻ ՊԱՐԳԵՎՈՒՄ

«Թեև կան զանազան պաշտոններ, բայց բոլորն էլ Տիրոջն են ծառայում: Թեև կան գործելու զանազան կարողություններ, բայց նույնն է Աստված, որ գործում է ամեն բան ամենքի մեջ» (Ա· Կորնթ· 12:4-5):

Մարդկության համար Աստծու կազմած ծրագրի ամենակարևոր կետերից մեկը՝ աստվածային պարգևների կամ շնորհների բաշխումն է մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրը օժտված է յուրահատուկ մի պարգևով և շնորհքով: Ոմանք աշխատում են իրենց ուղեղներով, ուրիշներ՝ ավելի լավ են ձեռքի աշխատանքների մեջ· դրա համար էլ կան բժիշկներ, գիտնականներ, ուսուցիչներ, քաղաքագետներ, երկրագործներ, քարտուղարներ և այլն: Ինչպես որ Աստված ստեղծել է բնությունը, իր այլազանությամբ և ճոխությամբ, այնպես էլ Նա ամեն մեկիս տվել է տարբեր մի տաղանդ ու կարողություն, որպեսզի կարողանանք հոգալ մեր բոլոր կարիքները: Պողոս առաքյալը իր Կորնթացիներին ուղղած թղթում ասում է· *«Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով, մյուսին՝ զորավոր գործերի կարողություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիները զանազանելու շնորհ, մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին՝ լեզուների թարգմանության շնորհ: Բայց այս ամենը միևնույն Հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է» (Ա·*

Կորնթ· 12:8-11): Եթե այս բոլոր շնորհներն ու տաղանդները ճիշտ ձևով իրար մոտ գան ու համադրվեն, սովը կվերանա աշխարհի երեսից, կոտրված սրտերն ու հոգիները վերստին ուժ կառնեն և մենք կունենանք այն սիրո հրաշալի կառույցը, որը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս երկու հազար տարիներ առաջ հիմնեց երկրի վրա:

Մեզանից ամեն մեկը մի շնորհ, տաղանդ և պարգև ունի, սակայն Թարգմանիչ Վարդապետների՝ Սբ, Մեսրոպի, Սբ· Եղիշեի, Սբ· Մովսես Քերթողի, Սբ· Դավիթ Անհաղթ Փիլիսոփայի, Սբ· Գրիգոր Նարեկացու և Սբ· Ներսես Կլայեցու տոնի առթիվ մեր մտքում ծագող մի հարց է առաջ գալիս, թե՝ *«Ի՞նչ է մեր պարգևը, ի՞նչ ունենք տալիք աշխարհին, մարդկությանը ու մեր ազգին և մեր դարավոր եկեղեցուն»*:

Պատմում են, թե մեծ գիտնական՝ Էնշտեյնը շրջում էր Ամերիկայի զանազան համալսարանները խոսելու իր *«Հարաբերականության»* տեսության մասին: Մի օր, երբ նա գնում էր համալսարան, նրա վարորդը ասում է. *«Դոկտոր Էնշտեյն, ձեր այս դասա-խոսությունը այնքան եմ լսել, որ այն կարող եմ կրկնել անսխալ կերպով»:* Մեծ գիտնականը լինելով կատակասեր բնավորության տեր մի մարդ, պատասխանում է. *«Իրականում, ուր որ գնում ենք ինձ երբեք չեն տեսել, հետևաբար ճանաչող չկա, արի փոխենք մեր զգեստները և այսօր դու խոսիր իմ տեղը»:*

Այդ երեկո Էնշտեյնի վարորդը անթերի կերպով է կատարում դասախոսությունը, սակայն վերջում ներկա գիտնականներից մեկը, մաթեմա-

տիկական մի բարդ խնդրի մասին հարց է տալիս նրան: Վարորդը արթնամիտ ու պատրաստ մեկը լինելով՝ առանց ինքնիրեն կորցնելու ասում է. *«Պարոն, զարմանում եմ, որ ինձ այդպիսի պարզ մի հարց եք տալիս, դրան նույնիսկ սրահում նստած իմ վարորդը կարող է պատասխանել...»:* Այս պատմությունը ասացինք, որ մենք բոլորս էլ լավ գիտակցենք, թե ինչքան էլ ուշիմ, խելացի, տաղանդավոր ու շնորհքով մեկը լինենք, չենք կարող ուրիշ որևէ մեկին փոխարինել և ոչ էլ օգտագործել նրան տրված պարգևները: Մենք կարող ենք գործածել այն տաղանդներն ու շնորհները, որոնք միայն մեզ են տրված Աստծու կողմից:

Կրկին հարց է ծագում, թե՛ *«Որո՞նք են մեզ տրված պարգևները»:* Մեզանից ամեն մեկը կարող է տարբեր ձևով պատասխանել այս հարցին: Սակայն դրանից առաջ միշտ պիտի հիշենք, թե Աստծու աչքին բոլոր պարգևներն էլ իրենց հատուկ արժանիքներն ունեն, երբ դրանք վերադարձնենք՝ ծառայեցնելով Նրա փառքին:

Գեղեցիկ մի պատմություն կա երեք փոքրիկ ծառերի մասին, որոնցից ամեն մեկը երբ մեծանար, ցանկանում էր մարդկանց համար պիտանի մի բան դառնալ:

ԱՌԱՋԻՆ ԾԱՌԸ ցանկանում էր հղկված ու գեղեցիկ մի օրորոց լինել: Սակայն մի օր մարդիկ եկան ու նրանից ախոռի մի մսուր կառուցեցին: Անշուշտ փոքրիկ ծառը հուսախաբ էր, բայց և այնպես, մի օր Աստված Իր Միածին Որդուն դրեց նրա մեջ: Մսուրը շոյված զգաց իրեն և ասաց· «Երբեք մտքովս չէր անցնի, որ այսպիսի մի երեխա պիտի

առնեի իմ մեջ· անկասկած, ես մաս եմ կազմում մի հրաշքի»:

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՌԸ ցանկանում էր խոշոր ու կոկիկ մի նավ դառնալ, սակայն մարդիկ նրանից ձկնորսական պարզ մի նավակ պատրաստեցին: Ամիսներ անց, երբ լքված ու հուսախաբ նա առանձին էր մնացել լճի ափին, Հիսուս անունով մեկը մտավ նավակի մեջ ու այնտեղից հոգիների փրկություն քարոզեց: «Ի՞նչ հիանալի բան»,- ասաց փոքրիկ նավակը ինքնիրեն, «Երբեք մտքովս չէր անցնի, որ մի օր մաս պիտի կազմեի այսպիսի մի հրաշքի»:

Մի քանի ամիսներ հետո փայտահատները կտրում են ԵՐՐՈՐԴ ԾԱՌԸ ևս, որը մտադրվել էր մնալ իր տեղում ու ձգտում էր հասնել Աստծուն: Մարդիկ նրա կտորները իրար միացնելով կոպիտ մի խաչ պատրաստեցին: «Ի՞նչ սարսափելի բան» փսփսաց փոքրիկ ծառը ինքնիրեն· «Որևէ մեկին պիտի խաչե՞ն»: Եվ իսկապես էլ մի օր զինվորները Հիսուս Քրիստոսին բերեցին ու խաչեցին: Միակ բանը, որ այս ծառը լսեց խաչվողից, ներողամտության և խաղաղության խոսքեր էին: «Ի՞նչ հրանալի բան»,- խոսեց ծառը ինքնիրեն, «Ես մասնակից եմ դառնում կատարվող մի հրաշքի· Երբեք մտքովս չէր անցնի, որ ես այս ձևով պիտի ձգտեի հասնել Աստծուն»:

Աստվածային պարգևներ ու ծառայություն, այս երկուսը դնել ճիշտ ուղու վրա, ահա այս է, որ թելադրում է մեզ Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր առաջին թղթում· *«Ինչպես մեկ է մարմինը և ունի բազում անդամներ, և մարմնի այդ բազում*

անդամները բոլորը մեկ մարմին են, այնպես էլ Քրիստոս: Քանզի մեկ Հոգով մեկ լինելու համար մկրտվեցինք մենք ամենքս··· և բոլորս էլ այդ մեկ Հոգին խմեցինք» (Ա» Կորնթ· 12:12-13):

Մեր սրբազան Թարգմանիչների հիշատակը, որ ամեն տարի տոնում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, անմահացումն ու պանծացումն է Եռամեծար Վարդապետների այն խմբի, որոնք իմացան, ըմբռնեցին, գեղեցկապես թարգմանեցին Աստծու զորության իմաստը, նրանց, որոնք գիտակցեցին իրենց աստվածատուր շնորհներն ու տաղանդները ի սպաս դնել մեր ժողովրդին ու նրա մշակութային գանձարանին՝ Ամենաբարձրյալի փառքի համար: Այդ սրբազան նվիրյալներն ու Թարգմանիչները լավ գիտեին, թե երբեք ներելի չէր, եթե իրենց տրված տաղանդը օգտագործել միայն իրենց անձի համար, մնասների առակում հիշված մի դրամ ստացող հերոսի նման, որը փոխանակ օգտագործելու իրեն տրված գումարը, այն պահում է թաշկինակի մեջ. *«Տեր, ահա քո մնասը, որ թաշկինակի մեջ ծրարած պահում էի. վախենում էի քեզանից, որովհետև խիստ մարդ ես, վերցնում ես ինչ որ չես դրել, և հնձում ես ինչ որ չես սերմանել»:* Ինչ գլխիվայր և բացասական ըմբռնում Աստծու կողմից մեզ վստահված տաղանդների ու շնորհների օգտագործման: Եվ ահա Տիրոջ պա-տասխանը. *«Հենց քո բերանով քեզ պիտի դատեմ, անհավատարիմ ծառա. գիտեիր, որ ես մի խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ չեմ դրել, հնձում եմ, ուր որ չեմ սերմանել: Հապա ինչո՞ւ իմ դրամը լումայափոխներին չտվիր, որպեսզի ես, գալով, տոկոսներով միասին պահանջեի այն:*

Վերցրեք դրանից մեկ մնասը և տվեք նրան, ով տասը մնաս ունի: . . Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի» (Ղուկ. 19:20-27):

Կյանքը, առ և տուր է. Հայր Աստված տալիս է, սակայն միաժամանակ ակնկալում է տեսնել դրա արդյունքը:

Աստված մեզ բոլորիս օժտել է զանազան շնորհներով ու տաղանդներով. ոմանց շատ, իսկ ոմանց՝ քիչ: Կարևորը քանակը չի, այլ օգտագործման ձևն ու եղանակը; Մեր կողմից ճակատագրական սխալ պիտի լինի խոստանալ Աստծուն Իր կամքը կատարել վաղը, երբ մենք մեր լավագույնը կարող ենք կատարել այսօր:

Սբ· Սահակ Հայրապետն ու Սբ· Մեսրոպ Մաշտոց Վարդապետը հիմնեցին հայ մշակույթի ոսկեդարը: Հայ գրի և մշակույթի չգոյության հետևանքով, հայ մշակույթի անկախությունը վտանգված էր: Այս անփառունակ վիճակից ազատվելու միակ լուծումը հայ գրականության ու մշակույթի ստեղծումն էր: Այդ մեծ պատվին արժանանալու համար պարտական ենք հայ ժողովրդի հանճարեղ զավակ և անդրանիկ ուսուցիչ Սուրբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետին, որը 405 թվականին Աստծու նախախնամությամբ կատարեց հայ գրերի գյուտը, Սուրբ Սահակ Հայրապետի և Վռամշապուհ թագավորի օժանդակությամբ: 406 թվականին Սուրբ Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի գոյությունը դնում էր ամուր հիմքերի վրա:

Հինգերորդ դարում հիմնվեց հայ մշակույթի ոսկեդարը, Սուրբ Գրքի հրաշալի թարգմանությամբ:

Հայ եկեղեցին դարերի ընթացքում եղավ մեր մշակույթի պահպանման ու տարածման լուսավոր օջախը: Այսպիսով հավատքն ու մշակույթը դարձան մեր ժողովրդի գոյությունն ու ինքնությունն ապահովող հոգևոր զենքերը և հայ մարդու անառիկ բերդը:

Այսօր Սփյուռքի բոլոր տարածքներում ցրված մեր ժողովուրդը ապրում է օտար մշակույթների և լեզուների ազդեցության տակ; Այս դժվարին պայմաններում ավելի քան երբեք հայ մարդը պարտավոր է պահել իր հավատը, լեզուն, ավանդությունն ու մշակույթը:

Մշակույթը հզոր ուժ է, տնտեսականին և զինվորականին հավասար: Այն չպետք է սակարկության դրվի նյութական հաշիվներով: Որով, ժամանակն է, որ հայ մարդու հոգուց հանենք անազնիվ ու անարդար լինելու զգացումը և տանք նրան Թարգմանիչ Վարդապետների հպարտությունն ու արժանավորությունը, որոնց դարերի խորքից եկող կանչն է այսօր՝ լինել արթուն, հոգատար հայ մշակույթի և հայ հոգևեր արժեքների նկատմամբ: Վաղը ուշ կլինի:

Որպես ջահակիրներ ոչ միայն պետք է պահպանենք ու վառ պահենք մեր Թարգմանիչ Վարդապետների լուսափայլ հիշատակը, այլև հայ մշակույթի ու մատենագրության գանձատուփի մեջ ավելացնենք մեր համեստ, անշահախնդիր ու անսակարկ ծառայությունը: Ամեն:

Ո՞ՒՐ Է ՁԵՐ ՀԱՎԱՏՔԸ
(Ղուկաս 8:25)

Այս խոսքը Հիսուս արտասանեց, երբ Իր աշակերտների հետ նավակով անցնում էր ծովակի մի ափից մյուսը: Եվ երբ Նա հոգնած լինելով, քնած էր նավակի մեջ, սկսվում է ուժեղ փոթորիկ ու նավակը լցվում է ջրով: Վտանգը մեծ էր և կարող էր այն խորտակվել: Աշակերտները վախեցած ձայն են տալիս Հիսուսին. *«Վարդապե՛տ, վարդապետ, ահա կորչում ենք» (Ղուկ. 8:24):* Հիսուս արթնանում է, նկատում ծովակի փոթորիկն ու աղմկահույզ ալիքները և հրամայական շեշտով ասում. *«Դադարի՛ր, խաղաղվի՛ր»* ու ալիքները հնազանդվելով Նրան՝ հանդարտվում են: Ապա դառնալով Իր աշակերտների կողմը հանդիմանական շեշտով ասում է. *«Ո՞ւր է ձեր հավատքը» (Ղուկ. 8:25):*

Առաքյալները, որոնք հարյուրներով հիվանդների, ախտավորների ու դիվահարների բժշկություններ էին տեսել Հիսուսի կողմից, չէին սպասում, որ ալիքներն ու փոթորիկն էլ կարող են Նրան հնազանդվել և զարմացած ասում են. *«Ո՞վ է արդյոք սա, որ հողմերին ու ջրերին անգամ հրաման է տալիս, և դրանք հնազանդվում են սրան» (Ղուկ. 8:25):*

Աստվածորդու այս հարցը երկու հազար տարիներ հետո այսօր ուղղված է նաև մեզանից նրանց, որոնք իրենց հույսը, հավատն ու վստահու-թյունը կորցրել են Աստծու նկատմամբ:

Մեր Եկեղեցու մեծագույն հայրերից՝ Հովհաննես Երզնկացին, որը կարճահասակ լինելու համար *«Պլուզ»* մականունն է ստացել, ասում է. *«Հավատքը*

լուսեղեն ամպերի անմարմին պարանն է Աստծու կողմից երկնքից իջած մարդկանց համար: Հավատքը մարդու սրտում արմատացած տունկն է, որի արմատը՝ Հայրն է… ոստը՝ Որդին,.. ծաղիկը՝ Սբ. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետև պտուղը արմատից, ոստից ու ծաղիկներից է առաջ գալիս, ինչպես բարի գործերը՝ հավատքից»:

Կյանքը պայքար է եղել բոլոր ժամանակներում: Այդ պայքարից հաղթանակած են դուրս եկել նրանք, որոնք ճշմարիտ ու գիտակից հավատք են ունեցել. *«Ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին»,- ասում է Հովհաննես Առաքյալը. «Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը: Եվ ո՞վ է, որ հաղթում է աշխարհին, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն է Աստծու որդին» (Ա. Հովհ. 5:4-5):*

Այս հրաշքի մեջ երկու կարևոր կետեր կան.-

Առաջինը՝ դժվարությունների ու նեղությունների ժամանակ ապավինել և հույսը դնել Աստծու զորության վրա: Այս ներկա կյանքը լի է զանազան տեսակի դժվարություններով ու փորձություններով, սակայն, դժբախտաբար, մարդիկ, Աստծու հզոր զորությանը ապավինելու փոխարեն, դրանք փորձում են հաղթահարել իրենց անձնական միջոցներով կամ բարեկամների օգնությամբ: Երբ ծովակը փոթորկվեց, առաքյալները փորձեցին ամեն գնով դրությունը փրկել, սակայն, երբ տեսան, թե անկարելի է, այն ժամանակ միայն Հիսուսին դիմեցին: Այսօր, քսանմեկ դարեր հետո պատկերը չի փոխվել՝ նույնն է: Երբ հաջողության ու պատվի ամենաբարձր

կետում ենք գտնվում, մոռանում ենք, որ այդ բոլորին հասել ենք Աստծու շնորհիվ ու փառք չենք տալիս Նրան, իսկ, երբ մի փոքր նեղություն ու ծանր օրեր ենք ապրում, անմիջապես սկսում ենք պատճառը փնտրել վերևում ու ամեն բանում մեղքը գցել Նրա վրա: Պետք է միշտ փառք տանք Աստծուն, թե՛ հաջողության և թե՛ ձախորդության ժամանակ՝ մեր ամենօրյա աղոթքի միջոցով:

Երկրորդ՝ եթե մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հետ ենք, երբեք չպետք է վախենանք, քանի որ Նա միշտ մեր պաշտպանն ու ապավենն է:

Երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը այսպես է արտահայտվում հավատքի մասին.

«Ապրելու համար պետք է հավատանք կյանքի էության և նորա նպատակին: Նա մեր ձգտումն է, մեր տենչը դեպի բարձրագույնը, մեր համոզումն է թե իզուր չենք ապրում, թե չպիտի կես ճանապարհին մնանք, այլ պիտի հասնենք լուսո փարոսին՝ նույնիսկ մեր ալեկոծ կյանքի փոթորիկներից հետո: Հավատը անհատին, ազգության ու մարդկության դեպի հավիտենականություն է տանում»:

Իրապես հավատքը իմաստուն անձերի փնտրած հազվագյուտ քարն է: Առանց հավատքի կյանքը աննպատակ կդառնա: Շատ անգամներ իմ երեսուն տարվա քահանայական փորձառությամբ հետևել եմ մարդկանց, որոնք կյանքի նկատմամբ լցված են եղել ժխտական զգացումներով կամ դառնությամբ, ինչ հարց ուզում ես տուր նրանց, մեկ է միայն բացասական պատասխան կստանաս. դժբախտաբար նրանց մեջ երիտասարդներ էլ կան,

որոնք դեռ նոր կյանք են մտնում: Ես միշտ դեմ եմ եղել այդպիսիների մտածելակերպին, քանի որ հակառակ երբեմն կյանքի հարվածներին, միշտ էլ լավատես եմ եղել ու եմ մինչև այսօր և ամեն օրվա մայրամուտին, փառք եմ տալիս Աստծուն ու աղոթքով հաջորդ օրվա առավոտը տեսնում եմ ավելի լուսավոր և պայծառ: Նույնը կարող եք անել բոլորդ, որովհետև ամեն ինչ գալիս է հավատքի պակասից: Հավատքով աղոթքն է, որ մեզ կապում է Աստծու հետ:

Շատ շատերը զբաղված լինելով ամենօրյա հոգնեցուցիչ գործերով, մոռանում են փառք տալ Աստծուն, իրենց Արարչին, ու վազում են, վազում խելակորույս, շատ անգամ իրենք էլ չիմանալով, թե ո՞ւր: Սա գալիս է հավատի պակասից: Նա է, որ մեզ կապում է Աստծու հետ ու նրանով մեր մեջ հաստատվում է Աստծու երկյուղը, որն իմաստության սկիզբն է: Լինել հայ քրիստոնյա և այս ձևով չմտածել ու չգործել, նշանակում է դադարել Հիսուսին հետևող լինելուց: Իբրև մարդ, բնական է, որ միշտ ակնկալիքներ կարող ենք ունենալ դիմացինից, բարեկամից ու ընկերոջից: Սակայն ինչո՞ւ չմտածենք, որ նույնը կարող են ունենալ նաև նրանք: Հիսուս հստակ կերպով հասկացնում է մեզ կյանքի ոսկյա օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթ. 7:12):*

Իրապես ճշմարիտ է, որ հավատքը զորացնում է մարդուն, ուժ տալիս ու ամրացնում նրա կամքը: Մեր ապրելակերպն ու գործերը պիտի լինեն մեր հավատքի հայելին, որովհետև *«Ինչպես որ*

մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակոբոս Առաք. 2:26), ասում է Հակոբոս Առաքյալը:

Ալեկոծության և հանդարտության բոլոր պարագաները կարելի է գեղեցիկ կերպով համեմատել կյանքի պայքարի հուզումների հետ, որոնք ոչ թե մեր մարդկային ուժերով, այլ Աստծու օգնությամբ կարող ենք միայն ու միայն հաղթահարել:

Այսօր էլ Հիսուս կարող է հարցնել մեզանից յուրաքանչյուրին, թե՝ *«Ո՞ւր է մեր հավատքը», «Ինչո՞վ ենք ցույց տալիս այն», «Ինչպե՞ս կարող ենք ապացուցել, թե հավատք ունենք»:*

Հավատքի գործերը իմաստավորվում են սիրո մեջ: Սերը միայն խոսքով ու լեզվով չի, այլ առաջին հերթին գործով ու ճշմարտությամբ: Հովհաննես Առաքյալը մեզ սովորեցնում է, թե՝ *«Որդյակներ, խոսքերով և լեզվով չսիրենք, այլ՝ գործով և ճշմարտությամբ» (Ա. Հովհ.3:18):* Սուրբ Պատարագի կամ մի որևէ արարողության ժամանակ, եթե մի անծանոթ Եկեղեցի մտնի, դժվար թե կասկածի մեր հավատքի ու իրար հանդեպ ունեցած սիրո վրա: Բայց արդյոք նույնը կմտածի՞, երբ մեզ տեսնի Եկեղեցուց դուրս, մեր առօրյա գործերով զբաղված: Միթե՞ սերն ու խաղաղությունը ապրում են միմիայն եկեղեցու պատերից ներս:

Մեր Հայրապետները մեծապես պայծառացրին մեր Եկեղեցին, ստեղծելով սեփական գիր, ազգային գրականություն և մշակույթ: Գրվեցին եկեղեցական երգեր, շարականներ և աղոթքներ, որոնք մեր եկեղեցու անգին գանձերն են կազմում մինչև

այսօր։ Հայը կարողացավ իր սրբությունները պահել, քանի որ իմացավ զոհվել իր հավատքի համար։

Հաղթանակի հասնելու համար երբեմն կարող ենք ծանր փրկագին վճարել՝ նույնիսկ հրաժարվելով այն ամեն ինչից, որոնք թանկ են եղել ու են մեզ համար, մեր միջի հին մարդուց... հարստություն, ունեցվածք, փառք, գուցե նաև մեր կյա՞նքը։ Հրաժարվել անվերադարձ, անսասան հավատքով և հույսով։

Գերշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանը իր խոսքում ասում է.

«Կեանքի մէջ մեզմէ իւրաքանչիւրի խօսքն ու գործը հաւատքի արտայայտութիւն մըն է։ Անոնք, որոնք ծառայութիւն մը կը բերեն մարդկութեան, աշխարհի խաղաղութեան, իրենց եկեղեցւոյ, դպրոցին ու մշակոյթի տան, այդպիսիները հաւատքի գործ մըն է որ կը կատարեն։ Այլ խօսքով կը դառնան Աստուծոյ գործակից»։

Եւ շարունակում է.

«Իւրաքանչիւրիս մէջէն Աստուած ինքն է որ կը խօսի, եթէ անշուշտ հաւատքի կեանքը մեռած չէ տուեալ անձի մօտ։ Իսկ եթէ տուեալ անձը կ՚ապրի հաւատաւոր կեանք մը, ապա ան ոչ միայն հաւատքի վկայութիւններով կը դրսեւորէ իր կեանքը, այլ աւելին՝ հոգեւոր կեանքի սնունդ կը բաշխէ նաեւ դիմացինին»։

Մենք այսօր ռազմի դաշտում չենք, սակայն ժողովրդական առածն ասում է, թե՝ *«Կյանքը արդեն իսկ ինքնին պատերազմ է»։*

Պատերազմ աշխարհի չար ուժերի, փորձիչի, մեղքերի, տեսանելի ու անտեսանելի բազմաթիվ

թշնամիների դեմ: Եվ մարտի, կռվի սկզբունքն ու ոգին նույնն է, հավատք հաղթանակի համար:

Ես հավատում եմ, որ մեր հավատքն ու կենդանի գործը իրարից անբաժան կօգնեն մեզ դիմագրավելու կյանքի ցանկացած փոթորիկ ու ավերիչ հողմ, հասնելու համար խաղաղության և անմահության մեր նավահանգիստը: Եվ երբ մի օր, մեր Տերը գա, և ասի, թե՝ *«Ո՞ւր է ձեր հավատքը»*, եթե պատրաստ լինենք, մեծագույն ուրախությամբ և ինչո՞ւ չէ նաև հպարտությամբ պիտի պատասխանենք.

«Տեր, մենք մեր հավատքը գործով ենք ցույց տվել, աղոթքով, սիրով ու համերաշխությամբ, եկեղեցական թե ժողովուրդ, ձեռք-ձեռքի տված, ամեն ձևով օգտակար ենք հանդիսացել մեր դարավոր Եկեղեցու պայծառությանն ու անսասանությանը»: Ամեն:

ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ

«Պարտիզպանը իր այգում մի թզենի էր տնկել· և երբ պտղի ժամանակը հասավ, նա եկավ նրա վրա պտուղ փնտրելու ու չգտավ: Այգեգործին ասաց· «Ահա երեք տարի է, որ գալիս եմ այդ թզենու վրա պտուղ փնտրելու և չեմ գտնում· արդ, կտրիր այդ, ինչո՞ւ է հողն զբաղեցնում»: Այգեգործը, որ շատ էր աշխատել այդ ծառի վրա, խնդրում է· «Տեր իմ, նրան այս տարի էլ թող, մինչև որ նրա շուրջը փորեմ և աղբ գցեմ, գուցե թե պտուղ տա, ապա թե ոչ՝ մի տարուց հետո կկտրես այդ» (Ղուկ· 13:6-9):

Տանտերը՝ Երկնավոր Հայրն է, Պարտիզպանը՝ Հիսուս, իսկ անպտուղ թզենին՝ այն ժողովուրդն է, որը երկու հազար տարիներ առաջ ոչ միայն անտարբեր գտնվեց Նրա քարոզած Վարդապետության լույսի նկատմամբ, այլ ընդհակառակը՝ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին խաչ հանեց:

Եկեք մի պահ մտածենք այն ծառի մասին, որը պտղատու ծառերի մեջ խոշոր ու փարթամ տերևներ ունի, սակայն պտղաբեր չէ: Չե՞ք կարծում, որ այն իզուր տեղն է զբաղեցնում հողի մի մասը ու արգելք լինում, որպեսզի այլ պտղատու ծառեր, իրենց համեղաճաշակ մրգերով հարստացնեն պարտեզը ու հաճելի դառնան մարդկանց: Հիսուս ասում է· *«Եթե աղը իր համը կորցնի ոչ մի օգտակարություն էլ չունի»:* Այսպիսի անպտղաբեր ծառերը նմանվում են այն մարդկանց, որոնք պաշտոններ են ստանձնում որևէ ասպարեզում, օգտվում են, սակայն ոչ մի ձևով իւրենց նպաստը և օգնությունը չեն բերում նրանց հաջողությանն ու առաջընթացին;

Վերադառնալով առակին, այնպես է երևում թե տանտերը համաձայնվել է ծառը չկտրելու և մեկ տարի ևս խնամելու խնդրանքին, բայց թե հաջորդ տարի ծառը պտուղ տվե՞լ է, թե ոչ՝ շատ էլ կարևոր չէ, որովհետև անպտուղ թզենու առակի նշանակությունը ոչ մի ձևով չի փոխվում պատասխանը իմանալով կամ չիմանալով:

Ուրեմն, *«Ի՞նչ է սովորեցնում մեզ այս առակը»:*

Առակում պատմվածը պարզ մի խոսակցություն է այգեպանի ու իր տանտիրոջ միջև, որը կարող ենք այսօր էլ գործադրելի դարձնել: Երբ մենք օրերով, շաբաթներով, ամիսներով ու տարիներով աշխատում ենք, սպասում, որ մեր կատարած գործը իր արդյունքը տա և միաժամանակ մենք էլ օգտվենք դրանից:

Ինչպես առակից տեսանք, գործավորի պատասխանը հետաքրքրական է նրանով, որ նա թելադրում է տանտիրոջը վերջնականապես մի բան քանդելուց առաջ համբերություն ունենալ ու մի անգամ ևս փորձել:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, կարող է ինքն իրեն հարց տալ· *«Արդյոք ես մի պտղաբեր ծա՞ռ եմ իմ ընտանիքի, իմ ժողովրդի, իմ Եկեղեցու, ինչո՞ւ չէ նաև Հայրենիքի համար, թե թզենու նման անպտուղ եմ, որը արժանի է միայն կտրվելու»:* Իրականում առակը հոգևոր մի դաս է մեր ժողովրդի բոլոր զավակների համար: Խոսքը անշուշտ դրամի, հարստության և ունեցվածքի մասին չէ, այլ՝ հավատի, եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության և այդ սերն ու հավատքը շոշափելի կերպով գործի վերածելու մասին է: Դրա համար մեզանից յուրաքանչյուրը քաջությունը պիտի ունենա

հանձն առնելու այդ զոհողությունը, որով-հետև սիրո ամենացայտուն օրինակը զոհողությունն ու նվիրվածությունն են: Դպրոցն ու Ընտանիքը ինչի՞ են ծառայում, եթե չեն դաստիարակում: Գիրքը, թերթն ու հեռուստատեսությունը ինչի՞ համար են, եթե կարդացող ու լսող չունեն: Ծխական Խորհրդի, Տիկնանց, Երիտասարդաց և այլ Միություններ ո՞ւմ համար ենք, եթե նրանց ծրագրերին ու միջոցառումներին մասնակցողներ չկան:

Այգեգործի խնդրածի պես պետք է խնա-մենք, որպեսզի թզենին գոնե հաջորդ տարի պտղա-բեր լինի; Պտուղը ինքնիրեն չի հասնում, այլ մշակների ամենօրա աշխատանքի ու խնամքի կարիքն ունի:

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում քրիստոնյաներին խրատում է այս խոս-քերով· *«Հոգով եռացեք, Տիրոջը ծառայեցեք· հույսով ուրախացեք, նեղության համբերեցեք, հաճախակի աղոթեցեք··· համերաշխ եղեք միմյանց հետ· դուք ձեզ իմաստունի տեղ մի դրեք, մեկի չարի փոխարեն չար մի հատուցեք···» (Հռոմ· 12:12-21):*

Ամեն մեկս մի ծառ ենք տնկված Աստծու Մեծ Պարտեզում: Եկեղեցին փորձում է մեզ հոգեպես աճեցնել ու խնամել, մեզանից միայն սեր ու բարի գործեր սպասելով:

Եկեք այսօր հետադարձ մի հայացք նետենք ու նայենք մեր ապրած կյանքին և մեզ հարց տանք· *«Արդյոք բարի գործեր կատարե՞լ ենք, թե՝ թերացել ենք մեր պարտականությունների մեջ»:* Եթե թերացել ենք, ուշ չէ, ժամանակ ունենք, ուղղվենք ու պտղատու ծառ դառնանք, որպեսզի զորանանք և Աստծու Մեծ Պարտեզում, ուր կան հազարավոր ծառեր ու ծաղիկներ, մենք էլ մեր տեղը ունենանք և երբ մեր Տերը գա նրա վրա միշտ լիքը ու քաղցր պտուղներ գտնի: Ամեն:

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

«Որդեակ քո մեղքերը քեզ ներված են…» (Մարկոս 2:6):

Այս դեպքը տեղի է ունենում Կափառնայում քաղաքում: Երբ ժողովուրդը լսում է Հիսուսի գալու մասին, ինչպես ամեն տեղ, Նրա մոտ էին բերում զանազան հիվանդներ, որոնք բուժման կարիք ունեին: Առիթից օգտվելով Նրա մոտ են բերում մի անդամալույծի, սակայն շատ մարդ լինելու պատճառով չեն կարողանում մոտեցնել և տանիքի վրա մի անց բացելով՝ առաստաղից մահճի վրա պառկած նրան իջեցնում են Հիսուսի մոտ: Մեր Տերը տեսնելով հիվանդի ու նրան բերողների հավատքը՝ դառնում է դեպի անդամալույծն ու ասում. *«Որդեա՛կ, քո մեղքերը քեզ ներված են…»:*

Բնականորեն այնտեղ գտնվող փարիսեցիներն ու դպիրները իբրև օրենքի ներկայացուցիչներ, ընդվզում են ու բարկանում Հիսուսի այս խոսքերի վրա. *«Այս ի՞նչ է խոսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերին թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված»:* Հիսուս կարդալով նրանց մտքերը, դառնում է ու ասում. *«Ինչո՞ւ ձեր մտքում այդ եք խորհում. ո՞րն է ավելի դյուրին. անդամալույծին ասե՞լ՝ քո մեղքերը քեզ ներված են, թե՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ և գնա՛ քո տունը» (Մարկոս 2:8-9):*

Ու նայելով անդամալույծին, ասում է. *«Քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ռ մահիճը և գնա՛ քո տունը»:* Ու անդամալույծը բոլորի աչքի առջև ոտքի է կանգնում, վերցնում իր մահիճը ու քայլում դեպի տուն: Բոլորը զարմանում են կատարված հրաշքի վրա ու փառա-

վորում Աստծուն, ասելով՝ *«Այսպիսի բան երբեք չենք տեսել»:*

Ինչպիսի՞ դաս կարող ենք քաղել Մարկոս Ավետարանչի այս պատմությունից: Անշուշտ, ներկայացվածը բժշկությունից ավելի շեշտում է, թե Հիսուս օժտված է աստվածային կարողությամբ և թե՝ Նա Աստված է: Ինքը՝ մեր Տերը, գործնականում վկայում է այս մասին, քանի որ տեսնելով անդամալույծի ու նրան բերողների հավատքը, առանց հարցնելու բուժում է նրան:

Հավաքական կյանքում, երբ ապրում ենք միասին իբրև նույն Եկեղեցու ու ժողովրդի զավակներ, առավելապես հավատքը մնում է ամենակարևորը: Քրիստոնեական Եկեղեցին խարսխված է հավատքի հիմնաքարի վրա: Եվ երբ հավաքվում ենք Եկեղեցում, անպայման կարիքը չունենք շոշափելի կերպով դեմ առ դեմ տեսնելու Աստծուն, բավական է միայն, որ հավատք ունենանք: Արդեն հավատալ նշանակում է տեսնել ու զգալ, հասկանալ ու ճանաչել Աստծուն:

Ինչպե՞ս կարելի է բնորոշել հավատքը.

ա. Հավատքը մարդուն Աստծու հետ կապող կամուրջն է՝ աղոթքի միջոցով.

բ. Հավատքի մեջ աճող ու մեծացող զավակները իրենց մեջ գտնում են Աստծու երկյուղն ու իմաստությունը, որին իբրև արդյունք ընտանիքը ուժեղանում է բարոյական ամուր հիմքերի վրա:

գ. Հավատքը ներքին մի այնպիսի ապրում է, որը չափ չունի: Երբ հավատում ենք, այն ժամանակ զգում ենք, թե ինչքան հարուստ ենք հոգեպես և

ավելին՝ Աստծու ներկայությունն ենք տեսնում մեր ամեն մի քայլում, խոսքում ու գործում:

«*Առանց հավատո չկա բժշկություն, բարոյական բժշկություն, ո՛չ հիվանդ անհատի, ո՛չ հիվանդ ազգի և ո՛չ հիվանդ մարդկության համար… Առանց հավատի կյանքը դատարկություն է, հուսահատություն և մահ» Նա ծակ կարաս է՝ առանց կարող լինելու բովանդակություն պահելու: Ապրելու համար պետք է հավատանք կյանքի էության և նորա նպատակին:… Հավատը անհատին, ազգության և մարդկության դեպի հավիտենականություն է տանում: Ով չի հավատում հավիտենականության, նա մեռած է արդեն, մեռած է ոչ միայն մարմնով, այլ նաև հոգևոր և երանավետ կյանքի համար»,*- ասում է անցյալ դարի մեր լուսամիտ Կաթողիկոսներից Գարեգին Հովսեփյանցը:

Հրաշալի և իմաստուն խոսքեր:

Իրապես կյանքը պայքար է եղել բոլոր ժամանակներում: Այդ պայքարից հաղթական են դուրս եկել նրանք, որոնք ճշմարիտ և գիտակից հավատք են ունեցել ու իմաստությամբ են անցկացրել իրենց տրված կյանքի տևողությունը:

Պողոս Առաքյալն իր խրատներից մեկում ասում է. *«Իմաստությամբ ապրենք մեր կյանքը և հասարակության մեջ լսելի դարձնենք Աստծու ձայնը»:*

Այսօր ավելի քան երբեք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պարտականությունն է հոգալ հավատացյալների հոգևոր կարիքները և հիշեցնել ամեն մեկին, որ մեր կյանքը լցնենք իմաստությամբ:

Մեզ տրված խորհուրդը ասում է. *«Մի ապրեք անմտորեն, այլ իմաստունների պես»:* Կյանքը սահմանափակ է: Երբ դեռևս մանուկ ենք, մեր քայլերը նախապատրաստվում են մեծերի՝ մեր հայրերի ու մայրերի կողմից, որպեսզի առողջ դաստիարակություն ստանանք, իսկ երբ խելահաս ենք դառնում, մենք ինքներս ենք շարունակում օգտագործել Աստծուց մեզ տրված շնորհներն ու բարիքները:

Պողոս Առաքյալը շարունակում է խրատել. *«. . . Իրար հետ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսեցեք»:* Խաղաղ ու հաճելի մի ընտանիք, համայնք կամ հասարակություն ստեղծելու համար մենք պետք է անպայման Աստծու ձայնը լսելի դարձնենք այդ տեղերում:

«Որովհետև Աստուծոյ ձայնը հրաւէր մըն է մեզի՝ ըլլալու մարդասէր, խաղաղութիւնը սիրող, բարութիւն գործող»,- ասում է Գերշ. Տ. Հովնան Արքեպ. Տերտերյանը ու շարունակում. «Կեանքը օրէցօր կը բարդանայ, նորանոր դժուարութիւններ յառաջ կու գան: Մարդիկ ջղային կը դառնան գործի բերումով: Մէկ խօսքով, ամէն մարդ աւելի կամ քիչ չափերով դժուարութիւններու կը հանդիպի: Այս բոլորի մէջ Աստուծոյ ձայնին ականջ չտուող մարդը չարութիւն կը գործէ: Պատերազմը չարութիւն է, ռճիրը, մարդասպանութիւնը չարութիւն է: Ագահու-=թիւնը չարութիւն է: Կեանքի մէջ բոլորն ալ կան, ըլլայ պատերազմ, ըլլայ ռճիր, ագահութիւն, որովհետեւ հազարաւորները չունին Աստուծոյ վախը, Աստուծոյ իմաստութիւնը»:

Մարդը՝ Աստծու ստեղծագործության փառապսակը, միշտ ենթակա է աստվածային հոգատա-

ության: Նրա շնչից ստեղծված մարդը, երբ կարողանա ճանաչել ինքն իրեն, չպիտի ուզի մեղքերի մեջ կորչել, այլ ընդհակառակը՝ պիտի փորձի ապրել ու ընթանալ Աստծու ճանապարհով: 5-րդ դարի պատմիչ՝ Եղիշեն իր թաղման ճառում ասում է. *«Իշխանության տեր մարդիկ իրենց անունով արձաններ են կանգնեցնում ու իրենց պատկերները նկարում դրամի վրա, որովհետև պատկերադիր նկարով է, որ ոսկին մեծարվում է ու հարգվում աշխարհում»: «Ես՝ իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դեմքին նկարեցի»,-* ասում է Աստված: Աշխարհում միայն մարդն է, որ նմանվում է Աստծուն: Աստված միայն մարդուն է երևում, երկրի վրա միայն նրան է սիրում, միայն Աստված է, որ մարդասեր է և միայն մարդն է, որ աստվածասեր է:

Յուրաքանչրուր հայ քրիստոնյա իբրև անհատ մեծ արժեք է ներկայացնում Աստծու աչքին; Հրաժարվելով մեղավոր կյանքից, երբ գիտակցենք մեր բարձրագույն կոչմանը, հավատացեք, Աստծու նման կարող ենք ստեղծագործել: Եկեք, ուրեմն, մեզ տրված աստվածային շնորհները իզուր տեղը չվատնենք ապրելով անասնական մի կյանք, այլ՝ հետևենք մեր անզուգական Հովվին՝ Հիսուս Քրիստոսին:

21-րդ դարի այս զարգացած ժամանակաշրջանում մարդիկ դեռևս Աստծու օգնության կարիքը ունեն: Օտար աստվածաբաններից մեկը, իր գրքերից մեկում, երբ խոսում է մարդկանց մասին, հիշեցնում է մեզ, որ մենք Աստծու ծառայության մեջ ենք: Իրոք, այն օրվանից, երբ մենք իբրև Քրիստոսի հայ ժառանգորդները ստանում ենք Սուրբ Ավազանի

մկրտությունն եւ ընդունում Սուրբ Հաղորդությունը, այդ բոպեից սկսած մենք դառնում ենք Աստծու ներկայացուցիչները երկրի վրա, ուր մեզ քաղցր պարտականություն է տրվում քարոզելու Աստծու ճշմարտությունները և խնամելու Նրա ձեռքով ստեղծված աշխարհը: Նաև Մկրտության ու Հաղորդության խորհուրդները հայ քրիստոնյա մարդուն զինում են բարոյական բարձր արժեքներով: Նրանց շնորհիվ մենք հնարավորություն ենք ստանում հասկանալու, թե մենք առանձին չենք, այլ՝ իբրև Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավատարիմ զավակները ամուր կապերով միացած ենք Աստծու հետ: Իսկ Նրա հետ միություն, նշանակում է վառ պահել աստվածային սերն ու այդ նույն սիրով շաղախել աշխարհի պատմությունը, մեր ամեն մի խոսքն ու գործը՝ Աստծու փառքի, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, մեր Մայր Հայրենիքի շինության ու մեր բազմաչարչար ժողովրդի ապահովության և համերաշխության համար: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ահա՛վասիկ մենք թողեցինք ամեն բան և եկանք քո հետևից, արդ, մենք ի՞նչ կունենանք» (Մատթ. 19:27):

Մատթեոսի Ավետարանի 19-րդ գլխի 16-22 համարներում մի հարուստ երիտասարդի հարցին, թե՝ *«Բարի Վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» (Մատթ. 19:16):* Հիսուս նախ նրան հորդորում է պահել տասնաբանյա պատվիրանները, իսկ երբ տեղեկանում է, որ նա մանկությունից արդեն պահել է, ասում է. *«Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս, և դու արի իմ հետևից» (Մատթ. 19:27):* Ավետարանը ասում է, թե երիտասարդը տխուր հեռացավ, քանի որ շատ հարստություն ուներ:

Հիսուս խրատելով Իր աշակերտներին ասում է. *«Ավելի հեշտ է պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայությունը»:* «*Իսկ ո՞վ կկարողանա փրկվել»* նրանց զարմացական հարցին, Նա պատասխանում է. *«Մարդկանց համար այդ անկարելի է, բայց Աստծու համար ամեն ինչ կարելի է» (Մատթ.19:27):* Պետրոս Առաքյալը ի պատասխան Հիսուսի այս խոսքերի հետաքրքիր մի հարց է տալիս. *«Ահա՛վասիկ մենք թողեցինք ամեն բան և եկանք քո հետևից. արդ, մենք ի՞նչ կունենանք»:*

Այն ժամանակ Հիսուսի աշակերտներին հետաքրքրում էր այս հարցը, որն այժմ անշուշտ, վստահ եմ հետաքրքրում է նաև մեզ:

Կան հարցեր, որոնք մարդկանց հետաքրքրում են ներկայի, միևնույն ժամանակ՝ ապագայի համար: Համոզված եմ, որ այս պահին այս հարցը որևէ հավատացյալի կարող է հետաքրքրել հետևյալ տեսանկյունից. *«Ահա այժմ մենք եկել ենք եկեղեցի, թողել մեր գործերը, հոգսերն ու մեր բոլոր հետաքրքրությունները, հաճույքներն ու վայելքները, արդ, մենք ի՞նչ կունենանք ու ի՞նչ կ'ստանանք»:* Հետաքրքիր հարց է: Այս հարցին կարող ենք պատասխանել մի այլ հարցադրումով;

Գիտե՞ք արդյոք, թե ինչպես է դարձի եկել քրիստոնյա սրբերից մեկը: Նա տեսել է խաչյալ Քրիստոսի պատկերը, որի վրա գրված էր. *«Ահա թե ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում ինձ համար»:* Մենք Աստծուն ուղղված բազում հարցեր, խնդրանքներ, Նրանից ակնկալիքներ ունենք, բայց ամեն անգամ, երբ տեսնում ենք խաչված Քրիստոսի պատկերը, Նրա թվացյալ լռության միջից Աստված Ինքն է տխուր թախիծով մեզ հարցնում. *«Ահա թե ես ինչ եմ արել ձեզ համար, տանջվել, չարչարվել ու ապա խաչվել եմ ձեր մեղքերի, ձեր փրկության ու ձեր կյանքի երջանկության և խաղաղության համար, իսկ դուք ի՞նչ եք անում ինձ համար»:*

Իրոք, ի՞նչ ենք անում մենք: Երբեմն գալիս ենք եկեղեցի, որին շատ անգամներ մատների արանքով ենք նայում և դժգոհում ենք, երբ մի փոքր երկար ենք մնում ու կանգնում Սուրբ Պատարագի արարողությանը, մեր մտքում ասում ենք, թե ե՞րբ պիտի վերջանա, որ վերադառնանք մեր տները ու մեր հոգսերին; Երբեմն մեզ թվում է, թե կանգնելուց մեր

մեջքերը ցավում են, ոտքերը հոգնում ու քահանայի երկար քարոզից՝ մեր մտքերը սկսում են ցրվել: Բայց ի՞նչ եք կարծում, մի՞թե թվացյալ երկար արարողությունն է այս բոլորի պատճառը: Իհարկե ոչ: Վերցնենք մի քանի օրինակներ. եթե Հայրենի երգիչ-երգչուհիները, համերգ տան որևէ մի թատրոնում, ուր հազարից ավելի մարդիկ կարող են տեղավորվել, ի գնահատանք մեր մշակութասեր ժողովրդի, դրանք լեփ լեցուն են ու նրանք մի քամի ժամ առանց հոգնելու լսում են նրանց կամ վերցնենք մեր երիտասարդ-երիտասարդուհիներից շատերին, որոնք ամբողջ գիշեր անցկացնում են զվարճանքի վայրերում անընդհատ շարժման մեջ և… չեն հոգնում: Ուրեմն, եզրակացությունն այն է, թե եկեղեցում մեր դժգոհության ու ձանձրույթի պատճառը ոչ թե երկար կանգնելուց մեր ցավեցնող մեջքն է կամ հոգնած ոտքերը և կամ գրաբարյան անհասկանալի լեզուն, այլ՝ հավատքի թուլությունը;

Մեր սրտերը կորցրել են իրենց ջերմությունը, սիրո կամ հոյզի ոչ մի թրթիռ, միայն հոգսեր, վշտեր, մտահոգություններ, ավելի շատ տխրություն, քան՝ ուրախություն, թախիծ, քան՝ երջանկություն: Լինում են պահեր, երբ մեր սիրտը դառնում է տխրության բաժակ և այդ բոպեներին, ինքներս էլ չգիտենք, թե ինչու, մեր աչքերից առցունքներ են հոսում ու մեր սիրտը կարծես ահա ուր որ է դուրս պիտի թռչի մեր կրծքավանդակից և բացականչի. *«Ազատեցե՛ք ինձ, ազատեցե՛ք ինձ հոգսերի և վշտերի այս ճնշող բեռից, ի՞նչ եք խեղդում ինձ, ինչո՞ւ եք ինքներդ փորձում սպանել ձեր սիրտը»:* Այս աշխարհում հանգստու-

թյուն և ուրախություն չկա, դրանք կարող ենք գտնել միմիայն Աստծու մոտ:

Սակայն ո՞ւմ ենք ասում սա: Չէ՞ որ դուք ինքներդ էլ ձեր կյանքի փորձով համոզվել եք, որ այդպես է: Ահա երեկ վշտերն էին կրծոտում մեր սրտերը, այսօր մտահոգություններն են տանջահար անում, իսկ վաղը ծանրաբեռնված ենք լինելու ապագայի հոգսերով: Բայց խաչված Քրիստոսը տարածել է Իր ձեռքերը և դրանք այսպես տարածված էին ոչ միայն խաչի վրա, երբ նա մեռած էր, այլև հիմա՝ Նրա Հարություն առնելուց հետո էլ: Հիսուս կարոտա'ծ հոր պես, արցունքի' հասնող սիրով, Իր ձեռքերը տարածել է՝ մեզ Իր գիրկն առնելու համար:

Տեսե՞լ եք, թե ինչպես է հայրը երեխայի հետ խաղալիս բացում ձեռքերը. երեխան վազում, ընկնում է հոր գիրկը, փարվում նրա պարանոցին: Իսկ դուք ի՞նչ եք կանգնել, ի՞նչ եք սառել ու մնացել, չի՞ որ Աստված Իր ձեռքերը բացել է մեզ՝ գրկելու համար:

Երբ մեր գլուխը ցավում է, փորձում ենք որևէ դեղ խմել, երբ ավելի լուրջ ցավեր ենք ունենում, շտապում ենք բժշկի մոտ, բայց մի՞թե սրանցից ավելի լրջորեն չպե՞տք է մտածենք մեր սրտի ու հոգու խաղաղության մասին: Իսկ մեր հոգին հիվանդ է և ինքներս չենք գիտակցում դա: Մենք մեզ արդար ենք համարում, մինչդեռ մեղքերի մեջ կորած ենք: *«Ի՞նչ եմ արել, ո՛չ մարդ եմ սպանել, ո՛չ էլ շնություն գործել»,* հաճախ արդարանում են շատերը: Լավ է, որ չես սպանում, բայց ավելի լավ է, երբ մտքով չես սպանում:

Լավ է, որ սիրում ես եղբորդ, ավելի լավ է, երբ հարգում ես հարևանիդ, բայց սրանից է'լ ավելի լավ

է, երբ սիրում ես… թշնամուդ: *«Սիրեցեք ձեր թշնամիներին, ձեզ ատողներին բարություն արեք, օրհնեցեք ձեզ անիծողներին, ձեզ նեղողների համար աղոթեցեք» (Ղուկ. 6:27-28):* Սրանք իմ խոսքերը չեն, այլ մեր Տիրոջ: Ինչքան մարդ սրտով ու հոգով պատրաստ մեկը պիտի լինի, որ կատարի Հիսուսի այս հրաշալի պատվիրանը: Ով կարող է մեզ սրտի և հոգու խաղաղություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված: Բայց մենք Աստծուն գցել ենք ամենավերջին տեղը և Նրանից վերև բազմեցրել մեր սեփական հոգսերն ու ցանկությունները, այսպես մտածելով, թե՝ *«Աստված չի փախչի, թող սպասի, մի օր կաղոթենք Իրեն կամ ժամանակը գա, կխնդրենք Իրենից ինչ որ մեզ պետք է«* և այլն:

Մի պահ եկեք սրանից հետո փոխենք իրերի հերթականությունը, մեզ համար մեր սրտերում առաջին տեղում բազմեցնենք Աստծուն և Նրան հանձնենք մեր բոլոր հոգսերն ու մտահոգությունները՝ հավատալով, որ Աստված ըստ Իր խոսքի օգնելու է մեզ ամեն ինչում, և յուրաքանչյուր խնդրի համար ի'ր ժամանակին ելք է ցույց տալու ու մեր բոլոր գործերն անենք առաջին հերթին ո'չ թե մարդկանց, այլ Աստծու փառքի համար: Ահա այս է քայլը դեպի Աստված և երեխաների վազքը դեպի իրենց մխիթարող, սիրող ու գուրգուրող, իր ձեռքերը լայն բացած Հոր գիրկը: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչում գրված է՝ *«Նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները: Եվ նրա առաջ չկա անտեսանելի արարած, այլ ամեն ինչ պարզ ու հստակ է նրա աչքերի առաջ» (Եբր. 4:12) «Նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք 17:28) :*

Մարդիկ կարող են իրենք իրենց այս հարցը տալ՝ «*Իբրև քրիստոնյա արդյոք ես իմ մեջ զգում եմ Աստծու ներկայությունը»* կամ *«Ի՞նչ է նշանակում ապրել Աստծու ներկայության մեջ»:*

Աստծու ներկայության մեջ ապրել նշանակում է միշտ հիշել, թե Աստված ամեն րոպե և ամեն տեղ մեզ հետ է, տեսնում է թե մթության մեջ, թե ծածուկ տեղերում, քննում մեր գործերը, կարդում մեր գաղտնի խորհուրդներն ու մտադրությունները:

Ովքեր զգում են Աստծու ներկայությունը իրենց մեջ, նրանք հեռու են մնում չար գործերից, որովհետև իբրև մարդիկ ամեն քայլափոխի կարող ենք մեղանչել, քանի որ չենք գիտակցում, թե Աստված մեր մեջն է: *«Ցույց տվեք մի տեղ,- գրում է Սուրբ Եփրեմ Խուրին,- ուր Աստված չի կարող ինձ տեսնել, այնտեղ կանեմ այն, ինչ պահանջեք ինձանից»:* Կարելի է մարդկանցից փախչել, բայց Աստծու ամենազոր աչքից խուսափել՝ անկարելի է:

Աստծու հայացքը տարածվում է նաև մեր մտքերի, ծրագրերի ու մեր հոգու խորքում թաքնված ձգտումների վրա: *«Տերը քննում է ամենքի սրտերը և նա գիտի բոլորի մտածումները»,-* ասվում է Սուրբ Գրքում. *«Եթե փնտրես նրան, նա կգտնվի քեզ*

համար իսկ եթե թողնես նրան, նա քեզ կլքի իսպառ» (Ա. Մնաց. 28:9):

Աստված Աբրահամին սովորեցրեց այս ճշմար-տությունը. *«Ինձ հնազանդ և կատարյալ եղիր» (Ծն. 17:1):* Մենք փորձում ենք լավագույն կերպով կատարել մեր պարտականությունները, երբ զգում ենք, որ մեզ հետևող ու հսկիչ կա: Այսպես է վարվում զինվորը՝ հրամանատարի, աշակերտը՝ ուսուցչի և զավակը՝ հոր հանդեպ:

Կյանքի նպատակը չի կարող մահը լինել: Այսպես մտածում են միայն հավատքից թույլ մարդիկ: Կյանքը մի իրողություն է, որի նպատակը հենց ինքն է: Իմաստունը ճիշտ է, երբ ասում է. *«Աստված մարդուն ստեղծեց անմահության համար»:* Անմահություն նշանակում է կյանքը կյանքի համար: Կյանքը իր բոլոր իրական բարիք-ներով, իր արդար հաճույքներով, իր ֆիզիկական և հոգեկան վայելք-ներով, իր երազներով ու տեսիլք-ներով, իր բոլոր հայտնություններով, խորհուրդներով ու առեղծ-վածներով և իր ամբողջական արժեքներով: Անմա-հության գաղափարը միացած Աստծու գաղափարի հետ, ոչ թե թմրեցնում է հոգին՝ *«անտեսելու ու նվա-զեցնելու երկրավոր կյանքի արժեքը»,* այլ էլ ավելի է բարձրացնում այն:

Աստծու գոյությունն ու հոգու անմահությունը ուրանալը առնվազն անհեթեթություն է: Ուրացումը թուլացնում է ու փչացնում հոգին, իսկ հավատքը այն զորացնում և ազնվացնում է: Ճշմարիտ կրոնը հավատքի վրա հիմնված կյանքն է:

«Հեռավոր երկրներից մեկում ապրում էր տարօրինակ գաղափարներ ունեցող մի թագավոր:

Ամեն տեսակ հաճույքներ օգտագործած լինելով նա ցանկություն է հայտնում տեսնել նաև Աստծուն ու այդ մասին տեղյակ է պահում իր քաղաքացիներին: Եվ, որպեսզի կարողանա այն իրագործել, մարդկանց տալիս է երեք օր ժամանակ:

Ոչ մեկը չի համարձակվում այս անհեթեթ ցանկությունը կատարել: Հեռու մի այլ երկրից եկած մի հովիվ ցանկություն է հայտնում թագավորին ցույց տալ, թե ո՞ւր է Աստված: Նա թագավորի հետ պալատից դուրս է գալիս: Ամառ լինելով արևը ուղղակի այրում էր: Հովիվը թագավորին խնդրում է նայել արևին, սակայն նա չի կարողանում, քանի որ արևի ճառագայթները ծակում են նրա աչքերը: Երբ թագավորը բողոքում է, թե հովվի նպատակը իրեն կուրացնելն է, նա պատասխանում է. *«Քավ լիցի: Բայց իմացեք, որ Աստծու բյուրավոր փառքերից փոքրագույնն է միայն այս արևը, որը ձեզ ցույց տվեցի: Դուք, որ նրան անգամ չկարողացաք նայել, ինչպե՞ս պիտի կարողանաք տեսնել Աստծուն, որ միլիոն անգամ ավելի շողշողուն է, քան արևի ճառագայթները: Անզոր են այս աչքերը: Պետք է ունենալ տարբեր աչքեր, որպեսզի հնարավոր լինի Նրան տեսնել»:*

Այդքանից հետո թագավորը չի խրատվում և ուզում է իմանալ, թե Աստծու զբաղմունքն ի՞նչ է: Հովիվը խնդրում է նրան, որ հագուստները փոխեն: Երբ հագուստները փոխվում են, թագավորը դառնում է հովիվ, իսկ հովիվը՝ թագավոր, հովիվն ասում է.

«Ճիշտ այն, ինչ որ մենք հիմա արեցինք: Նա մեկին բարձրացնում է և մի ուրիշին խոնարհեցնում,

մեկին մերկացնում է, մյուսին շորեր է հագցնում: Մեկին ուրախացնում է, իսկ մյուսին՝ լացացնում: Ահա այս է Աստծու զբաղմունքը» և հրամայում է թագավորին գլխատել ու ինքը դառնում է թագավոր:

Աստվածաշնչում գրված է. *«Քո Տեր Աստծուն մի փորձիր»:*

Առանց հուսահատվելու ապրենք Աստծու ներկայության մեջ ու Նրա կողմից շնորհված այս գեղեցիկ կյանքը, օգտագործելով մեր ամեն մի րոպեն, քայլենք Հիսուսի ճանապարհով, լինենք ազնիվ, մաքուր և բարի գործեր կատարենք: Ամեն:

Հիսուս բարկանալով փարիսեցիների կեղծավորության վրա, նրանցից հեռանալու համար, աշակերտների հետ նավակ է նստում: Ավետարանում կարդում ենք.

«Եվ աշակերտները մոռացան հաց վերցնել. միայն մեկ նկանակ ունեին իրենց նավակի մեջ… Հիսուս իմացավ նրանց խորհուրդը և նրանց ասաց. «Թերահավատներ, ինչո՞ւ էք ձեր սրտերում խորհում թե հաց չունեք. դեռ չե՞ք հասկանում և չե՞ք հիշում. ապշությո՞ւնն է ձեր մտքերը պատել: Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում» (Մարկոս 8:17-18):

Առաքյալները, որոնք գիշեր ցերեկ Հիսուսի հետ էին ու Նրա հրաշալի գործերի վկաներն էին եղել, հակառակ որ ընդամենը մի քանի ժամ առաջ ականատես էին եղել Նրա հրաշքին՝ հինգ հազար հոգու կերակրելը երկու ձկով և մի քանի նկանակով, այնքան թերահավատ էին ու անգիտակից, որ անհանգստանում էին, թե ճանապարհ են դուրս եկել առանց հաց վերցնելու: Եթե առաքյալները, որոնք տեսան Հիսուսի հրաշքները ու լսեցին Նրա ճշմարիտ պատգամները և մոռացան, ապա մենք, պարզ մարդիկս, որ չենք տեսել ու չենք լսել, ինչպե՞ս կարող ենք հավատալ: Հիշենք Հիսուսի խոսքերը ուղղված Թովմաս Առաքյալին. *«Դու ինձ տեսար, հավատացիր, երանի նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ.20:29):*

Միթե կո՞ւյր են մարդկանց աչքերը, որ չեն տեսնում և միթե խո՞ւլ են, որ չեն լսում:

Այս պատմությունը ուսանելի է.

«Մի օր հորդառատ անձրևների պատճառով ջրհեղեղ է սկսվում և գնալով այն ուժեղանում է ու շատ վնասներ հասցնում: Մարդիկ սկսում են փախչել ապահով տեղեր, թողած իրենց տունն ու տեղը, հարստությունը ու ամեն ինչ՝ իրենց կյանքը փրկելու համար: Այս մարդկանց մեջ կար մի հավատացյալ, որը գիշեր ցերեկ աղոթում էր ու այդ օրն էլ ծնկի եկած աղոթում էր Աստծուն: Ջուրը գնալով ուժեղանում է ու մոտենում այս հավատացյալին: Երբ ջուրը հասնում է նրա գոտկատեղին, մի նավակ է մոտենում ու մեջի մարդիկ հրավիրում են նրան բարձրանալու նավակի մեջ, որ փրկվի: Հավատացյալը պատասխանում է, որ Աստված միայն կարող է իրեն փրկել: Եվ այսպես ևս երկու անգամներ մարդիկ նավակներով մոտենում են ու առաջարկում նրան փրկվել, սակայն նա հրաժարվում է նույն պատճառաբանությամբ ու խեղդվում: Նրա հոգին հանդիպում է Աստծուն ու սկսում Նրան բողոքել, թե այդքան աղոթքից հետո ինքը խեղդվել է, իսկ ուրիշներ, որոնք երբեք չեն հիշել Նրան իրենց կյանքում՝ փրկվել են: Աստված պատասխանում է. «Քու բողոքը արդար չէ, որովհետև Ես քեզ փրկելու համար երեք նավակ ուղարկեցի…»:

Այս պատմությունը միայն ու միայն հավատացյալինը չէ, այլ բոլորինս, իմը, քոնը, մյուսինը, որովհետև Հիսուսի նախատինքը ուղղված Առաքյալներին, այսօր էլ կարծես բոլորիս համար է ասված. *«Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում»:*

Աստված մարդուն երբ ստեղծեց, նրան օժտեց կարևոր մի շնորհքով՝ խելքով ու կամքով, որը չտվեց

ոչ մի կենդանու կամ թռչունի: Խելք, որով մենք կարող ենք ինքներս որոշել, թե ո՞ր ճանապարհը ընտրենք՝ բարո՞ւ, թե՝՞ չարի, արդարի՞, թե՝՞ մեղավորի, փրկությա՞ն, թե՝՞ կորստյան: Անշուշտ բնական է, որ մեր հույսն ու ապավենը Աստված է, սակայն Նրա վրա հույսը դնելով, պետք է գործածենք մեր խելքը, միտքը, որն աստվածային է ու մանավանդ դրանով նաև մեր կամքի ուժը: Հավատացյալը Աստծու վրա հույսը դնելով, պիտի հասկանար, որ մարդիկ Նրա կամքով է, որ ուզում էին նրան փրկել:

Մենք չենք կարող հավատալ Աստծու ճշմարտություններին, եթե ընդունակ չենք տեսնելու Նրա զորությունն ու պարգևները ոչ միայն մեր մարմնական, այլ մանավանդ՝ մեր հոգեկան աչքերով:

Այն ինչ ստեղծվել է՝ տիեզերքը, արևածագը, մայրամուտը, երկինքն ու երկիրը, ջուրն ու ցամաքը, բնությունը, կենդանիներն ու թռչունները, այն հացը, որ մենք ամեն օր ուտում ու սնվում ենք, մեր առողջությունը, նույնիսկ Մարդը, ամեն բան ինչ որ վայելում ենք՝ Աստծու պարգևներն են:

Ուրեմն ամեն մեկս առաջին հերթին նախ փառք պիտի տանք Աստծուն Իր պարգևների համար և երկրորդ՝ երբ մի պահ մենք մեզ նայենք հայելու մեջ, պիտի տեսնենք, թե Նրա կատարյալ ստեղծագործությունը մենք ենք՝ մարդիկ:

Ինչպես մի ծնող չի կարող իր զավակին մոռանալ, առավել ևս Աստված չի կարող մարդուն մոռանալ: Ուրեմն, խոշոր բացենք մեր աչքերն ու ականջները տեսնելու Աստծու զորությունն ու լսելու Նրա ճշմարիտ պատգամները: Ամեն:

ՊԱՀՊԱՆԻՐ ԹՇՆԱՄՈՒՑ

«Փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն» Մաշտոց
«Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամիներից»

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամենագեղեցիկ աղոթքներից մեկն է *«Պահպանիչ»-ը,* որը գրեթե բոլոր ծիսակատարությունների վերջավորության և կամ հավաքույթների ավարտին *հոգևորականը արտասանում է, օրհնելով ներկա ժողովրդին*:

Այս աղոթքը մեզ ծանոթ է առաջին իսկ բառով *«Պահպանիր…»:* Այն երկար չի, բայց շատ խորիմաստ է:

«Խաղաղությամբ պահպանիր մեզ Քրիստոս Աստված սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ: Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց: Արժանի դարձրու գոհությամբ փառավորել Քեզ՝ Հորը և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Աղոթքն ունի իր որոշ տարբերակները, որը հոգևորականը ընտրում է պատշաճեցնելով ըստ օրվա հավաքույթի կամ արարողության: Օրինակ՝ *«Քրիստոս Աստված պահպանիչը և հույսը հավատացյալների, օրհնիր և պահպանիր Հայոց Ազգը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին և ներկա հավատացյալ ժողովուրդը, խաղաղությամբ սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ. . .»* և այլն:

Մի քանի նախադասություններից բաղկացած այս աղոթքը իր մեջ ընդգրկում է աղոթող մարդու սրտից խնդրանք ուղղված Աստծուն:

Աղոթողը խնդրում է, որ Աստված պահի ու պահպանի իրեն սուրբ և պատվական խաչի ներքո՝ խաղաղության մեջ:

Պահելն ու պաշտպանելը Աստծու կողմից տրված մարդկային հատկություն է: Չկա մի ծնող, որն իր ամբողջ էությամբ չպայքարի պաշտպանելու իր ընտանիքը: Հայրենասերները մինչև իսկ իրենց կյանքի գնով պատերազմում զոհվում են Հայրենիքի ու հավատի համար: Վարդանանց հերոսները մեզ օրինակ: Վարդան ու իր ընկերները Հիսուսի և Հայրենիքի համար իրենց կյանքով պաշտպանեցին այսօրվա մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենիքը:

Պաշտպանության հատկությունը կենդանական աշխարհում էլ բացահայտ է: Մեկ տարբերությամբ միայն, կենդանին բնազդով է պաշտպանում իր ձագերին ու բույնը, մարդը սակայն՝ գիտակցությամբ և կամքով:

Քրիստոնյա հավատացյալը Աստծուց խնդրում է, որ իրեն պահի սուրբ խաչի զորության ներքո: Այն խաչը, որը մահվան գործիք էր, Քրիստոսի խաչելությամբ դարձաւ փրկության խորհրդանիշ. խաղաղության և օրհնության նշան: Քրիստոնյան ինքնիրեն ապահով է զգում խաչի զորության ներքո:

«Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամիներից»:

Բնական է, երբ մենք գիտենք թե ո՞վ է մեր թշնամին, նրանից զգուշանում ենք ու միշտ պատրաստ ենք լինում պաշտպանելու մեզ երևելի թշնամիներից: Բայց աղոթքը մեզ զգուշացնում է, թե այս աշխարհում կան նաև աներևույթ թշնամիներ, որոնք ավելի վտանգավոր են, քանի որ մենք չենք տեսնում

նրանց: Օրինակ եկեք հիշենք Վարդանանց հերոսամարտի պատմութիւնը: Երբ բոլոր հայ իշխաններն ու հոգևորականները Ավարայրի վճռական ճակատարտից առաջ հաղորդվեցին Քրիստոսի սուրբ մարմնով ու արյունով, Աստծու Սուրբ Սեղանի առաջ ուխտելով, թե մինչև մահ պիտի պահեն ու պաշտպանեն Քրիստոսի սուրբ հավատքն ու Հայրենիքը, նրանցից մեկը՝ Վասակ Սյունին, որը վայելում էր բոլորի հարգանքն ու պատիվը իբրև Երկրի Մարզպանը, ճակատամարտի ամենավճռական պահին դավաճանեց իր հավատքն ու Հայրենիքը, անցնելով թշնամու կողմը: Սակայն ինչպես գիտենք, նրա փառքի ձգտումը ունեցավ տխուր վախճան:

Երբեք չզարմանաք, եթե ասենք, որ այսօր էլ մեր ժողովրդի մեջ կան այդպիսի թշնամիներ, որոնք Եկեղեցու ու Հայրենիքի վճռական պահին կամավոր և գիտակցաբար օժանդակում են թշնամուն, որպեսզի նա իր չար գործը կատարի, ինչպես Հուդան, որը համբուրելով մատնեց իր Վարդապետին:

Այս աղոթքով մենք խնդրում ենք Աստծուց, որ մեզ պաշտպանի աներևույթ թշնամիներից, որովհետև իբրև մարդիկ մենք անկարող են դա անելու: *Ու հավատացեք, որ Աստված կպահի ու կպահպանի իրեն հավատարիմ ծառային:* Դրանում երբեք մի կասկածեք: Մեր երկար տարիների փորձառությամբ ենք դա ասում: Դուք ձեր աղոթքը կատարեցեք., մնացածը թողեք Աստծու հույսին ու զորությանը և կտեսնեք հրաշքը բարության և չարի պատիժը: Դուք միայն կրկնեցեք աղոթքի այս վերջին բառերը.

«Արժանի դարձրու մեզ գոհությամբ փառավորել Քեզ՝ Հորը և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամեն»:

Քրիստոնյա հավատացյալի ամենակարևոր ցանկությունն է արժանի լինել: Արժանի լինել ինչի՞ն: Աստծու թագավորության, երկնային դրախտին և հավիտենական կյանքին: Աստծու աչքին արժանի լինել, նշանակում է Նրա պատվիրաններին հետևել, այսինքն՝ օգնել կարիքավորներին, աղքատներին, հիվանդներին, չբամբասել, խրատել իրար Աստծու ճշմարտությունների ճանապարհով և լինել անկեղծ ու գթառատ:

Քրիստոսի ժամանակ փարիսեցիները իրենց կեղծավոր հավատքով ժողովրդականություն էին ձեռք բերել: Նրանք վայելել էին մակերեսային հարգանք ու պատիվ այդ ժամանակի իշխանությունների և մտավորականության կողմից: Թող ձեզ զարմանալի չթվա, եթե ասենք, որ այսօր էլ կան փարիսեցիներ ու կեղծավորներ, որոնք արտաքնապես, ձևական բարեպաշտական կեցվածքով, ցույց են տալիս իրենց քրիստոնեական հավատքը, որը չունեն: Կան ավելի ծայրահեղները, որոնք իրենց վարքով կարևոր են համարում պահքի օրերին միս չուտելը, սակայն անարդարորեն իրենց նմանի միս են կրծում: Ահավասիկ այս արարքներով զբաղվող մարդը՝ ըստ ճշմարիտ և ուղղափառ հավատքի, չի կարող արժանի լինել աստվածպաշտության: Կարևոր չէ թե նա գիտնական է, աստվածաբան կամ լեզվաբան կամ որևէ ասպարեզի աշխատող ու կարևոր չի նույնիսկ նրա ժողովրդականությունն ու հեղինակություն ունենալը: Մի հավատացեք այն

մարդկանց, որոնք ձևացնում են, թե հավատքով են, բարի են, սակայն արհամարհում, նվաստացնում, ցեխին են հավասարեցնում իրենց նմանի հեղինակությունը: Եվ հետո էլ նրանց ավելի մոտից ճանաչող մարդիկ ասում են, թե՝ *«Մի նեղացեք, նրա սիրտը բարի է, կոշտ բնավորության վրա ուշադրություն մի դարձրեք»:* Այս խոսքերը ակամա ծիծաղ են առաջացնում: Ճշմարիտ հավատքով քրիստոնյան անկեղծ ու մաքուր սիրտ ունի և հետևում է մեր Տիրոջ չինացող պատվիրանին՝ *«Միրեցեք միմյանց»,* որով նա որևէ մեկին չի կարող վիրավորել, արհամարհել կամ նվաստացնել;

Աղոթենք Աստծուն, որ Նա լինի մեր պահապանը աներևույթ թշնամիների դեմ: Եվ ինչպես մեր նախահայրերը պահեցին ու պաշտպանեցին իրենց Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին օտար թշնամիներից, աղանդներից ու մոլորեցնող հոսանքներից, մենք էլ իբրև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավատարիմ զավակներ, պահենք ու պաշտպանենք մեր հավատքը սուտ վկաներից, մեր Տիրոջ անունը չարաշահողներից, այն վայրերից, ուր Աստծու ճշմարտությունները քարոզվում են միմիայն նյութական շահի համար և այլ օտար շարժումներից, որոնք մեզ արժեզրկում են մաքուր հայ քրիստոնյա լինելուց ու Ամենաբարձրյալին փառաբանելուց: Ամեն:

«Եվ երբ երեկո եղավ, նրա աշակերտները ծովեզերք իջան: Եվ նավակ նստելով գալիս էին դեպի ծովի մյուս կողմը, դեպի Կափառնայում: Եվ մութն ընկավ, Հիսուս դեռ իրենց մոտ չէր եկել, և ծովը հողմի ուժգին փչելուց փոթորկվում էր: երբ շուրջ հինգ կամ վեց կիլոմետր թիավարելուց հետո տեսան Հիսուսին, որ քայլում էր ծովի վրայով և նավակին մոտեցել էր, սաստիկ վախեցան: եվ նա ասաց նրանց. «Ես եմ մի վախեցեք» (Հովհ. 6:16-20):

Ավետարանների մեջ տարբեր տեղերում կարդում ենք, թե՝ երբ Հիսուս որևէ մեկի մոտ էր գտնըվում՝ նրա վախը անմիջապես անհետանում էր: Իրապես, մեր Տերը *քաջություն, զորություն և հաստատակամություն* էր սփռում Իր շուրջը: Թեև Նա բազմաթիվ մարդկային հուզումների, չարչարանքների ու տանջանքների ենթակա եղավ, սակայն ոչ մի ժամանակ չվախեցավ, որովհետև Աստծու Որդին էր:

Մարդկանց համար վախենալը և ահ ու դողի մատնվելը ամենօրյա ու բնական մի երևույթ է: Կարող եմ համարձակ ասել, թե բոլոր մարդիկ էլ վախկոտ են ծնվում: Նույնիսկ Առաքյալները, որոնք Հիսուսի զորակցությունն ու աջակցությունը ունեին, նորից վախկոտ մարդիկ էին: Պետրոսը, որը հաճախ ինքնիրեն քաջ, համարձակ և անվախ էր ցույց տալիս, իր սիրելի ու պաշտելի Տիրոջը մի գիշերվա մեջ երեք անգամ ուրացավ, ասելով, թե *«Ես նրան չեմ ճանաչում» (Ղուկ. 22:57):*

Մեր կրոնը և Սուրբ Գիրքը չեն ասում, սակայն, թե ամեն տեսակի վախ ու երկյուղ անբնական և անիմաստ են: Սատանան երբ մեր Տիրոջը ուզեց փորձել՝ Նրան կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա ու ասաց. *«Եթե Աստծու Որդին ես, քեզ այստեղից ցած գցիր, որովհետև գրված է՝ իր հրեշտակներին պատվիրված է քո մասին, և ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ, որպեսզի երբեք քո ոտքը քարին չխփես» (Մատթ. 4:6):* Հիսուս պատասխանեց նրան. *«Ետիս գնա, սատանա. . . », այսինքն՝ «Ինձանից հեռու գնա, սատանա» (Մատթ. 4:10):*

Առակաց գրքում ասվում է. *»Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակ. 1:7):*

Այս խոսքը կարևոր է և օգտակար ու պատկանում է բոլոր ժամանակների մարդկանց: Կարելի է այն նկատել որպես կյանքի նշանաբան: Իրականության մեջ, սակայն կան բազմաթիվ անձեր, որոնց կյանքի գերագույն նպատակը եղել է ապրել Աստծու երկյուղով, բայց գործնականում իրենց ապրած առօրյա կյանքը ցույց է տալիս, թե այս խոսքը նրանք կամ սխալ են հասկացել կամ էլ այն երբեք չեն ըմբռնել: Ուրեմն, ի՞նչ է նշանակում *«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»* խոսքի իմաստը:

Ցավալի է, որ նույնիսկ շատ հավատացյալներ, որոնք հավատում են Աստծու գոյությանը, խոսքով ասում են, թե երկյուղ չունեն Նրանից, բայց գործնականում Աստված տեղ չունի նրանց գործերում, տներում, սրտերում և ընդհանրապես նրանց կյանքում ու արդարանում են ասելով. *«Նա երկնքում է, իսկ մենք՝ երկրի վրա»:* Եվ երբ նեղության ու դժվարությունների մեջ են, փոխանակ Աստծուն դիմելու և

Նրա Օրհնությունը հայցելու, մարդկանց օգնության վրա են հույսները դնում ու շատ քիչ անգամներ է պատահում, որ Տիրոջն են ներկայացնում իրենց խնդրանքները՝ այն էլ կասկածելով։

Հիշում եմ, երբ փոքր էինք ու երբեմն բնական կերպով չարություն էինք անում, մայրս մեզ սաս-տում էր, ասելով. *«Եթե խելոք չմնաք Աստված Պապիկին կասեմ ձեզ պատժի»։* Խոսքս սրանից քառասունհինգ տարիներ առաջվա պատմություն է պատահած Հայաստանի մեջ։ Մենք փոքրերս մտածում էինք, թե՝ *«Ո՞վ պիտի լինի այս Աստված Պապի-կը, որ մեր մայրը նույնիսկ վախենում է Նրանից»։* Անշուշտ տարիներ հետո երբ մեծացանք, հասկացանք, որ բոլոր մարդիկ էլ պետք է ունենան երկյուղ և սեր Աստծու նկատմամբ։ Սակայն սա չի նշա-նակում, թե մեր հավատքը վախի ու դողի վրա հիմնված մի վարդապետություն է։ Սխալ չհասկանանք։ Աստված ցանկանում է, որ Իր ստեղծած մարդիկ առանց վախի, երջանիկ և ուրախ ապրեն։

Երբ եկեղեցի ենք մտնում, եկեք գիտակցենք, թե ո՞ւր ենք գտնվում։ Խավարը և լույսը իրար հակառակ են, սևն ու սպիտակը չեն կարող իրար միանալ։ Արդար ու մաքուր մարդիկ միշտ աշխատում են լույսի մեջ, իսկ անարդար մարդիկ նախընտրում են խավարը, որպեսզի իրենց չար գործերը չերևան։ Ուրեմն նախ պիտի աշխատենք մեր հոգիները մաքրել ու երբ լսենք Տիրոջ ձայնը, թե՝ *«Ես եմ մի վախեցեք»*՝ չվախենանք, այլ ճանաչենք Նրա ձայնը, լինենք Նրա հետ, որպեսզի չարը չկործանի և չզրկի մեզ հավիտենական կյանքից։ Հիսուսի միջո-ցով ավելի մոտից ճանաչենք Հայաստանյայց Առա-քելական մեր Մայր Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ու հեռու մնալով տեսակ-տեսակ աղանդներից և խորթ սովորություններից, հավատարիմ մնանք մեր Հայրերի սուրբ հավատքին։ Ամեն։

ՏԻՐՈՋ ԽՈՐԱՆԸ

«Տեր, ո՞վ պիտի ապրի քո վրանում, կամ ո՞վ պիտի բնակվի քո սուրբ լեռան վրա» (Սաղմ.14:1):

Սա հետաքրքիր ու անհրաժեշտ մի հարց է հոգևոր կյանքի համար, մի հարց, որը Սուրբ Գերքում ենք հանդիպում եւ այնտեղից էլ ստանում պատասխանը:

«Ո՞վ կարող է մտնել Տիրոջ Խորանը»:

Տիրոջ Տունը մտնելու համար կարևոր են մի քանի բարոյական պայմաններ, որոնց գործադրությունը խիստ անհրաժեշտ է մեր հոգևոր կյանքում:

Ինչպես իր ժամանակին օրինական էր համարվում պտուղների առաջին հունձով ներկայանալը, այնպես էլ կարևոր էր *«Աստծու Խորանի»* տակ բնակվելու համար նկատի ունենալ պանդուխտի, որբի ու այրու վիճակը թեթևացնելու անհրաժեշտությունները: Բավական չէր միայն զբաղվել զոհերով ու նրանց ծիսական կատարումներով, այլ նաև պետք էր կատարել Տիրոջ պատվիրանները ու չմոռանալ ճշմարիտ Աստվածպաշտությունը: *»Նա ով անբասիր է ընթանում, արդար գործ է կատարում, ճշմարտություն խոսում իր սրտում: Ով չի նենգել իր լեզվով և ընկերոջը վատություն չի արել մերձավորներից նախատինք չի ստանում և չարագործն անարգված է նրա աչքում: Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում:… Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ.14:2-5):*

Ուրեմն պարզ է, թե որո՞նք են այն բարոյական օրենքները, որոնց յուրաքանչյուր քրիստոնյայի հնա-

բավորություն պիտի տան մտնելու Աստծու Խորանից ներս:

ա. Օգնություն պանդուխտներին, որբերին ու այրիներին, թեթևացնելու համար նրանց վիճակը.

բ. Խարդախ, նենգ գործեր չկատարել, այլ լինել մաքուր ու արդար, խոսել միմիայն ճշմարտությունը:

գ. Սիրել իրար ամբողջ հոգով ու սրտով:

դ. Ընկերոջը բարություն անել, աչք չտնկել նրա ունեցվածքի վրա;

ե. Երկյուղ ունենալ Տիրոջից և իզուր տեղը երդում չանել.

Զ. Սիրել Բարձրյալն Աստծուն, ինչպես նաև՝ չհայհոյել, չստել, չգողանալ, պատվել, հարգել, սիրել ծնողին:

Ահա այն բարոյական օրենքները, որոնց կատարումով է միայն, որ մենք կարող ենք արժևորել մեզ՝ մտնելու Աստծու Խորանը, ապրելու նրա մեջ ու բարձր ճակատով բարձրանալու այն *«Սուրբ լեռը»*, ուր բնակվում է Ինքը՝ Աստված:

Աստծու Տունը մտնելու պայմանները այսօր էլ անփոփոխ են յուրաքանչյուր հավատացյալի համար, նույն արգելքն ու նույն պատգամն է, որ լսվում է Աստծու Խորանից. «*Այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է» (Ելք 3:3):* Այս պատգամը գեղեցկորեն պատշաճում է բոլոր քրիստոնյաների համար ևս: Բոցակեզ մորենու լույսով վառված լապտերը ձեռքին պետք է մոտենալ Աստծու Տանը, որի շեմին ոտք չդրած քրիստոնյան պարտավոր է մտածելու, թե արդյոք լրացնո՞ւմ է այն բարոյական պայմանները, որոնք հրամայվում են Աստծու կողմից և առանց

որոնց կատարման չի կարելի սպասել մեղքի թողության ու հոգու փրկության:

Կարևոր է իմանալ, թե երկնային մխիթարությունը իր զվարթարար ցողը տեղացնում է միայն այն ժամանակ, երբ մարդը մաքուր է ապրում այս աշխարհում: Հիսուս Հայր Աստծուն ուղղած խոսքերում Իր հետևորդների մասին ասում է, թե՝ *«Նրանք այս աշխարհից չեն, ինչպես ես էլ աշխարհից չեմ: Սրբացրու նրանց քո ճշմարտությամբ, որովհետև քո խոսքը ճշմարտություն է: Ինչպես դու ինձ ուղարկեցիր աշխարհ. ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Եվ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհ. 17:16-19):*

Սրբերի հետ մեր Եկեղեցին օրենք է սահմանել, որով մեղավորները ևս, խոստովանությամբ ու ապաշխարությամբ կարող են մտնել Տիրոջ Տունը և արժանի դառնան երանավետ փրկության:

Ո՛չ մի շենքի գեղեցկություն և ո՛չ էլ արվեստի գլուխ գործոց, լինի դա քանդակված մարմարի կամ կտավի վրա, չի կարող ունենալ այն արդյունքը, որից պիտի ծնվի հոգու փրկությունը:

Քրիստոնյա մարդը դեռ Եկեղեցուց ներս չմտած, պետք է զգա, թե իր վրա կրում է բարոյական պարտավորություններ, որոնք առանց պահած լինելու, նրա շեմից ներս չի կարող կատարել իր հանդուգն քայլերը, որովհետև նա չի կարող օգտվել Եկեղեցու ոչ լուսաշող կանթեղներից և ո՛չ էլ Սուրբ Սեղանի ճոխությունից: Այդ բարոյական ու փրկարար պայմաններին զուգընթաց Եկեղեցու մուտքին պետք է լինի նաև լրջորեն մտածելու անհրաժեշտ

պայմանը, հակառակ դեպքում, նրա մուտքը ան-արդյունք կլինի, որովհետև, ինչպես ասում է նշանավոր գրող Պասկալը. *«Եթե մարդ իր կյանքում իր վրա անդրադառնալու մտածումը չունի՝ նա բոլորովին զուրկ է բարոյական սկզբունքներից, մարդ պետք է ճանաչի իր անձը և այնպես մտնի Տիրոջ Տունը»:*

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, եթե ուզում է խղճի հանգստությամբ, պարզ մտքով բարձրանալ *«Տիրոջ լեռը»* և կամ *«Սրբության տեղը»,* միանգամ ընդմիշտ պետք է հասկանա ու գիտակցի, թե՝ հարկավոր են «սուրբ» ձեռքեր և *«անբիծ» սրտեր, «լինել բարի» և «անսուտ»: «Ո՞վ կբարձրանա Տիրոջ լեռը կամ ո՞վ կկանգնի Նրա սրբավայրում, նա ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի» (Սաղմ. 23:3-4):*

Այն հավատացյալները, որոնք իրապես իրենց մաքուր և արդար կյանքով լրացնում են մեր Տիրոջից ժառանգություն ստացած այս բարոյական պայմանները և յուրացնում փրկության արժանի դառնալու գեղեցիկ սկզբունքները, նրանք են, որ միայն *«արժանավոր ձևով»* ճակատները բարձր մտնում են Եկեղեցի և Տիրոջից օգնություն ու ողորմություն ստանում: « *Հիշիր Տեր, քո գթություններն ու ողորմությունները, որոնք հավիտենական են» (Սաղմ. 24:6):*

Իբրև հայ քրիստոնյաներ, մեր Տիրոջ բարոյական օրենքները պահելով ամեն մեկս կարող ենք դառնալ բարի և լցված սիրով ու հավատքով մեր շրջապատի նկատմամբ: Եվ երբ այդ ճանապարհով ընթանանք, բոլորս միաբերան պիտի կարողանանք մեր Տիրոջը պատասխանել. *«Տեր, մենք պիտի ապրենք քո վրանում եւ պիտի բնակվենք այդ սուրբ լեռան վրա»* մեր արդար ու ազնիվ կյանքով, նվիրումով, երջանկությամբ և ուրախությամբ ու քրիստոնյային վայել պարտականության մեծ գիտակցությամբ: Ամեն:

ԴՈՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆ

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, իր պապերի հավատքի ու դավանության մեջ հաստատուն մնալու, երջանիկ ու բախտավոր լինելու ու հաջողության հասնելու համար, համոզված պետք է լինի նրա ճշմարտության:

Մի օր, երբ Հիսուս Իր աշակերտների հետ գտնվում էր Փիլիպպյան Կեսարիայի կողմերում, նրանց փորձելու համար հարցնում է, թե՝ *«Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ է Մարդու Որդին» (Մատթ. 16:13):* Աշակերտները շփոթվում են իրենց Վարդապետի այս հարցից: Նրանց մտքում դեռևս հստակ չէր այս հասկացողությունը, թե մարդիկ ինչքանո՞վ կարող էին գիտակցել Քրիստոսի ինքնության, Նրան չշփոթելով Հովհաննես Մկրտչի և Եղիա կամ Երեմիա մարգարեների հետ: Հիսուս նաև ուզում էր հասկանալ, թե աշակերտները իրենք ի՞նչ են մտածում Իր ինքնության մասին և նրանց միտքը ստուգելու համար շարունակում է Իր հարցը՝ *«Իսկ դուք իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ ես» (Մատթ. 16:13):*

Ի զարմանս շատերի, Պետրոս Առաքյալի կողմից Նա ստանում է համոզիչ մի պատասխան, որը գալիս էր անշուշտ Աստծու կողմից նրա ներքին համոզման ներշնչումից. *«Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին» (Մատթ. 16:16):* Հիսուս լսելով այս պատասխանը, բացականչում է. *«Երանի է քեզ, Սիմոն, Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. 16:17):*

Մեր Տիրոջ նույն հարցը այսօր ուղղված է մեզ բոլորիս, թե ի՞նչ է մեր կարծիքը Նրա մասին, ո՞վ է Նա: Ինչպես տեսաք, Նրա աշակերտներից Պետրոսը, որը բոլորից համարձակն էր, հասկացել էր իր Վարդապետի ինքնությունը, որը նրան հայտնվել էր երկնքից: Առանց այդ հայտնության, մարդկային մտածելակերպով հնարավոր չէր հասկանալ մեծ Վարդապետի ով լինելը: Նույն մտածումով էլ, այսօր մարդկությունը չի ուզում ճանաչել Փրկչի ինքնությունը ու կասկածանքով է մոտենում մեկնաբանելու, թե ո՞վ է Նա:

«Եթե մեկը կամենում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ հետևից. որովհետև ով կամենա իր անձը փրկել, այն կկորցնի, ով ինձ համար իր անձը կորցնի, կգտնի այն» (Մատթ. 16:24-25):

Ինչպես որ Պետրոս Առաքյալը հասկացավ ու հաստատեց իր մեծ Վարդապետի ով լինելը, այնպես էլ մենք բոլորս, պարտավոր ենք ճանաչել այս իրականությունը, գիտակցական հավատքով ի լուր աշխարհին հայտարարելով, թե Նա է ճշմարիտ Աստծու որդին, որը մեր մեղքերի համար երկնային փառքն ու երանելի կյանքը փոխակերպեց խոնարհության, ընտրեց աշխարհ իջնելու և մարդ լինելու մեծ պարտականությունը՝ Իր անձը զոհաբերելով:

Իբրև մարդ, եթե մոտենանք այս իրողությանը, մեր մտածելակերպով դժվար պիտի լինի թափանցել, հասկանալ և ըմբռնել մեր Փրկչի զոհողության դրդապատճառն ու շարժառիթը: Սակայն հոգեպես, երբ գիտակցում ենք, որ մեղավոր ենք. այն ժամանակ է, որ կարող ենք արժևորել ու չափել Նրա զոհողու-

թյունը և մեր ներսում հրավիրել Հիսուսի ներկայությունը, այնտեղից դուրս հանելով կասկածամտություններն ու սխալ մտածումները:

Ապրում ենք այնպիսի ժամանակներում, ուր թերահավատությունն ու սխալ դատողությունները, լինեն դրանք հոգևոր թե աշխարհիկ, ամբողջությամբ ներգրավել են մարդկային ներաշխարհը, որոնք ավերներ են գործում մեր կյանքում և իրենցից հետո թողնում են դժբախտացնող հետևանքներ: Հայր ու որդի, մայր ու աղջիկ, հարս ու սկեսուր և այլ հարազատներ, բարեկամներ ու ընկերներ դժբախտաբար գտնվում են իրար նկատմամբ վատ տրամադրու-թյան և սխալ հասկացողության մի հոգեվիճակում, որի պատճառով էլ ծայր են առնում զանազան տեսակի թշնամական տրամադրություններ, նաանձ և ատելություն:

Ավետարանում, կարդում ենք աշխարհի վախճանի մասին, թե ինչեր պիտի պատահեն, երբ մարդկային կյանքը իր վերջակետին հասնի. *«Ինչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ՝ մարդ իր անձի փոխարեն ի՞նչ փրկանք պիտի տա. քանի որ մարդու Որդին գալու է իր Հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին, և այն ժամանակ յուրաքանչյուրին կհատուցի ըստ իր գործերի» (Մատթ. 16:26-28):*

Ահա Հիսուսի զգուշացումը մեզ բոլորիս երկու հազար տարիներ առաջ: Այսօր, այս բոլոր իրադարձությունները՝ պատերազմները, դժբախտությունները, երկրաշարժերը, զանազան հիվանդությունները, որոնք պատահում են, արդեն իսկ իմաստավորում են այս խոսքերը և դրանց ճշմարտացիության լավագույն ապացույցն են: Երանի թե մարդկությունը սթափվի այս սխալ հոգեբանության ու հասկասցողության մեջ լինելուց և ընդունի Հիսուս Քրիստոսի հոգու խաղաղությունն ու երջանկությունը: Ամեն:

ԾՆՈՂԻՆ ՍԻՐԵԼԸ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ԶԱՎԱԿԻ ՀԱՄԱՐ:

«ՊԱՏՈՒԵԱ ԶՀԱՅՐ ՔՈ ԵՒ ԶՄԱՅՐ ՔՈ» (ԵԼՔ 20:12)
«ՊԱՏՎԻՐ ՔՈ ՀՈՐՆ ՈՒ ՔՈ ՄՈՐԸ»

Ի՞նչ է իր մեջ բովանդակում այս պատվիրանը և ի՞նչ կարևոր մի պատգամ կարող ենք քաղել սրանից:

Աստծու կողմից հատուկ մի պատվեր չկա ուղղված ծնողներին, որպեսզի սիրեն իրենց զավակներին, պարզ է, որ ամեն ծնող էլ սիրում է իր զավակին և փոխադարձաբար, զավակներն էլ պետք է սիրեն իրենց ծնողներին, բայց Աստված լավ իմանալով որդիների անհնազանդության և անհավատարմության աստիճանը, այս պատվիրանն է տվել նրանց իբրև պարտականություն, պատվելու, հարգելու ու սիրելու իրենց ծնողներին, երբ նրանք կենդանի են. *«Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք 20:12):*

Պողոս Առաքյալը Եփեսոսում գտնվող բոլոր հոգևոր զավակներին է ուղղում իր խոսքը. *«Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետև դա է ճիշտը: Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա» (Եփես. 6:1-4):*

Երկրի վրա մեր ծնողների խոսքը Աստվածային զորություն ունի:

Ընտանեկան տան շինութեան երկու հիմնաքարերը կազմում են հայրն ու մայրը: Ընտանիքը երջանիկ է այն դեպքում, երբ այնտեղ կա սեր, ներո-

ղամտության ոգի և համերաշխություն, որը անկասկած կբերի ընտանեկան խաղաղություն։

Մեր ծնողները Աստծու պատկերներն են։ Երբ նրանց ամեն օր տեսնում ենք, լսում ու խոսում և մանավանդ Աստծուց նրանց սիրելու ու պատվելու հրաման ունենք, եթե չսիրենք նրանց, Աստծուն, Որին երբեք չենք տեսել ու Նրա ձայնը չենք լսել, ինչպե՞ս կարող ենք սիրել։ Այդպիսի զավակները, երբ ասում են սիրում ու հավատում ենք Աստծուն, երբեք էլ մի հավատացեք, նրանք սուտ են խոսում։ Մեկ է՝ մի օր Աստված Իր պատիժները պիտի տա այսպիսի զավակներին, ուր էլ որ նրանք գտնվելիս լինեն։ Փախուստ չկա։ Սողոմոն իմաստունը ասում է. *«Անհնազանդ որդին գնում է դեպի կորուստ»։*

Պիտի գա մի ժամանակ, երբ մեր ծնողների հիվանդության և ծերության վիճակը անտանելի պիտի լինի, այդ պարագայում պիտի հիշենք, թե նրանք ինչ դժվարությամբ և ինչ զոհողությունների գնով են մեծացրել մեզ։ Երբ մի ուրիշից փոքրիկ բարիք ենք տեսնում, շնորհակալ սրտով ուզում ենք փոխհատուցել, ուրեմն ինչքան շատ բանով պիտի փոխադարձենք նրանց այն բարիքների համար, որոնք ընդունել ենք մեր ծնողներից։

Այս պատվիրանը ճիշտ կատարած կլինենք, եթե Աստծուց հետո սիրենք մեր ծնողներին և նրանց նկատմամբ որդիական սեր ու հարգանք ունենանք և իրենց ծերության ժամանակ պետք եղած օգնությունը հասցնենք։ Միշտ պիտի հիշենք այն խոր սերը, որով նրանք մասնակից են եղել թե մեր ուրախություններին և թե մեր ցավերին, քանի քանի անգամներ մեր հանգստության համար նրանք անհանգիստ

են եղել ու մեր երջանկության համար իրենց երի-տասարդ ծաղիկ տարիներն են զոհել։ Նույնիսկ զարմանալ կարելի է, որ զավակների ապերախ-տությունն ու անհնազանդությունը անտեսելով, նրանք չեն պակասեցնում իրենց սերը նրանց նկատմամբ մինչև իրենց կյանքի վերջին րոպեն։

Պատահում է և հակառակը, եթե մենք իբրև զավակներ երախտամոռ լինենք մեր ծնողների նկատմամբ, արժանի եղած պատիվները չտանք, ինչպես պատվիրել է մեզ Աստված, եթե արհամար-հենք նրանց, օրհնության տեղ անեծք պիտի ստա-նանք ու վայ այդ զավակներին, որովհետև *«Մոր անեծքը որդիների տունը հիմքից խախտում է» (Սիրաք 3:11):*

Մեր եռամեծ Վարդապետներից Սբ. Գրիգոր Տաթևացին ասում է.

Բազում պատճառներով ծնողները արժանի են պատվի:

«Նախ, որ Աստծու պատկերն են և խորհր-դավոր կերպով իբրև ծնող արժանի են Աստծուն տրվելիք պատվին: Երկրորդ՝ գործիք են Աստծու պատկերը մեր վրա ձևավորելու համար, որովհետև առանց ծնողների Աստված ոչ հոգի է ստեղծում և ոչ էլ մարդ կազմավորում որովայնի մեջ»:

Հետաքրքիրն այն է, որ ոչ միայն Աստված. գրքերը և օրենքներն են խրատում սիրել ծնողներին, այլև անասունները և թռչունները բնությամբ ծնո-ղասիրություն ունեն: Վերցնենք օրինակ արագիլ-ներին: Ասում են, թե երբ նրանց ծնողները ծերանում են, մտնում են նրանց թևի տակ, ման են տալիս ու կերակրում, իսկ երբ չեն կարողանում այլևս քայլել,

նստեցնում են բնի մեջ, կերակրում այնպես, ինչպես նրանք էին սնել իրենց ձագ եղած ժամանակ։ Արդ, ինչքան ամոթ պիտի լինի մի զավակի համար, որ թռչուններից ավելի վատ գտնվի և մոռանա իր ծնողների բարությունն ու զոհողությունը։

Իբրև եկեղեցական շատ անգամներ ներկա եմ եղել հայ ընտանիքների խնջույքներին ու լսել բաժակաճառերի միջոցով հրաշալի խոսքեր ծնողների հասցեին։ Շատ գնահատելի ու խրախուսելի է, որ այդ պահին երիտասարդները հասկանում են, թե ի՞նչ մեծ արժեք ունեն նրանք։ Իսկ հետո՞… հաջորդ օր՞ը… մյուս օրերի՞ն… ի՞նչ է տեղի ունենում։ Գիշերային ուշացումներ, խմիչքի ու ծխախոտի չարաշահումներ, ընտանեկան բուռն վեճեր, որոնք երբեմն վերջանում են ողբերգությամբ։ Երևի մեր երիտասարդները ծնողներին ցավ ու նեղություն պատճառելը համարում են սիրել ու հարգել։ Ահա այս պատճառով է, որ Աստված ոչ թե ծնողներին է պատվիրանը տալիս, այլ՝ զավակներին, քաջ գիտենալով նրանց ապերախտությունը և երախտամոռ լինելը։ Որ տարիքում էլ լինենք, բնական է և երբեք էլ զարմանալի չէ, մեր ծնողների զավակն ենք, նույնիսկ եթե մենք էլ ծնող ենք։ Նրանց նկատմամբ սերը սոսկ պարտականություն չպիտի լինի, այլ՝ հոգու արտահայտություն։

Աստծու օրենքի համաձայն ոչ միայն մենք մեր ծնողներին պիտի սիրենք և մեր երախտագիտությունը հայտնենք, այլև մեր հոգևոր ծնողներին, մեր ուսուցիչներին, եկեղեցական հայրերին, մեր բարերարներին ու առաջնորդներին, որովհետև ծնողները մեր մարմնավոր կեանքն են պահպանում, իսկ

հոգևոր ծնողները մեր հոգու սնունդն են պատրաստում. *«Հոգին է կենդանարար, մարմինը ոչ մի բան չի կարող անել։ Այս խոսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է և կյանք» (Հովհ. 6:64)։*

Վշտի ու ցավի Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի այս սքանչելի խոսքը ուղղված է ծնողներին.

«Դուք ձեր զավակներին օրհնեցեք այնպես, որ նրանց հայրենատուր սուրբ կրոնը, հավատը, սուրբ ավանդությունները՝ անարատ ու անեղծ պահեն. Հայաստանայց Եկեղեցին սիրեն, Թադեոսի, Բարդուղիմեոսի և Լուսավորիչ Հոր հոտից ու փարախից չբաժանվեն։ Օրհնեցեք, որ նրանք Ավետարանը գրկեն և սովորեն նրա սիրո դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն ու մարդասեր լինեն»։

Երիտասարդներ սթափվեցեք, քանի դեռ ուշ չէ. սիրեք ձեր ամենաթանկագին զանձերին ու ստացեք նրանց օրհնությունը, որպեսզի երջանիկ և ուրախ կյանք ունենաք։

Իմ պատգամը վերջացնում եմ նորից մեջբերելով Խրիմյան Հայրիկի խոսքերը.

«Տուն և ընտանիք մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որո նահապետական աթոռին վերա կնստին ծնողք, հայր իբրև թագավոր եւ մայրն իբրև թագուհի և կկառավարեն հպատակ ընտանիքը։ Սույն ընտանեկան պալատին և թագավորության մեջ ոչ ոստիկան կա, ոչ սուր, ոչ բռնություն, ոչ գավազան, այլ ամենուն տեղ հայրական սեր և մայրական գորովն է, դաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է»։ Ամեն։

ՄԵԶՆԻՑ Ո՞Վ Է ՄԵԾԸ

«Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»
(Մատթ. 18:1)

Հիսուս զգում է, որ առաքյալների միջև վիճաբանություն է տեղի ունենում և ուզում է իմանալ, թե՛ ինչո՞ւ, ինչի՞ համար հարցնում է նրանց. *«Ճանապարհին իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում» (Մարկոս 9:32):* Առաքյալները լռում են, անհարմար են զգում պատասխանել, քանի որ իրենցից մեծին որոշելը նույնքան անիմաստ էր, որքան որևէ մի մարդու ժառանգությունը դեռ չմեռած բաժանելը: Հիսուս գիտեր վեճի պատճառը, բայց ցանկանում էր, որ նրանք արտահայտվեն, ուստի կրկնում է Իր հարցը և առաքյալները տեսնելով, որ անհնար է խուսափելը՝ խոստովանվում են, թե *«Ճանապարհին իրար հետ վիճում էինք, թե ո՞վ է մեծը» (Մարկոս 9:33):* Հիսուս նրանց ասում է. *«Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկոս 9:34):*

Մեր Տերը ոչ միայն Մեծ եղավ, այլ նաև մեծության գաղափարը նոր իմաստով լցրեց: Մինչև իր ժամանակը մեծության չափանիշը ուժը և հարստությունն էր: Մեծությունը այն աստիճան նյութականացված էր, որ հին հայերենում նշանակում էր հարստություն: Աշխարհի մեծերը պաշտոնների վրա գտնվողներն ու իշխանավորներն են, որոնք իրենց ագահ, անազնիվ ու անարդար կյանքով վնասում են մարդկանց: Սա մեծության այլասերված ըմբռնումն էր, որը Հիսուս հիմնովին փոխեց և մի մանուկ վերցնելով ասաց. *«Ահա իմ սիրած մեծությունը, անմեղ և միամիտ պարզություն, թե որ դուք էլ փոքրիկ երե-*

խայի նման անմեղ ու միամիտ լինեք, Երկնքի Արքայությունում կլինեք մեծ… Հետևապես իզուր եք փնտրում նրան, ով իմ փոխարեն ավագ պիտի լինի. ես ավագ չեմ կարգելու. ամենից փոքրն էլ մեծ է իմ աչքում, եթե նա մեծ է առաքինությամբ» (Մատթ.18:4-6): Ինչպես բոլոր ժամանակներում, այսօր էլ մարդկանց մեջ առաջինը և ամենամեծը դառնալու ձգտումը կա: Այս զգացումը բխում է եսասիրությունից: Հիսուս Ինքը լավագույն ձևով է տալիս այս բացատրությունը. *«Մեծարանք ընդունելու չեկա, այլ՝ ծառայելու»:… «Ես ձեր մեջ մի սպասավորի պես եմ» (Ղուկ. 22:27*) ու այս խոսքերը հաստատեց Իր կենդանի օրինակով, երբ վերջին ընթրիքի ժամանակ ծնկի եկավ և լվաց Իր աշակերտների փոշոտ ոտքերը:

Աստծու հրաշքն է, որ աշխարհում կան անթիվ նվիրյալ, արդար, ազնիվ ու հավատքով մարդիկ, որոնք իրենց *«ես»-ը* մոռացած, *«մենք»-ի* գիտակցությամբ շարունակում են կատարել իրենց բարի գործերը՝ միմիայն Աստծու փառքի համար:

«Ժամանակին մի կրիա խնդրում է արծվին, որ թևի վրա վերցնի իրեն ու միասին թռչեն կապույտ երկնքում:

Արծիվը կատարում է նրա խնդրանքը: Բարձունքների զովության մեջ թարմացած ու հարբած կրիան, խնդրում է արծվից, որպեսզի իրեն ազատ թողնի, որ ինքն էլ թռչի: Արծիվը չկարողանալով դիմադրել կրիայի աղաչանքներին, բաց է թողնում նրան ու կրիան անհասանելի բարձունքներից ընկնելով ջարդուփշուր է լինում ժայռերի վրա»:

Առակն ասում է, թե երբեք չպետք է դուրս գանք մեր բնականոն վիճակից ու փորձենք անել այն ինչը մեր ուժերից վեր է: Այդպիսիների համար կրիայի օրինակը թող լավ դաս լինի:

Քրիստոնյա լինել նշանակում է խոնարհ ու համեստ լինել, սակայն իրական խոնարհությունը՝ ինքնաճանաչումն է:

Եթե մարդը ինքնիրեն քննի և ուշադրությամբ նայի իր շրջապատին, կհասկանա, որ շատ դեպքերում նույնիսկ անզոր է դիմադրել կենդանական աշխարհի կամ բնության անակնկալներին: Օրինակ ո՞վ կարող է ազատվել կայծակի հարվածից, անձրևների ողողումներից և կրակի տաքությունից:

«Ինքզինք ճանչնալէ յետոյ մարդուն կը մնայ անկեղծօրէն ըլլալ այն, ինչ որ է ընկերության մէջ«,- ասել է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Արք. Գալուստյանը,- «Իշխանը իշխան պիտի ըլլայ, ոչ թե իշխելու, հարստահարելու և գերելու համար, այլ կառավարելու, տկարը պաշտպանելու համար, այսինքն բառին ազնուագոյն առումով՝ ծառայելու համար:… Խորքին մէջ խոնարհ ըլլալ այս կը նշանակէ» (Ավագ Շաբաթ, 1974):

Ճշմարիտ քրիստոնյա լինելու և մնալու համար անհրաժեշտ է, որ բարի գործեր կատարենք, օգնենք կարոտյալներին ու խնամենք հիվանդներին: Որով, չսպասենք, որ նրանք խնդրեն մեզ կամ մեր դուռը թակեն, այլ մենք կամավոր կատարենք մեր խղճի պարտքը և Աստված անպայման պիտի հատուցի մեզ ավելիով: Ամեն:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ Է ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈՒ ԴԻՄԱՑ ՄԱՐԴՈՒ ԽՂՃԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Է» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց):

Ապաշխարությունը յոթը խորհուրդներից մեկն է *(Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն, Պսակ, Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում, Կարգ Ձեռնադրության):* Կազմված է *«ապա» և «աշխարել»* բառերից« որ նշանակում է *զղջալ, տրտմել, ցավել, զղջալ հանցանքի, սխալի կամ մեղքի համար*:

Ապաշխարությունը խորհուրդ է կոչվում, քանի որ մարդկանց մեղքերից սրբվելը ոչ ոք չի տեսնում, բայց հավատում ենք, որ ապաշխարելով ու զղջալով նրանց մեղքերին թողություն է շնորհվում; Հովհաննես Մկրտիչը, որ Հիսուսին մկրտեց Հորդանան գետում, քարոզում էր. *«Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»… Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները» նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով…» (Մատթ. 3:2,11):*

Ապաշխարող անհատի առաջին մտահոգությունը իր անձի փրկությունն է:

Մի նշանավոր քարոզիչ հետևյալ միտքն է արտահայտում. *«Եթե Աստված ինձ երևար և ասեր. ցանկանո՞ւմ ես փոխեմ մարդկային բնությունդ և դարձնեմ քեզ հրեշտակի նման անմեղ»,* կպատասխանեի. *«Ոչ, Տեր, թող ինձ մարդկային հատկու-*

թյուններով, միայն թե մեջս չմեռնի սայթաքումներից ու անկումներից գիտակցության գալու զգացումը, բարձրանալու ձգտումն ու տենչը»:

Սարգիս Շնորհալին ասում է, *«…Ապաշխարությունը ընկած հոգիները բարձրացնում է և մոտեցնում Աստծուն. մեղքերով կեղտոտված մարմինը լվանում է և ձյունից ավելի սպիտակեցնում: Ապաշխարությունը մեղքերից մեռած հոգին կենդանացնում է և նրան պարգևում հավիտենական անմահություն… խոստովանությունը և ապաշխարությունը մեզ մոտեցնում են Սուրբ սեղանին և հոգևոր հացին հաղորդակից դարձնելով կատարյալ սրբություն են մեզ պարգևում»:*

Հարց կարող է ծագել, թե՝ *«Մեղանչողը ի՞նչ պիտի անի ապաշխարելու համար».*

ա. Սրտանց զղջա իր գործած մեղքերի համար և վճռի այլևս չմեղանչել.

բ. Ջերմեռանդությամբ և երկյուղածությամբ աղոթի, խոստովանի Աստծու առջև իր մեղքերը և թողություն խնդրի, որովհետև Աստծու գթությունն ու ներողամտությունը մեղավորին առիթ են ընձեռում ապաշխարելու և արդարանալու.

«Եթե արհամարհում ես նրա բարության առատությունը և ներողամտությունն ու համբերությունը, չգիտե՞ս, որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում: Եվ քո խստասրտությամբ ու անզիղջ սրտով քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա և Աստծու արդար դատաստանի հայտնության օրվա համար. Աստծու որ հատուցում է յուրաքանչյուրին ըստ իր գործերի»,-

ասում է Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում (Հռոմ. 2:4-6):

գ. Միշտ հիշի, որ ինքը փրկվել է Հիսուս Քրիստոսի Արյունով և պարտավոր է հետևել Նրա անմեղ կյանքին:

Աղոթքը չմեղանչելու ամենագործնական միջոցն է: Խոստովանությունն ամենից առաջ կատարվում է մարդու խղճի մեջ՝ դառնալով ապաշխարության հիմքը, այլ խոսքով հնարավոր չի ապաշխարել առանց խոստավանվելու:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Արքեպս. Հովսեփյանցը հրաշալի կերպով է բացատրում ապաշխարության խորհրդի իմաստը.

«Ապաշխարությունը հոգևոր հաշվետվություն է մեր խղճի և Աստծու առաջ: Հաշվապահության կանոններից մեկն է՝ տարեվերջին մատյանները քննության և ստուգության ենթարկել. այդպիսի ստուգության պիտի ենթարկենք այս ապաշխարության օրերուում ոչ միայն մեր արտաքին գործողությունները, այլև նրանց ներքին, ծածուկ շարժառիթներն ու պատճառները … Զորեղ է թշնամին և ներքին, ուստի և նորա դեմ պիտի զինենք և մեր բարոյական բոլոր ուժերը…»:

«Ապաշխարությունը հոգևոր բժշկության առաջին պայմանն է:… Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղավոր միտքը, հոգին նորոգել ներքուստ: *«Ապաշխարության նպատակն է կյանքի ճահիճներից հանել մարդկանց և նոր արարած շինել»:*

«Հին ճգնավորներն ու անապատականները փախչում էին աշխարհից՝ նորա ապականու-

թյուններից և մոլություններից ազատ լինելու համար. Ծեծում էին իրենց մարմինը. քաղցած և ծարավ էին մնում՝ մարմինը ճնշելու, և դորա հետ նորա մեղավոր հակումները խեղդելու նպատակով, բայց՝ իզուր: Պատերազմը ներքին է: Եվ միայն ներքին զենքերով կարող ենք մաքառել հակառակորդի դեմ: Այդ ներքին զենքը Ապաշխարությունն է: Զղջման և դարձի զգացումը…»:

«Անառակ որդին իր բոլոր ունեցածները վատնելուց հետո միայն անդրադարձավ իր գործած մեծ մեղքին և քաջությունը ունեցավ վերադառնալու իր երկիրն ու սրտանց ներում խնդրելու իր հորից: Նա ապաշխարությամբ տիրացավ իր նախկին փառքին, որովհետև կորած էր և գտնվեց, մեռած էր և կենդանացավ: Ապաշխարել նշանակում է անդրադառնալ գործած սխալի և կամ մեղքի, անկեղծությամբ զղջալ, տառապել, ողբալ, խոստովանվել. հաղորդվել Սբ. Մարմնով ու Արյունով և որոշել մի անգամ էլ չկրկնել նույն ու նմանօրինակ մեղքեր» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք» «Ապաշխարություն»)

Երբ ապաշխարում ենք և փորձում սրբվել մեր հին մեղքերից, պիտի աշխատենք այլևս մեղքեր չգործել և մանավանդ հինը չկրկնել: Հիշենք Ավետարանից Շնացող կնոջ օրինակը. *«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. 8:7):* Երբ նրանք այս խոսքերը լսեցին, մեկ առ մեկ սկսեցին դուրս գալ, մնացին միայն Հիսուսն ու կինը: Տերը նրան ասաց. *«Ո՛վ կին, ո՞ւր են. Քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Եվ նա ասաց. «Ո՛չ, Տեր»:* Հիսուս նայեց

նրան ու ասաց. *«Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա, այսուհետև մի մեղանչիր» (Հովհ. 8:10-11):*

Աստված մարդու մեջ ներարկեց Իր խիղճը, որն Աստվածային է: Կյանքում շարժվենք Աստծու տված այս կարևոր շնորհքով մեր նմանների՝ մարդկանց նկատմամբ ու հանգիստ կլինենք և հոգեպես և մտքով: Ամեն:

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանաշնորհ Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ· Տ· Հայկազուն Արքեպս· Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր՝ անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդա-

պետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 4

Շնորհակալության խոսք 7

Ամուր ժայռը՝ Հայաստանյայց
Առաքելական Եկեղեցին 8

Մեծ խնջույքը 14

Շնացող կինը 18

Սիրել մեր թշնամիներին 22

Հիսուսի քաջալերիչ ձայնը 26

Գաղտնիք մի ունեցեք 30

Չենթարկվել չարին 36

Հեռացրու չարիքը 40

Հավատք, Հույս, Սեր 44

Մանուկների անմեղությունը 49

Խնդրանք Աստծուն 54

Քրիստոսին միանալ, նշանակում է
Նրան ունենալ մեր մեջ 59

Հիսուս կյանք է 65

Ներելու ոգին 69

Միշտ աղոթեցեք 73

Հինգ հազարի կերակրումը 78

Շնորհքների պարգևում 82

Ո՞ւր է ձեր հավատքը 89

Անպտուղ թզենին 96

Անդամալույծի բժշկությունը 99

Աստծու արքայությունը 105

Աստծու ներկայությունը 110

Թերահավատություն 114

Պահպանիր թշնամուց 117

Լսենք Տիրոջ ձայնը 122

Տիրոջ Խորանը 125

Դու ես Քրիստոսը՝
Կենդանի Աստծու Որդին 129

Ծնողին սիրելը՝ մեծ պատիվ
է զավակի համար 132

Մեզնից ո՞վ է մեծը 137

Ապաշխարություն 140

Հեղինակի կենսագրությունը 145

Բովանդակություն 147